Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ուսումնական ձեռնարկ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009

ՀՏԴ 93/99 : 329 (07)
ԳՄԴ 63.3+66.6 ց73
Ա 161

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ պատմության ֆակուլտետը*

Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ Ա. Դարբինյան

Աբրահամյան Հենրիկ
Ա 161 Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները: Ուս. ձեռնարկ.- Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 112 էջ:

Աշխատանքում լուսաբանվում են ժողովրդավարության և քաղաքական կուսակցությունների կապը հասարակության զարգացման գործում: Ցույց են տրված ժողովրդավարության զարգացման փուլերը, որոնք ուղեկցել են մարդկությանը նրա պատմության տարբեր աստիճաններում՝ սկսած Հին Աշխարհի ժողովրդավարական կառավարման համակարգերից-մինչև ներկա ժամանակաշրջանը:

Ուսումնական ձեռնարկում հատկապես կարևորվում է այն հարցը, որ ժողովրդավարության ձևավորման և զարգացման գործում անչափ կարևոր դերակատարություն ունեն քաղաքական կուսակցությունները:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 63.3+66.6 ց73

ISBN 978-5-8084-1153-1

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.
© Հ. Աբրահամյան, 2009 թ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որքան էլ որ ժողովրդավարության մասին հսկայածավալ գրականություն է ստեղծվել և այսօր էլ նույնպիսի հաջողությամբ շարունակվում է ստեղծվել, այն ավելի մեծ թափ ստացավ ԽՍՀՄ-ի և սոցիալիստական համակարգի փլուզումից հետո հատկապես այն երկրներում, որոնք սկսեցին անցում կատարել նախկին ամբողջատիրական, ավտորիտար հասարակարգից՝ դեպի ժողովրդավարություն: Այդ նոր գործընթացը բնորոշ է նաև մեր Հանրապետությանը: 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած հռչակագիրը այն կարևոր փաստաթուղթն է, որում բազմաթիվ այլ հարցադրումների շարքում կարևորվում է նաև ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը՝ հատկապես ընդգծելով, որ Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է: Միաժամանակ անկախության գործընթացը սկսած մեր հանրապետությունը ի լուր աշխարհի ազդարարում էր, որ իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, բազմակուսակցության ձևավորումը, կուսակցությունների իրավահավասարության սկզբունքի իրականացումը և այլն:

Ժողովրդավարությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններում հատկապես կարևորվում է այն հարցը, որ ի տարբերություն արևմտյան, եվրոպական դասական, վաղուց արդեն ժողովրդավարական կարգերով ապրող երկրների՝ ԱՊՀ-ի այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետությունում, անցումը ժողովրդավարության պահանջում է վիթխարի ջանքեր, հսկայական հետևողական աշխատանք, քանզի ժողովրդավարության հաստատումը ենթադրում է փոխկապակցված բազմաթիվ խնդիրների լուծում, տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական, նոր մտածողության, նոր հոգեբանության ձևավորում, որոշակի արժեքներից հրաժարում և այլ գործընթացներ, որոնք պահանջում և ենթադրում են որոշակի ժամանակ: Իրավացիորեն քննադատական դիրքերից են վերլուծվում մեր Հանրապետությունում ժողովրդա-

վարության ուղղությամբ կատարված քայլերը, զարգացումները, որն էլ հուշում է, որ միայն հետևողական աշխատանքի դեպքում է հնարավոր ժողովրդավարությունը դարձնել կյանքի նորմ, ապրելակերպ, առօրյա իրողություն:

Իսկ իրողությունն այն է, որ դեմոկրատիա՝ ժողովրդավարություն, ժողովրդի իշխանություն հասկացությունը ավելի քան երկուս ու կես հազարամյակի պատմություն ունի: Աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները տարբեր ժամանակներում անցել են նախնադարյան հասարակարգի և «բարբարոսական» դեմոկրատիայի միջով, իսկ հին հույների և հռոմեական հանրապետությունները ստեղծել են Հին Աշխարհին բնորոշ, այդ ժամանակների ընկալմամբ բավական հասուն, հնագույն անտիկ ժողովրդաիշխանություն:

Սակայն ներքուստ թույլ, անտիկ ժողովրդաիշխանությունը ժամանակի ընթացքում կուլ է գնացել ավտորիտար հասարակական ուժերի կողմից: Հետագայում ֆեոդալական, ավատատիրական կարգերը մերժեցին ժողովրդավարությունը:

Ընդ որում, ֆեոդալիզմը ոչ միայն մերժեց դեմոկրատիան, այլև Եվրոպայի երկրների մեծ մասում ստեղծեց հզոր հակադեմոկրատական համակարգ, որի հաղթահարման համար եվրոպական հասարակություններից պահանջվեցին հարյուրավոր տարիների ջանքեր: Եվ այդ իմաստով ժողովրդավարական գաղափարներն անգամ նման պայմաններում շարունակում էին մնալ մարդկանց գիտակցության, մտածողության մեջ որպես կարևոր, համամարդկային արժեքներ, որոնց հաստատման համար պայքարը, ձգտումը երբեք չի լքել առաջավոր և նաև շարքային մարդկանց, ովքեր միշտ էլ ձգտել, պայքարել են ժողովրդավարության հաստատման համար: Լայն հակաֆեոդալական շարժումները Եվրոպայում տարածվեցին 14-15-րդ դարերում, սակայն վճռական հակաֆեոդալական ճեղքում կատարվեց 16-18-րդ դարերի ընթացքում: Խոսքը վերաբերում է 16-րդ դարում Նիդեռլանդական, 17-րդ դարում Անգլիական և, առավել ևս, Ֆրանսիական բուրժուական (1789-1794 թթ.) մեծ հեղափոխություններին: Ժողովրդավարության կառուցումը, դրա զարգացումը փոփոխվող հասարակարգի պայմաններում տեղի են ունենում բավական դանդաղ և ոչ հավասարաչափ:

Դեմոկրատական վերափոխումների գործընթացում մեծ ազդեցություն է ունեցել 16-րդ դարի հոլանդական հեղափոխությունը: Սակայն հետհեղափոխական Հոլանդիայում դեմոկրատացումը ստացավ վերնաշենքային, ավելի ճիշտ՝ մակերեսային բնույթ: Եվ այնքան ժամանակ, քանի դեռ հիմնական առաջատար եվրոպական երկրները, դեմոկրատական բարեփոխումների տեսանկյունից, շարունակում էին մնալ անփոփոխ, դեմոկրատիան, իր համապարփակ չափանիշներով, մայրցամաքում մնում էր մարդկության զարգացման համար դեռևս նորելուկ, էկզոտիկ, բացառիկ մի երևույթ՝ դուրս համերկրային կանոններից:

Այնուամենայնիվ, 17-18-րդ դարերում մի շարք երկրներում հասարակական ուժերը գտնվեցին այնքան հասուն, ուժեղ, որ կարողացան կապիտալիզմի զարգացման հետևանքով դառնալ հզոր հակաֆեոդալական ուժեր և կատարել պատմական ճեղքում դեպի քաղաքական դեմոկրատիա, թեկուզև սկզբում այն ուներ վերնաշենքային, ոչ այնքան խոր բնույթ:

Աստիճանաբար, ժամանակի ընթացքում օրենքի գերակայությունը, պառլամենտական կառավարումը դարձան այն կարևոր ձեռքբերումները, որոնք դեմոկրատիան դարձնում են կայուն և հաստատուն:

Աբրահամ Լինքոլնի խոսքով ասած՝ ժողովրդավարությունը «ժողովրդի, ժողովրդի կողմից, ժողովրդի համար» գոյություն ունեցող կառավարությունն է:

Ժողովրդավարությունը ազատության մարմնավորումն է որոշակի հաստատությունների միջոցով: Սահմանադրական կառավարման առկայությունը, մարդու իրավունքների կիրառումն ու հաշվի առնումը, օրենքի առջև հավասարության հիմունքների իրականացումը բնորոշում են ժողովրդավորությունը:

Ժողովրդավարությունն անչափ մեծ, համապարփակ հասկացություն է: Այն ընդգրկում է հասարակական, քաղաքական, հոգևոր, տնտեսական կյանքի բոլոր կողմերը, ունի իր էվոլուցիան՝ սկիզբը, վերելքն ու վայրէջքը, հաջողություններն ու անհաջողությունները և, որ ամենակարևորն է, իր կողմնակիցները, ժողովրդավարության համար միլիոնավոր մարդկանց նվիրումով պայքարը, ժողովրդավարության հասնելու, մշտական դարձնելու ձգտումը:

Ավելորդ չէ նորից հիշեցնել, որ, երբ խոսվում է ժողովրդավարության մասին, հաշվի է առնվում, որ դա տնտեսական, քաղաքական, իրավական պետության կառուցվածքի այնպիսի ձև է, որտեղ ժողովուրդը հանդիսանում է իշխանության աղբյուրը: Մյուս կողմից, որքան հա-

սարակության բոլոր կողմերը, նրա կառուցվածքի բոլոր մեխանիզմները, այն է՝ քաղաքական, իրավական, տնտեսական, միմյանց հետ ավելի փոխկապակցված են հանդես գալիս, այնքան ավելի արդյունավետ է դրսևորվում ժողովրդավարությունը: Հատկապես փոխկապակցված են հանդես գալիս տնտեսական և քաղաքական կողմերը՝ մեխանիզմները:

Տնտեսության մեջ ժողովրդավարությունը դրսևորվում է սեփականության, տնտեսվարման տարբեր ձևերով, շուկայական հարաբերությունների և այլ ձևերով: Այդ իմաստով անկասկած է, որ տնտեսական վերափոխումները կարող են ցանկալի արդյունք տալ միայն ժողովրդավարության զարգացման պայմաններում:

Շատ կարևոր է նաև հենց սկզբից ընդգծել, որ ժողովրդավարության կարևոր չափանիշներից են քաղաքացիների ազատությունը և իրավահավասարությունը: Ժողովրդավարությունը նաև ապահովում, կարգավորում է հասարակական կյանքը՝ իր բոլոր կողմերով, այն է՝ տնտեսական, քաղաքական, իրավական, սոցիալական և այլն:

Դժվար չէ համոզվել, որ ժողովրդավարությունը հասարակության քաղաքական կյանքի կազմակերպման և հասարակության բնականոն գործունեությունը կարգավորող թերևս ամենահարմար ձևն է, եղանակը, և երևի սխալված չենք լինի, եթե ասենք, որ մինչ այժմ մարդկությունն ավելի հարմար կառավարման ձև չի հայտնաբերել: Այն նպատակ ունի ապահովելու հասարակության տնտեսական, քաղաքական կայունությունը:

ԱՄՆ-ի «Ազատության տուն» հետազոտական հաստատության տվյալներով 1990-ական թթ. սկզբներին աշխարհի 165 ինքնիշխան պետություններից 65-ը լիովին ազատ են, իսկ 50-ը՝ կիսով չափ: Ինչպես նշվում է զեկուցագրում. «Առաջին անգամ ազատ երկրների և ազատ հասարակությունների բնակչության թիվը գերազանցում է անազատ երկրների և դրանց բնակչության թվին»:

Անկասկած է, որ ժողովրդավարության հաստատման, ձևավորման գործում ամենից ավելի ներդրում և վաստակ ունեն արևմտաեվրոպական ժողովուրդները:

Ժողովրդավարական հասարակարգում ոչ թե մարդը գոյություն ունի օրենքի համար, այլ հակառակը՝ օրենքը գոյություն ունի մարդու համար, քանի որ ժողովրդավարության նպատակը ինքը՝ մարդն է:

Ժողովրդավարության սկզբունքներն են.



1. ժողովրդի ինքնիշխանություն
2. կառավարություն՝ կառավարվողների համաձայնության հիման վրա
3. մեծամասնության իշխանություն
4. փոքրամասնության իրավունքներ
5. մարդու հիմնական իրավունքների երաշխավորում
6. ազատ և արդար ընտրություններ
7. հավասարություն օրենքի առջև կամ օրենքի գերակայություն
8. ազատ և արդար դատարան
9. իշխանության թևերի տարանջատում և փոխադարձ վերահսկողություն
10. սոցիալական, տնտեսական և քաղաքական բազմակարծություն
11. հանդուրժողականության, գործնականության, համագործակցության և համաձայնության արժեքներ:

Կարևոր արժեքներ են նաև քաղաքական ընդդիմության առկայությունը, հասարակական կարծիքի հաշվի առնումը, հրապարակայնությունը, սոցիալական արդարությունը, կազմակերպություններ, միություններ, ասոցիացիաներ, միավորումներ ստեղծելու և գործելու ազատությունը:

Դժվար չէ տեսնել, որ ժողովրդավարության սկզբունքների, նրա գնահատման բազմաթիվ չափանիշների մեջ գլխավոր, առաջնային դերը պատկանում է ազատությունների սկզբունքին, քանի որ այն անվիճելիորեն պատկանում է համամարդկային քաղաքակրթական, նվաճումների թվին, ուստի ժողովրդավարությունն ու ազատությունն անբաժանելի են, և չի կարող լինել ժողովրդավարություն առանց ազատության և ազատություն՝ առանց ժողովրդավարության:

Ժողովրդավարությունն ունի խոր ակունքներ և արմատներ:

## Ժողովրդավարության անտիկ ու դասական տեսությունները և դրանց էվոլուցիան մարդկության պատմության ընթացքում

Ժողովրդավարության անտիկ տեսության հիմնական գաղափարները ձևակերպել են Հին Աշխարհի ճանաչված մեծ մտածողներ Պլատոնը և Արիստոտելը: Ըստ Պլատոնի՝ դեմոկրատիան դիտվում է որպես կառավարման հատուկ ձև, որտեղ իշխանությունը պատկանում է աղքատներին և տգետներին: Նա իր «Պետություն» աշխատությունում դեմոկրատիայի մասին խոսելիս նշում է, որ այն առաջանում է այն ժամանակ, երբ աղքատները, տանելով հաղթանակ, իրենց որոշ հակառակորդների ոչնչացնում են, ոմանց՝ մեկուսացնում, վանում, իսկ մնացածներին հավասարեցնում են իրավունքներով: Դա է դեմոկրատիայի հենց գլխավոր աղետը: Չէ որ յուրաքանչյուր մարդ, ըստ հեղինակի, բնությունից օժտված և կոչված է պետության համար այս կամ այն օգտակար գործը կատարելու: Ոմանք պետք է կառավարեն, ուրիշները՝ պաշտպանեն հասարակությունը, երրորդները՝ ստեղծեն նյութական նախադրյալներ: Իդեալական կարող է լինել այն պետությունը, որտեղ կպահպանվի նման կարգը: Դեմոկրատիայի պայմաններում բոլորը հավասար են, բոլորը կարող են կառավարել, բոլորը կարող են զբաղվել ամեն ինչով: Դա, ըստ Պլատոնի, կհանգեցնի քաոսի, որտեղ յուրաքանչյուրը կատարում է այն, ինչ ցանկանում է և կարող է նաև չհետևել օրենքին, բայց դրանով հանդերձ կառավարել ու դատել ուրիշին:

Դեմոկրատիան անընդունելի է Պլատոնի համար նաև այն պատճառով, որ իշխանության է բերում մեծամասնությանը, իսկ մեծամասնությունը չլուսավորված զանգված է, որն իր միջից առաջ է քաշում ոչ ուսյալ և անընդունակ կառավարողներ: Նման մեծամասնությունը կարող է ընկնել ծայրահեղությունների մեջ:

Ելնելով այդ ամենից՝ Պլատոնը դեմոկրատիան հավասարեցնում է օխլոկրատիային՝ ամբոխի իշխանությանը: Դժվար չի տեսնել, որ Պլատոնը դեմոկրատիայի կողմնակից չէր, մինչդեռ նրա աշակերտ Արիստոտելը այն կարծիքին էր, որ կառավարման լավագույն ձևն այն է, երբ կառավարում է մեծամասնությունը: Ըստ նրա՝ մեծամասնությունն ավելի լավ կարող է հասկանալ, զգալ և լուծել հիմնախնդիրները: Միավորվելով՝ մարդիկ մի շարք անգամ բազմապատկում են իրենց ունակությունները պետության կառավարման գործում: Մյուս կողմից՝ Արիստոտելը հասկանում է, որ մեծամասնության կառավարումը հղի է բազմաթիվ վտանգներով, ինչի համար էլ մի քանի պայմաններ է առաջ քաշում: Դրանցից մեկն այն է, որ քաղաքացին պետք է որոշակի ունեցվածք՝ սեփականություն ունենա: Մյուս պայմանն այն է, որ բոլոր քաղաքացիները ծագումով հավասար են և իրավունք ունեն պաշտոններ զբաղեցնել, սակայն պետք է իշխի օրենքը:

Ինչ խոսք, սա ճիշտ հարցադրում է, սակայն այն կիրառում չգտավ հետագա դարերի ընթացքում, ընդհուպ մինչև բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների հաղթանակը:

Չխորանալով Անտիկ Աշխարհի մտածողների՝ ժողովրդավարության վերաբերյալ տարբեր տեսակետների մեջ՝ նշենք, որ այդ գաղափարները հետագայում էվոլյուցիա են ապրել և ավելի հարստացել նոր մտածողների՝ լուսավորիչների կողմից: Հատկապես հարկ է նշել Թ. Հոբսին (1588-1679), Ջ. Լոքին (1632-1704), Շ. Մոնտեսքյոյին (1689-1755), Ժ. Ժ. Ռուսսոյին (1712-1778): Սակայն պետք է ասել, որ ժողովրդավարության տեսությունը, սկսած Լոքի, Մոնտեսքյոյի ժամանակներից ընդհուպ մինչև 19-րդ դարը զգալիորեն կտրված էր հասարակության քաղաքական համակարգերի ձևավորման և զարգացման իրական գործընթացից: Մոնտեսքյոն իր «Օրենքների ոգին» աշխատության մեջ վերլուծեց անգլիական քաղաքական համակարգը և առաջին անգամ տվեց իշխանությունների տարանջատման գաղափարն ու տեսությունը:

Նոր ժամանակի ժողովրդավարության դասական տեսության հիմնական գաղափարը մշակել է Ժան Ժակ Ռուսսոն իր «Հասարակական դաշինք» աշխատության մեջ: Ըստ նրա՝ քաղաքական գործընթացի մեջ ընդգրկված ինքնուրույն մտածող բանական անհատները համատեղ մշակում են ընդհանուր բարեկեցության սկզբունքը, որը ձևավորվում է ընդհանուրի կամքի հիման վրա:

Ըստ Ժան Ժակ Ռուսսոյի՝ մարդիկ միասին որոշում են, թե ինչն է լավը, բարին, վատը, չարը և խելացի բանավեճից հետո որոշում են ընդունում ընդհանուր բարեկեցության հասնելու մասին: Ընդհանուր բարեկեցության գաղափարը համարվեց նվաճում և երջանկություն բոլորի համար, և այդ տեսակետը գործեց մինչև 19-րդ դարը: Նաև պետք է ասել, որ ընդհանուր բարեկեցության գաղափարի մեջ տոտալիտարիզ-

մի տարրեր կային, ինչի համար էլ այդ գաղափարը չընդունվեց և քննադատության ենթարկվեց քաղաքագետների կողմից:

Ժողովրդավարության կարևոր կողմերից մեկը պլուրալիստական՝ բազմակարծրության տեսությունն է (լատ. pluralis-բազմաթիվ, բազմազան): ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Մեդիսոնը (1751-1836 թթ.) գտնում էր, որ հասարակության մեջ որքան շատ լինեն տարբեր խմբերը իրենց շահերով, այնքան ավելի քիչ է վտանգը, որ նրանցից միայն մեկը կարող է դառնալ իշխող: Միաժամանակ նման դեպքում ավելի շատ երաշխիքներ են առաջանում՝ բոլոր խմբերի շահերը հուսալիորեն պաշտպանելու համար: Ջեյմս Մեդիսոնի գաղափարներն էլ դրվեցին ԱՄՆ-ի Սահմանադրության (1787 թ.) հիմքում:

Նման հարցադրումը նշանակում է հրաժարում անտիկ պոլիսի միասնության ամբողջատիրական գաղափարից՝ հօգուտ պետական իշխանության այնպիսի ձևի, որը հնարավորություն է ստեղծում ժողովրդավարության սկզբունքը զուգակցել անհատականության և ազատականության սկզբունքի հետ:

Փաստորեն, քաղաքական տեսության մեջ առաջին անգամ ժողովրդի, այսինքն՝ մեծամասնության, կառավարման սկզբունքի փառաբանումից անցում կատարվեց փոքրամասնության շահերի պաշտպանության գաղափարին: Ժողովրդավարության պլուրալիստական տեսության ներկայացուցիչներն ամբողջովին հրաժարվեցին բոլոր քաղաքացիների կողմից քաղաքական գործընթացին ուղղակի մասնակցության գաղափարից: Շնորհիվ դրա՝ լուծվեց ժողովրդավարության նոր շրջանի դասական տեսության այն հակասությունը, որը կապված էր ընդհանուր բարեկեցության և ընդհանուր կամքի ձևավորման սկզբունքի հետ: Եթե անտիկ և դասական ժողովրդավարության տեսությունների համաձայն՝ առանձին քաղաքացին գլխավոր գործող դեմք էր, ապա այժմ նա ընդամենը քվեարկության մասնակից է: Ներկայացուցչական ժողովրդավարությունը նրան զրկեց անմիջական որոշումներ ընդունելու հնարավորությունից: Բուն քաղաքական գործընթացը ժողովրդավարության պլուրալիստական տեսությունը դիտում էր ոչ թե իբրև առանձին անհատների, այլ խմբերի և խմբային շահերի փոխգործունեություն: Այս նոր փոփոխութունների հետևանքով առաջացավ հետաքրքրություն քաղաքական գործընթացներին զանգվածների մասնակցության, նրանց քաղաքական վարքագծի նկատմամբ: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ անհատի գաղափարները, արժեքների նկատմամբ նրա կողմնորոշումները, գործողությունների դրդապատճառները ձևավորվում են խմբերի ներսում կամ էլ դրանց փոխգործունեության շնորհիվ: Ստեղծվեց քաղաքական մասնակցության խմբային կոնցեպցիան՝ հայեցակարգը, ըստ որի՝ յուրաքանչյուր խումբ գործում է՝ հետամուտ լինելով իր շահերին: Պլուրալիստական ժողովրդավարական նշանավոր տեսաբան Ռոբերտ Դալը այն կարծիքին է, որ ժամանակակից ժողովրդաիշխանության գործող իրական ռեժիմները պլուրալիստական են, ինչը նշանակում է, որ քաղաքական իշխանության համակարգում գործում են տարբեր սոցիալական խմբեր, քաղաքական ուժեր, կարծիքներ և շահեր:

Փաստորեն, ժխտվում է քաղաքական որոշումներ ընդունելու առանձին խմբերի մենաշնորհը: Գործում է փոխադարձաբար վերահսկվող տարբեր շահերի մրցակցությունը, ստեղծվում է հասարակական հավասարակշռություն, որն էլ հնարավորություն է տալիս հաշվի առնելու հասարակական և խմբային շահերը:

Ըստ Ռոբերտ Դալի՝ կառավարման պլուրալիստական ամենաճիշտ ձևը «պոլիարխիան» է, որը նշանակում է բազմակառավարում, քաղաքական խմբերի կառավարում ՝ մրցակցության միջոցով:

## Ժողովրդավարության մարքսիստական տեսությունը

Քաղաքական և մարդկային հետաքրքրության տեսակետից կարևոր է նաև ուսումնասիրել ժողովրդավարության մարքսիստական տեսությունը, որն ունի երեք բնութագրում կամ իմաստ.

1. ժողովրդի իշխանություն
2. պետության տիպ (վարչաձև)
3. քաղաքացիների իրավունքների և ազատությունների համակարգ:

Ըստ մարքսիստների՝ ժողովրդավարությունը մեծամասնության կամքն է որպես իշխանության աղբյուր, քաղաքացիների իրավունքների, ազատությունների, հավասարության հռչակում և այլն: Մյուս հար-

ցադրումն այն է, որ ժողովրդաիշխանությունը դասակարգային պայքարի և դասակարգային դիկտատուրայի հաստատման ձև է:

Ըստ Մարքսի՝ մարդկային հասարակության մեջ գործող բոլոր օրենքները, հատկապես քաղաքական հարաբերությունները ձևավորվում են տնտեսական հարաբերությունների հիմքի վրա, ուստի տնտեսապես իշխող դասակարգը միաժամանակ դառնում է իշխող նաև քաղաքական և գաղափարական առումով: Իսկ դա նշանակում է, որ հասարակության մեջ տիրապետող, նյութական ուժ ներկայացնող դասակարգը տիրում է նաև իրավական, հոգևոր, գաղափարական տեսակետից: Այստեղից էլ հետևություն, որ հասարակության մեջ իրականացվող ժողովրդավարությունը բխում է միայն տիրող դասակարգի շահերից: Ժողովրդավարությունը հասարակության քաղաքական կառուցվածքի ձև է, որն ի վերջո որոշվում է արտադրական հարաբերություններով:

Մարքսիզմը ժողովրդավարության հարցում ևս ելնում է հասարակության ֆորմացիոն, սոցիալ-դասակարգային սկզբունքներից, ըստ որի՝ յուրաքանչյուր հասարակական-տնտեսական համակարգին բնորոշ է ժողովրդավարության իր յուրահատուկ ձևը: Այն ծագել և զարգացել է դասակարգային պայքարի ազդեցությամբ՝ փոխելով միայն դասակարգային բովանդակությունը, կիրառման և դրսևորման եղանակները: Օրինակ. մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակության մեջ գոյություն չունի ընդհանուր շահ, հետևաբար և իրական ժողովրդաիշխանություն: Մարքսիստական տեսությունը, պատմությունը ներկայացնելով որպես դասակարգային պայքար, գտնում է, որ դասակարգային պայքարը պատմության լոկոմոտիվն է, շարժիչ ուժը, և այդ պայքարը հանգեցնում է անցման՝ հասարակական մի ֆորմացիայից մեկ այլ ֆորմացիայի: Ըստ մարքսիզմի՝ դասակարգային հասարակարգերում չէր կարող լինել իրական ժողովրդավարություն, քանի որ դրանք հենվում են մասնավոր սեփականության և դրանից բխող մարդու կողմից մարդու շահագործման վրա:

Չժխտելով բուրժուական ժողովրդավարության պատմական առաջադիմական նշանակությունը, որի ժամանակ ստեղծվել են սահմանադրություններ, խորհրդարաններ և այլ ներկայացուցչական մարմիններ, համընդհանուր ընտրական իրավունքի և քաղաքական այլ ազատությունների սկզբունքներ և այլն, մարքսիզմը, այնուամենայնիվ, այդ բոլորը համարում է թերի, քանզի դրանք պաշտպանում են միայն հասարակության փոքր մասի շահերը:



Ըստ մարքսիստների՝ կապիտալիստական հասարակության մեջ զուտ ժողովրդաիշխանություն գոյություն չունի, քանի որ իրական ժողովրդավարությունը պայմանավորված է ոչ թե հավասարության, ազատության վերացական գաղափարներով, այլ հասարակության սոցիալ-տնտեսական համակարգով, մարդկանց փաստական իրավիճակով:

Ըստ մարքսիզմի՝ ժողովրդավարության բարձրագույն ձևը սոցիալիստական ժողովրդավարությունն է, քանի որ այն արտահայտում է հասարակության մեծամասնության շահերը և հենվում է արտադրության միջոցների հանրային սեփականության վրա:

## Ժողովրդավարության էլիտար տեսությունը

Ժողովրդավարության, ժողովրդաիշխանության հիմնախնդրի ուսումնասիրման մեջ կարևոր է նաև ընտրախավի մասին՝ էլիտար (լատ. elitere-ընտրել, ֆր. elite-ընտրյալ, ընտրախավ) տեսությունը: Այդ տեսության հայրենիքը Իտալիան է, որտեղ Գ. Տոսկան և Վ. Պարետոն ստեղծեցին հասարակության էլիտար տեսությունը:

Էլիտան, ըստ նրանց, բարձրակարգ, ավելի արդյունավետ գործող և ընդունակ մարդկանց խումբ է, որին բնորոշ են քաղաքական, կազմակերպական բարձր հատկանիշներ: Տեսության հիմնադիրներն ու ներկայացուցիչները գտնում են, որ ժողովրդավարությունը պետք է պաշտպանել ժողովրդից: Դրա համար անհրաժեշտ է ժողովրդին համոզել, որ նա իր շահերի պաշտպանությունը վստահի պրոֆեսիոնալ, արհեստավարժ քաղաքական գործիչներին:

Հասարակության քաղաքական գործընթացներին մարդկանց մեծ խմբերի մասնակցության տեսության կողմնակիցները չափից ավելի ժողովրդավարությունը համարում են ոչ միայն անցանկալի, այլև վնասակար և օրինակ են բերում 1930-ական թթ. իրադարձությունները Գերմանիայում, երբ հոծ զանգվածների մասնակցությունը քաղաքական գործընթացներին հանգեցրեց ֆաշիզմի հաստատմանը:

Ի տարբերություն պլուրալիստական տեսության կողմնակիցների, էլիտար տեսության կողմնակիցները գտնում են, որ հասարակությունը

կառավարվում է բացառապես իշխող էլիտայի կողմից: Մյուսն այն է, որ եթե պլուրալիստները գտնում են, որ ընտրազանգվածը վճռական դեր է խաղում քաղաքական գործընթացներում, ապա, ըստ էլիտար տեսության կողմնակիցների զանգվածների դերը հավասար է զրոյի:

Սակայն ավելի ճիշտը միջին տեսակետն է, քանի որ ժամանակակից արևմտյան քաղաքական համակարգերն իրենց կառուցվածքով էլիտար-պլուրալիստական են: Ըստ նրանց՝ բոլոր հասարակություններին էլ հատուկ է էլիտարությունը, որի հիմքում ընկած են մարդկանց բնական հատկանիշները, ֆիզիկական, հոգեբանական, բարոյական, մտավոր ունակությունների տարբերությունները: Զանգվածները միայն ընդունում և ճանաչում են կառավարող էլիտայի իրավունքները կամ, ինչպես ասում են, լեգիտիմությունը: Փաստորեն ժողովրդավարությունը պայքար է, մրցակցություն՝ հասարակությունն ընտրությունների միջոցով ղեկավարելու համար:

Էլիտայի ձևավորումը, ըստ այդ տեսության, չի հակասում ժողովրդավարության սկզբունքներին, ուստի մարդկանց սոցիալական հավասարությունը պետք է հասկանալ որպես հնարավորությունների հավասարություն: Ժողովրդավարության պայմաններում իշխանությունը բաշխվում է տարբեր էլիտար խմբերի միջև, որոնք, իրենց շահերից ելնելով, ազդում են որոշումների ընդունման վրա: Էլիտայի և զանգվածների միջև եղած սահմանները պայմանական են, քանի որ ճանապարհը դեպի ընտրախավ բաց է ոչ միայն հարուստների, այլև բացառիկ ընդունակություններ ունեցողների համար: Սակայն էլիտայի ազատական թևի հայեցակարգի համաձայն՝ հասարակությունը կառավարում է միայն իշխող էլիտան, որն զբաղեցնում է բարձր պաշտոններ և զանգվածներին թույլ չի տալիս մասնակցել կառավարմանը, քաղաքականությանը, որը կարող է հանգեցնել ամբոխավարության: Ուստի ժողովրդավարական ինստիտուտների այն է՝ ընտրությունների, հանրաքվեների և այլնի դերը բավական չնչին է, քանի որ իշխող էլիտան, զբաղեցնելով բարձր պաշտոններ, իր համար ապահովում է հարստություն, իշխանություն, ճանաչում: Եվ վերջապես, ըստ այդ տեսության՝ էլիտայի և զանգվածների միջև տարբերությունը բավական մեծ է, որը գործնականում հնարավոր չէ հաղթահարել:

Ժողովրդավարության մասին խոսելիս՝ կարևոր է պետություն – հասարակություն - անհատ հարաբերությունների մեջ անհատի շահերի



առաջնության հարցը, քանի որ դա է քաղաքացիական հասարակության և պետության հիմքը, իշխանության աղբյուրը: Եվ եթե հարյուրամյակներ շարունակ ժողովրդի ինքնիշխանությունը կազմել է ժողովրդավարության հիմքը, ապա այսօր ժողովրդաիշխանության հիմքը կազմում են անհատները, քաղաքացիները:

Հարկ է ասել, որ ժամանակակից ազատականությունը հենվում է անհատական սկզբունքի վրա և առաջնությունը տրվում է ներկայացուցչական ժողովրդաիշխանությանը: Ժողովրդի և նրա ներկայացուցիչների միջև հարաբերությունները հիմնվում են վստահության և լիազորությունների վրա:

Ժողովրդավարական կարգերը բարգավաճում, զարգանում են քաղաքացիների կողմից կիրառվելու դեպքում, երբ նրանք պատրաստ են մասնակցել հասարակական կյանքին, ընտրել ներկայացուցիչներ, ովքեր իրենց գործունեության համար պատասխանատու են ընտրողներին: Այդ իմաստով էլ ժողովրդավարական կարգերը բաժանվում են երկու դասի՝

1. ուղղակի անմիջական
2. ներկայացուցչական:

Հանրաքվեների միջոցով ժողովուրդն անմիջականորեն, ուղղակի իրականացնում է իր իշխանությունը. ընդունում է սահմանադրություն, օրենքներ, փոփոխություններ է կատարում դրանց մեջ: Հանրաքվեների միջոցով կարող են ընդունվել համազգային, համապետական, տեղական նշանակության հարցեր:

ՀՀ Սահմանադրությամբ ժողովուրդն իր իշխանությունը կարող է իրականացնել ոչ միայն ուղղակի, այլև միջնորդավորված՝ Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների և պաշտոնատար անձանց՝ Ազգային ժողովի, հանրապետության Նախագահի, համայնքների ավագանու կամ ղեկավարի միջոցով և այլն:

Մեր օրերում ժողովրդավարության ավելի տարածված ձևը ներկայացուցչական ժողովրդավարությունն է: Այս դեպքում մարդիկ ընտրում են պաշտոնյաներ՝ քաղաքական որոշումներ ընդունելու և այլ ծրագրեր կատարելու համար: Այդպիսի ժողովրդավարությունը լայն տարածված է ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի երկրներում:

Ինչպես նշում է ամերիկյան քաղաքագետ Ռոբերտ Դալը, կա ժողովրդավարություն, որ գոյություն ունի արևմուտքում, և կա ժողովրդա-

վարության իդեալ, որին ոչ մի երկիր չի հասել: Բայց կա առաջընթաց, քանի որ կան ժողովրդավարության օգտին, նրա համար աշխատող ինստիտուտներ: Արևմտյան երկրներում դա կոչվում է «ներկայացուցչական դեմոկրատիա»:

Իրական ժողովրդավարության չափանիշ են համարում ժողովրդական զանգվածների մասնակցությունը կարևորագույն պետական որոշումների ընդունմանը: Իսկ դիկտատորական վարչաձևերում ժողովրդական լայն զանգվածներն օտարված են այդ գործընթացից: Ընդհանրապես համարվում է, որ որքան բարձր է քաղաքացիների մասնակցության աստիճանը կավորագույն պետական որոշումների ընդունմանը, այնքան ժողովրդավարական է տվյալ վարչակարգը:

Սակայն ամեն ինչ, այդքան միանշանակ չէ:

Անտիկ Յունաստանի փորձը ցույց է տալիս, որ հաճախ ուղղակի ժողովրդավարական պայմաններում, երբ բոլոր քաղաքացիները կարող են մասնակցել կարևորագույն որոշումների ընդունմանը, մեծամասնության կարծիքը մեծատիրական է դառնում, իսկ փոքրամասնության կարծիքը և նրանց շահերի պաշտպանությունը, որոնք ժողովրդավարության կարևոր պայմաններից են, անտեսվում և արհամարհվում են: Փաստորեն, ժողովրդավարությունը վերածվում է մեծամասնության դիկտատուրայի: Եվ քանի որ մարդկանց մի մասը չունի բարձր գիտելիքներ, պետական կարևորագույն որոշումներ ընդունելու ունակություններ, հաճախ իշխում են զգացմունքները: Ուստի անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի մեխանիզմ, որի ժամանակ որոշումների ընդունմանը կմասնակցի ազգաբնակչության մեծ մասը, շատերը, և միաժամանակ կհարգվեն փոքրամասնության իրավունքները և կպաշտպանվեն նրանց շահերը: Դա նշանակում է, որ ժողովուրդը կմասնակցի կարևոր քաղաքական որոշումների ընդունմանը, սակայն կբացառվի նրա անմիջական մասնակցությունը քաղաքական գործընթացներին, քանի որ մասնակցությունը պահանջում է մեծ ունակություններ:

Դա է պատճառը, որ արևմտաեվրոպական ժողովրդավարական պետությունները ձգտել են ստեղծել պետական կարևորագույն որոշումների ընդունմանը ժողովրդի միջնորդավորված մասնակցության մեխանիզմ, բացառությամբ հանրաքվեների, որոնց ժամանակ հաշվի է առնվում յուրաքանչյուրի կարծիքը, դիրքորոշումը:



Միջնորդավորված, ներկայացուցչական մասնակցությունը նախ և առաջ իրականացվում է ընտրությունների միջոցով: Ըստ մի շարք քաղաքագետների՝ այսօր աշխարհում գոյություն ունեն շուրջ 40 պետություններ, որոնք լիովին կարող են համարվել ժողովրդավարական, մոտ 60-ը՝ ոչ լիովին ժողովրդավարական, մնացածները՝ ոչ ժողովրդավարական:

Յարկ է նշել, որ տարբեր երկրներ տարբեր ժամանակներում են սկսել անցում կատարել ժողովրդավարությանը, ուստի անցումային փուլում գտնվողները պետք է հաշվի առնեն արդեն ժողովրդավարական համարվողների փորձը, տարբերությունները: Ժողովրդավարական երկրներից և ոչ մեկը մյուսի կրկնությունը չէ: Օրինակ, ԱՄՆ-ում ընտրությունների ժամանակ ընտրողներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում թեկնածուի անձին, քան կուսակցությանը, մինչդեռ Եվրոպայում այդ գործոնն ավելի էական է: Եվ դա երևի այն պատճառով, որ ԱՄՆ-ում կուսակցություններն ավելի թույլ են կապված հասարակական կազմակերպությունների, շահերի կամ ճնշման խմբերի, լոբբիստական կազմակերպությունների հետ, այնինչ՝ Եվրոպայում կուսակցություններն ունեն իրենց հասարակական կազմակերպություններն ու ճնշման խմբերը:

Ամերիկյան ժողովրդավարության հիմքում ընկած են հետևյալ երեք սկզբունքները.

1. մարդկանց հավասարությունը (բոլորը ստեղծվում են հավասար);
2. ազատություն և ազատ ինքնարտահայտում;
3. հասարակության և յուրաքանչյուրի ընդունակությունների կատարելագործման հնարավորություն:

Այսինքն, այդ սկզբունքները կազմում են ամերիկյան լիբերալ և անհատական արժեքների իմաստը, ամերիկյան վստահությունը:

Եվրոպականը՝ անգլո-եվրոպականը, լիբերալ-ավանդական է, պլուրալիստական և էլիտար: Անգլիական ժողովրդավարությունը ներկայացուցչական է:

## Ժողովրդավարության ինստիտուտները և նրանց պատմական զարգացումները

Ժողովրդավարությունը հասարակական, քաղաքական ինստիտուտների համակարգ է, որն իրականացնում է ժողովրդաիշխանության սկզբունքները: Դրանք իրականացվում են գործադիր, դատական իշխանությունների, քաղաքական կուսակցությունների, ԶԼՄ-ների, քվեարկությունների, հանրաքվեների, բանակցությունների և այլնի միջոցով:

Ժողովրդավարության հիմնական, գլխավոր արտահայտությունը պառլամենտարիզմն է, որն ստեղծվել է ներկայացուցչական ժողովրդաիշխանության հիմքի վրա: Պառլամենտարիզմն իրականացնում է մի շարք ֆունկցիաներ.

1. ներկայացուցչական, որն արտահայտում է բնակչության բոլոր խավերի շահերը
2. օրենսդրական;
3. քաղաքական վարչաձևի, վարչակարգի լեգիտիմության ապահովումը;
4. սոցիալական;
5. քաղաքական բախումների լուծման և այլն:

Պառլամենտարիզմի հիմքը նաև իշխանությունների տարանջատման սկզբունքն է: Միաժամանակ պառլամենտարիզմը, իբրև քաղաքական ժողովրդավարության ինստիտուտ, նախատեսում է քաղաքական ուժերի անխուսափելի մրցակցություն: Նաև անհրաժեշտ է նշել, որ պառլամենտարիզմն այնպիսի քաղաքական ինստիտուտ է, համակարգ, որտեղ բացի պաշտոնական ընդդիմությունից, գործում են զանազան ճնշման խմբեր՝ լոբբիստական կազմակերպություններ:

Բազմազգ պետություններում, քաղաքական բազմակառուցվածք հասարակարգում անչափ կարևոր է ֆեդերալիզմի (ֆր. Federalisme, լատ. feadus- միություն) ինստիտուտը:

Յուրաքանչյուր ինստիտուտ առաջացել է հասարակության պատմական էվոլուցիայի որոշակի փուլում: Օրինակ՝ քաղաքական կուսակցությունները ձևավորվել են արևմտյան երկրներում խորհրդարանների գործունեության պայմաններում: Իսկ քաղաքական կուսակցությունների՝ պատմական ասպարեզ գալը նպաստեց նրան, որ պառլամենտարիզմը ձեռք բերեց նոր որակ: Դա նախ և առաջ դրսևորվում է



նրանում, որ խորհրդարանում քաղաքական տարբեր կուսակցությունները ապահովում են տարբեր սոցիալական խմբերի և խավերի ներկայությունը, պաշտպանում նրանց շահերը:

Ժողովրդավարական հասարակարգերում օրենսդիր իշխանության մարմինները հասարակության տարբեր խավերի շահերի բախումները տեղափոխում են քաղաքական ինստիտուտների սահմաններից ներս և երկրում առաջացած հիմնախնդիրները լուծում խորհրդարանական խաղի կանոններին համաձայն, որն էլ հասարակությանը զերծ է պահում վտանգավոր բախումներից: Փաստորեն, առանց չափազանցության, խորհրդարանը հասարակության լարվածության թոթափման ուղիներից, միջոցներից մեկն է:

Մեծ է նաև քաղաքական կուսակցությունների, սոցիալական խավերի դերը, որոնք կարող են միավորվել և օրենքի սահմաններում պայքարել իշխանության համար: Հատկապես կարևոր է ճնշման խմբերի ստեղծումը, որոնք ունեն հստակ կառուցվածք, շահերի և նպատակների հստակ գիտակցում՝ ի տարբերություն սոցիալական և քաղաքական շարժումների: Բացի այդ, շահերի կամ ճնշման խմբերը գործում են խաղի կանոններին համաձայն: Իսկ այդ հանգամանքը հնարավորություն է տալիս բարձրացնելու ժողովուրդ - իշխանություն համագործակցության մակարդակը՝ ստեղծելով սոցիալական և քաղաքական բախումների լուծման, մարման մեխանիզմներ:

Քաղաքական ինստիտուտների համակարգում կարևոր է նաև քաղաքական ռեժիմների (վարչակարգերի), պատմության վերլուծությունը: Մարքսիստական ֆորմացիոն տեսության համաձայն՝ հասարակարգերը բաժանվում են սոցիալ-դասակարգային սկզբունքով, ասենք նախնադարյան, ստրկատիրական, ֆեոդալական (ավատատիրական), բուրժուական, սոցիալիստական, անցման շրջանի և այլն:

Այժմ ավելի շատ շեշտվում է ժողովրդավարության զարգացման աստիճանը: Այսօր, ավելի քան երբևէ, պայքար է գնում ժողովրդավարների և հակաժողովրդավարական ուժերի միջև՝ հանուն արժեքների գնահատման և վերագնահատման:

Հասարակական առաջընթացի պատմությունը, նրա զարգացումը, էվոլուցիան հաստատում են այն կարևոր օրինաչափությունը, որ, վաղ թե ուշ, անխուսափելի է ժողովրդավարության հաղթանակը:

Լայն կտրվածքով վերլուծելու դեպքում ժամանակակից քաղաքական ռեժիմները բաժանվում են երկու մասի՝

1. ժողովրդավարական, որի մեջ մտնում են նախագահական և խորհրդարանական վարչաձևերը
2. ոչ ժողովրդավարական՝ տոտալիտար և ավտորիտար ռեժիմները:

Ժողովրդավարության հատկանիշներից են կանոնավոր, մրցութային, մաքուր ընտրությունները: Ընտրությունները մրցութային են համարվում, երբ տարբեր կուսակցությունները, խմբերը, անհատները կարող են ազատ դնել իրենց թեկնածությունները: Ընտրությունները մաքուր են համարվում, երբ չկան օրինախախտումներ և գործում է ազնիվ խաղի հատուկ մեխանիզմ: Եթե բյուրոկրատական մեքենան պատկանում է մեկ կուսակցության, որը կարող է ազդել ԶԼՄ-ների վրա, ձևավորել հասարակական կարծիք, ապա ընտրությունները չի կարելի համարել մաքուր, ազնիվ և այլն: Եթե դրան ավելացնենք, որ չկան դեմոկրատական ավանդույթներ, ցածր է քաղաքական կուլտուրան և այլն, ապա այդ դեպքում հաճախ կեղծվում են ընտրությունների արդյունքները:

Ժողովրդավարության մյուս բնորոշ գիծն այն է, որ կառավարությունը ստեղծվում է ընտրությունների միջոցով, տեղի է ունենում կառավարության հերթափոխություն և այլն: Միակուսակցական համակարգի երկրներում ընտրություններն իշխանության չեն բերում նոր քաղաքական ուժերի: Այնուամենայնիվ, ժողովրդավարական երկրներն էլ ունեն թերություններ, խոցելի կողմեր: Ինչպես Ուինսթոն Չերչիլն էր ասում. «Ժողովրդավարությունը սարսափելի ուղեբեռ է, բայց դրանից լավը մարդկությունը դեռ ոչինչ չի հնարել»:

Նույնիսկ կան մարդիկ, ովքեր գտնում են, որ չափից շատ, «ավելորդ» ժողովրդավարությունը վկայում է պետական իշխանության թուլության մասին: Այդ տեսակետից բավական վտանգավոր է զանգվածային շարժումների ժամանակ մարդկանց մղել ժողովրդավարության (ինչպես օրինակ՝ գորբաչովյան վերակառուցման տարիներին)՝ առանց համապատասխան գիտելիքների, հոգևոր և նյութական նախադրյալների և այլն: Ժողովրդավարական գաղափարներն ու ազատությունները մարդկանց մեջ առաջացնում են ակտիվություն, որը կարող է ունենալ ինչպես կառուցողական, այնպես էլ ոչ կառուցողական բնույթ:



Նման դեպքում բավական դժվար է ասել, թե որքան ուժ և էներգիա է պետք ժողովրդավարությունը պաշտպանելու համար:

Ժողովրդավարության հաստատումն ու զարգացումը ենթադրում է հասարակական տարբեր խավերի միջև համաձայնության հաստատում, քաղաքական գործունեության ակտիվացում, ուժի կիրառման նվազեցում և այլն: Նման պայմաններում մեծանում է հասարակական համաձայնության պահանջը, որն անհրաժեշտ է քաղաքական առճակատումից խուսափելու համար:

Ինչպես և այսօր , հատկապես հետխորհրդային շրջանում, ԱՊՀ երկրների փորձը հաստատում է, որ այն երկրներում, որտեղ հասարակության զարգացման տարբեր հարցերի վերաբերյալ գոյություն ունի համաձայնություն՝ կոնսենսուս, այդ երկրներն ավելի մրցունակ են: Հասարակական կոնսենսուսն անհրաժեշտ է, որ սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային, ազգային տարբեր խմբեր չգտնվեն առճակատման մեջ, եթե անգամ նրանց շահերը որոշ դեպքերում հակասում են միմյանց և անգամ բախվում:

Իհարկե, հասարակական համաձայնությունը բավական բարդ, բայց անչափ անհրաժեշտ խնդիր է: Հաճախ այդ համաձայնությունն ամրագրվում է պայմանագրերի միջոցով: Նույնիսկ պետություններն առաջացել են մարդկանց միջև համաձայնության արդյունքում, իսկ ժամանակակից ժողովրդավարական պետություններում հասարակական համաձայնությունների հիման վրա ստեղծված պայմանագրերը համարվում են սահմանադրությունները: Հասարակական համաձայնությունը հատկապես անհրաժեշտ է այն երկրներին, որտեղ տեղի է ունենում անցում որոշակի արժեքներից այլ արժեքների, այլ հասարակական կառուցվածքների, այլ սոցիալական իրավիճակի և այլն: Դրանց թվում է նաև մեր երկիրը:

Եվ որպեսզի ժողովրդավարության նորմերը պահպանվեն, անհրաժեշտ է, որ պետության կառուցվածքը, նրա գործունեությունը համապատասխանեն ժողովրդի կամքին և գործեն Սահմանադրությամբ նախատեսված օրենքներով ու կանոններով; Պետության, պաշտոնատար անձանց համար գործում է «կարելի է այն, ինչ թույլատրված է», իսկ ժողովրդի համար՝ «կարելի է ամեն ինչ, ինչն արգելված չէ» հանրաճանաչ սկզբունքը: Նման դեպքում տեղին է օգտագործել այն իմաստուն

խոսքը, որը հաստատում է ժողովրդավարական պետության իմաստն ու բովանդակությունը. «Պետությունը հասարակության ծառան է»:

1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև 2005 թ. վերափոխված, լրացված նոր տարբերակը՝ հռչակել են, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (հոդված 1): ՀՀ քաղաքացիներին տրված են քաղաքական իրավունքներ, ազատություններ, թույլատրված է ընդդիմության գործունեությունը, բացառված են ամենաթողությունը, անարխիան և այլն: ՀՀ Սահմանադրությունն ընդունում է նաև, որ մարդը մեծագույն արժեք է, և նրա իրավունքներն ու ազատությունները ունեն առաջնային նշանակություն:

Առավել վստահելի է այն պետության դերը, որն իր ինստիտուտների միջոցով նպաստում է քաղաքացիական հասարակարգի ձևավորմանը, հաղթահարում է մարդկանցից իշխանության օտարումը և երաշխավորում նրանց անվտանգությունը:

Հարկ է ընդգծել, որ ժողովրդավարությունը չի կարելի նույնացնել օխլոկրատիայի՝ ամբոխավարության, ամբոխի իշխանության հետ, որը ծնում և ստեղծում է անպատժելիության, ամենաթողության հարաբերություններ: Ուստի ավելորդ չէ նորից շեշտել, որ ժողովրդավարության նպատակը ժողովրդի կամքի բացահայտումն է և դրա իրականացումը քաղաքակիրթ մեխանիզմների միջոցով:

Ժողովրդի ոչ մի մաս, կազմակերպություն, անհատ իրավունք չունի իշխանությունը բռնությամբ վերցնել՝ բռնատիրել: ՀՀ Սահմանադրությունն այդ մասին ամրագրել է հետևյալը. «Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է» (հոդված 2): Արգելվում է նաև իշխանությանը զուգահեռ մարմինների ստեղծումը:

Կարևոր է նաև քաղաքացիական հասարակարգի ստեղծումը, որը երկար ուղի է անցել: Քաղաքացիական հասարակարգն ապահովում է մարդկանց փոխներգործությունը, հասարակական հարաբերությունների փոփոխվող վիճակը: Ավելի պատկերավոր ասած՝ եթե Հին Աշխարհի մտածողները քաղաքացիական հասարակությունը պատկերացնում, ներկայացնում էին «ժողովուրդ», «քաղաքացի», «ընկերակցություն», «ընտանիք» հասկացություններով, ապա պետության երևան գալը նոր հարցադրումներ, նոր փոխհարաբերություններ է առաջ քաշում՝ «քա-



ղաքական իշխանություն», «օրենք», «դասակարգեր», «կուսակցություններ» և այլն:

Պետական իշխանության և հասարակության տարանջատումը ժողովրդավարական մեծ իմաստ ունի: Դա է պատճառը, որ պետության ապագան ներկայացվում է որպես ոչ պետական կառույց, որն այնքան էլ իրատեսական չէ, ուտոպիստական է, անարխիստական: Իսկ պետության չափից ավելի մեծարումը, ստրկական մոտեցումը տեսականորեն և գործնականորեն հանգեցնում են նրան, որ երկար տարիներ գործում էր ավտորիտար պետությունը: Իսկ դա նշանակում է, որ պետությունը և միակ կառավարող կուսակցությունը երկար տարիներ գերիշխում են հասարակության վրա: Նման դեպքերում հասարակական ինստիտուտները ճնշված են, իսկ քաղաքացին ենթարկվում է հետապնդումների, իրավունքների ոտնահարմանը և այլն:

Նման արմատական փոփոխությունների պայմաններում փոխվում են քաղաքացիական հասարակության և պետության հարաբերությունները, և բազմակարծությունը դառնում է կարևոր նորմ, ամրագրվում որպես օրենքի իշխանություն:

Կարևոր է նաև իրավական պետությունը, որի բնորոշ գծերից են քաղաքացիների կողմից նոր իրավաըմբռնումը, օրենքի գերակայությունը, իրավական բարձր կուլտուրան, իրավական պաշտպանվածությունը և այլն:

Քաղաքացիական հասարակությանը բնորոշ են այն ինստիտուտները, որոնք ստեղծվում են քաղաքացիների կամքով: Ընդ որում, քաղաքացիներն այդ ինստիտուտները ստեղծում են մի դեպքում կամավոր, մյուս դեպքում՝ պետության նախաձեռնությամբ: Այդ ինստիտուտներին հատուկ են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ինքնակազմակերպումը, ինքնակառավարումը, ինքնապատասխանատվությունը: Խոսքը վերաբերում է այն հարցին, որ մարդկանց նախաձեռնությամբ բոլոր մակարդակներում ինքնակառավարման հիմունքները, սկզբունքները գնալով զարգանում են:

Քաղաքացիական հասարակության ինքնակառավարման ինստիտուտներն են.

1. քաղաքական կուսակցությունները և նրանց միությունները;
2. հասարակական շարժումները;
3. արհեստակցական միությունները;

4. տեղական ինքնակառավարման մարմինները և տեղական ընկերակցությունները;
5. զանգվածային լրատվական միջոցները (ոչ պետական):

Այդ ինստիտուտների կարգավիճակը մեր հանրապետությունում օրենսդրորեն հստակ կարգավորված չէ, ինչն էլ հանգեցնում է հակասությունների՝ նրանց և պետության հարաբերություններում: Քաղաքացիական հասարակությունը անհատների և նրանց ասոցիացիաների, ընկերությունների՝ ժողովրդավարական սկզբունքներով օրինականացված շահերի դրսևորման ոլորտ է: Այն սահմանում է պետության և հասարակության, տնտեսության և քաղաքականության փոխհարաբերությունները, անձնական և հասարակական շահերը, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքացիական հասարակարգը ինքնակառավարվող, ինքնակարգավորվող համակարգ է և կարող է հաջող գործել, զարգանալ, երբ դրա համար ստեղծվում են ներքին և արտաքին բարենպաստ պայմաններ: Դրանք մեծ չափով ստեղծում է ինքը՝ հասարակությունը՝ պետության միջոցով, իսկ երբեմն էլ հակառակը՝ պետությունը հասարակության միջոցով:

Ժողովրդավարության ուղի թևակոխած երկրներում ստեղծվում է անցումային տիպի պետություն, որի մեջ դրսևորվում են և ավտորիտար, և ժողովրդավարական կառուցվածքի գծեր: Այդ տիպի երկրներում տեղի է ունենում իշխանության ապակենտրոնացում: Քաղաքացիական հասարակության անդամներն ունեն ավելի բարձր ինտելեկտուալ մակարդակ, ներքուստ ավելի ազատ են, կարող են հրապարակայնորեն արտահայտել իրենց մտքերը, ինքնուրույն գործողություններ կատարել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, տարբեր ինստիտուտներում:

ԱՊՀ երկրներում և նաև մեր հանրապետությունում բավական երկար կտևի քաղաքացիական հասարակարգի զարգացումը:

Մյուս հարցը սոցիալական պետության ձևավորման խնդիրն է, իսկ դա նշանակում է, որ պետությունն իր վրա է վերցնում պատասխանատվության այն ծավալը, որը համապատասխանում է իր հնարավորություններին, որպեսզի ապահովի իր քաղաքացիների համար կյանքի որոշակի մակարդակ և բավարարի նրանց նյութական ու հոգևոր պահանջները: Այդ պահանջն առաջին անգամ վավերացվել է ԳՖՀ-ի 1949թ,



իսկ այնուհետև Ֆրանսիայի 1958 թ., Իսպանիայի 1978 թ. Սահմանադրություններում:

Սոցիալական պետություն նշանակում է՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, ցածր, նվազ եկամուտներով սոցիալական խմբերին նյութական օգնության տրամադրում, պետական աջակցություն և այլն: Նման հարցադրումը կարող է հանգեցնել հասարակության անդամների կողմից նախաձեռնության կորստի, խնամառուական, հովանավորչական գաղափարախոսության առաջացմանը, որը ենթադրում և ընկալվում է որպես «պետությունը պարտավոր է» հոգեբանությունը:

1995 թ. ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նշվեց , ՀՀ համարում է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն՝ միաժամանակ ընդգծելով, որ մարդու արժանավայել կյանքի ապահովումը, ազատ զարգացումը պետք է լինի նաև նրա խելքի, ձեռքի նախաձեռնությունը, իսկ սոցիալական պետության հիմքը պետք է լինի այդ ամենի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Կարևոր է նաև իրավական պետության գաղափարը, որի հիմքում դրված է իշխանության, քաղաքացու, հասարակարգի և իրավունքի հավասարությունը և այդ բոլորի իրավական հավասարությունը օրենքի առջև: Իրավական պետության բարձրագույն իշխանությունը օրենքի գերակայությունն է, որին հավասարապես ենթակա են բոլորը՝ սկսած պետության բարձրագույն պաշտոնյաներից մինչև շարքային քաղաքացին: Մարդը որպես օրենքի գործող անձ՝ սուբյեկտ, ազատ է տնօրինելու սեփական ուժերը, ունակությունները, ունեցվածքը: Փաստորեն, իրավունքը ազատության ձև է, որը կոչված է առավելագույն չափով ընդարձակել այն սահմանները, որոնք կաշկանդում են անձի գործունեությունն առաջին հերթին տնտեսության, արտադրության մեջ, գիտատեխնիկական առաջընթացի ներդրման ոլորտում և այլն:

Եվ վերջապես, Սահմանադրությունը նաև օրենք է, դեռ ավելին՝ օրենքների օրենքն է, որն ունի գերակայություն մյուս օրենքների նկատմամբ, և ժողովրդավարական մեխանիզմներն էլ ապահովում են նրա գործելը:

Սահմանադրության գերակայության նպատակով հանրապետությունում առաջին անգամ 1995 թ. Սահմանադրությամբ նախատեսվեց, իսկ 1996 թ. փետրվարին կազմակերպվեց ՀՀ Սահմանադրական դա-

տարանը, որը լիազորված է իրականացնելու սահմանադրական վերահսկողության պետական ֆունկցիան: Այն իրականացնում է ՀՀ օրենքների, ՀՀ ԱԺ որոշումների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության որոշումների վերահսկողությունը, և եթե դրանցից որևէ մեկը հակասում է Սահմանադրությանը, կարող է ճանաչել անվավեր: Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, անբեկանելի և ենթակա չեն վերանայման: Իսկ արդեն 2005 թ. ընդունված Սահմանադրությունում ավելի հստակեցված է Սահմանադրական դատարանի դերը՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը (հոդված 93):

## Ժողովրդավարությունը որպես հասարակության սոցիալական զարգացման նախապայման

Անժխտելի է, որ հասարակական հարաբերությունների լավագույն, առավել բարենպաստ կազմակերպումն ընթանում է ժողովրդավարության, նրա անընդմեջ, մշտական զարգացման պայմաններում: Ժողովրդավարության պայմաններում իշխանության համակարգը որոշակի ամբողջականություն է ներկայացնում և ունի մի շարք ենթահամակարգեր՝ քաղաքական, տնտեսական, իրավական, զանգվածային մասնագիտական միավորումներ և այլն: Դրանք լայն հնարավորություններ են տալիս և բարենպաստ պայմաններ ու մթնոլորտ ստեղծում մարդու գործունեության գրեթե բոլոր բնագավառների համար:

Մինչդեռ այլ բնույթ է կրում իշխանության իրականացումը ավտորիտար և տոտալիտար ռեժիմների պայմաններում: Նման պետություններում իշխանությունը հիմնականում իրականացվում է կազմակերպված հարկադրանքի միջոցով: Կենտրոնանալով մեկ կետում՝ իշխանությունը լիովին իրեն սպառում է և իրականացնում բացարձակապես բռնակալական գործողություններ, որոնք էլ քայլ առ քայլ պատում են ողջ սոցիալական համակարգը: Այդպիսի համակարգը լիովին քայքայում է հասարակությունը և նրա հիմքը՝ մարդկային ներուժը: Նման գործընթացն արժեզրկում է մարդուն, առաջ բերում սոցիալական վախի



զգացում, տարածում սարսափի մթնոլորտ: Ուստի, ամուր թվացող իշխանությունն արագորեն փլուզվում է:

Իսկ իրապես ամուր, ուժեղ իշխանությունն ամրապնդվում է իր լայն, ընդարձակ սոցիալական հիմքի շնորհիվ: Դա էլ ստեղծում է անհրաժեշտ պայմաններ հասարակության զարգացման ու առաջընթացի համար:

Հասարակության սոցիալական զարգացման հիմնախնդրի ուսումնասիրության համար անհրաժեշտ է դիտարկել, թե ինչպես է ժողովրդավարությունը դրսևորվում, հաստատվում այն երկրներում, որտեղ անցում է կատարվում ոչ ժողովրդավարական հասարակարգից ժողովրդավարականի: Պատմությունը վկայում է, որ այդ անցումը բավականին բարդ է, երկարատև և պահանջում է մի շարք գործոնների կիրառում: Առաջին հերթին կարևորվում է տվյալ երկրի տնտեսական, սոցիալական զարգացման մակարդակը, նրա ազգային առանձնահատկությունները, ներքին և արտաքին սոցիալ-քաղաքական պայմանները, իրավական հաստատությունների առկայությունը և այլն:

Պատմական, քաղաքական փորձը հաստատում է նաև, որ գրեթե չի եղել մի օրինակ, որ հասարակական մի համակարգից անցում կատարվի մեկ այլ համակարգի առանց մեծ կամ փոքր ցնցումների, այսինքն՝ այդ անցումը տեղի չի ունենում մեկ թռիչքով, կարճ ժամանակում: Ընդհանուր առմամբ, եթե գործող ռեժիմը, վարչաձևը տապալվում է ուժի միջոցով, ապա դժվար չէ տեսնել, համոզվել, որ ժողովրդավարությունը նման կարգի հասարակարգերում դեռևս չի կարող հաստատվել: Անհրաժեշտ են վերևից իրականացվող մեծ վերափոխումներ և ժամանակ, որոնք միշտ չէ, որ հաջողություններ են բերում: Իսկ երբ երկրի ղեկավարությունը հանդես է բերում ողջամտություն և իրականացնում վերափոխումներ, դրանք երբեմն հանդիպում են դիմադրության պահպանողական ուժերի կողմից:

Ինչ խոսք, ժողովրդավարության հաստատման ամենակայուն, ամենահիմնարար ճանապարհը հասարակության մեջ աստիճանական վերափոխումներ իրականացնելն է: Այստեղ էլ դժվարությունն այն է, որ անհրաժեշտ է հաղթահարել նախկին վարչակարգից ժառանգություն մնացած բազմաթիվ չլուծված խնդիրներ: Իսկ այդ խնդիրների լուծումը և դժվարությունների հաղթահարումը հնարավոր է, եթե քաղաքական

բոլոր ուժերը ցուցաբերեն պետական մտածողություն և գնան փոխզիջումների։

Հասարակության սոցիալական զարգացմանը նպաստում է նաև իշխանությունների տարանջատումը, որը ժողովրդավարության կարևոր սկզբունքներից է։ Իշխանությունների տարանջատման գաղափարը համաշխարհային իրավական-քաղաքական մտքի փայլուն նվաճումներից մեկն է։ Այդ տեսության հիմքը դրել են 17-18-րդ դդ. մտածողներ Ջ. Լոքքը և Շ. Մոնտեսքյոն։ Այդ գաղափարն առաջ է քաշվել՝ խուսափելու ֆեոդալական միապետությունների չարաշահումներից և իշխանության կենտրոնացումից։ Հետագայում այդ սկզբունքներն ամրագրվել են 1787 թ. ԱՄՆ-ի, 1789 թ. Ֆրանսիայի սահմանադրություններում և այլն։

19-20-րդ դարերում իշխանության բաժանումը դիտվում էր որպես ժողովրդավարական պետությունների կարևոր և անքակտելի հատկանիշներից մեկը։ Այսօր աշխարհի համարյա բոլոր պետությունների սահմանադրություններն այս կամ այն ձևով ամրագրել են այդ սկզբունքը։ Դրա իմաստն այն է, որ մեկ միասնական պետական իշխանությունը չպետք է կենտրոնանա մեկ անձի կամ մեկ պետական մարմնի ձեռքում, դա հանգեցնում է բռնատիրության։ Իհարկե, չպետք է կարծել, որ այդ սկզբունքները լիարժեքորեն գործում են, հատկապես՝ քաղաքական կյանքում, սակայն իշխանությունների տարանջատման սկզբունքն այսօր էլ համարվում է հասարակության քաղաքական կայունության, սահմանադրական ճգնաժամերից խուսափելու կարևորագույն մեխանիզմներից մեկը։

Հասարակության սոցիալական զարգացման հետ սերտորեն առնչվում է նաև ազգայնականության և ժողովրդավարության գաղափարների կիրառումը, որոնք մրցակցող են։ Եթե ժողովրդավարությունը ավելի համընդհանուր և համամարդկային գաղափար է, որը տեսականորեն բոլոր ժողովուրդների համար պաշտպանում է ինքնորոշման հնարավորությունները, ապա ազգայնականությունն ունի «կղզիացած» բնույթ՝ գտնելով, որ ժողովուրդների տարբերությունը, տարբեր մշակույթների, ավանդույթների և ապրելակերպի արժեքներն ունեն ինքնուրույն, տեղական նշանակություն։ Ազգայնականությունն ունի փակ բնույթ, իսկ ժողովրդավարությունը՝ բաց։ Ազգայնականությունը մերժում է քաղաքացիության իրավունք տալ տվյալ տարածքի վրա ապրող



այլազգի մարդկանց՝ այն պատճառաբանությամբ, որ նրանք լեզվով, կրոնով, էթնիկ ծագմամբ տարբերվում են կառավարող ազգային խմբից։

Եթե բոլոր պետությունների սահմանները ճշտորեն համընկնեին այս կամ այն ժողովրդի ու ազգի բնակության վայրի սահմանների հետ, ապա ոչ մի խնդիր չէր լինի։ Սակայն գործնականում գաղթի և գաղութատիրության հետևանքով աշխարհի ժողովուրդներն այնքան են խառնվել, որ ազգային կամ էթնիկական մի խմբի համար պետության ընբռնումը որպես տուն միայն տվյալ ազգի համար, քիչ հավանական է։ Այս հարցը որոշակի առնչություն ունի նախկին Խորհրդային Միության և նրա պատմության հետ։

Արդի հայ ազգային քաղաքական կյանքը բավականին բարդություն ունի։ Այսօր առավել ևս անհրաժեշտ է իրատեսորեն գնահատել ժողովրդի, պետության, երկրի անցած ճանապարհը, որոշել, թե որքան է այն շեղվել բնականոն ուղուց։

Եվ քանի որ ժողովրդավարության հիմնարար սկզբունքներից մեկն ազատությունն է, ուստի դժվար չէ նկատել, որ շեղման գիծն անազատությունն է և ձգտումը ազատության։ Այդ իմաստով դժվար է գերագնահատել ՀՀ Անկախության հռչակագրի այն սկզբունքների նշանակությունը, որոնց իմաստը ազատությունը, ինքնուրույնությունը և անկախ պետականության ստեղծումն է։ Իսկ քանի որ համաշխարհային պատմության փորձը հաստատում է, որ անկախության ուղին դյուրին չէ, ուստի մեր ուղին ևս լի էր դժվարություններով, հաճախ նաև՝ հիասթափություններով, հուսախաբություններով և այլն։ Սակայն անչափ կարևոր է ուժ, կամք, հաստատակամություն գտնել՝ հավատարիմ մնալու որդեգրած սկզբունքներին։

Մեր հանրապետության ազգային քաղաքական կյանքում ներկայումս ծառացած են բազմաթիվ խնդիրներ, որոնցից հարկ է առանձնացնել պետական ինքնիշխանության ապահովման երաշխիքները, Արցախի հիմնախնդրի քաղաքական կարգավորումը, հանրապետության տնտեսական զարգացումը, ժողովրդի բարեկեցիկ կյանքի համար պայմանների ստեղծումը, ազգային անվտանգությունը, Սփյուռքի հետ կապերի ամրապնդումը, միջազգային արդյունավետ համագործակցության զարգացումը և այլն։

Այս խնդիրների լուծման երաշխիքներից մեկն ազգային միասնության ապահովումն է: Ազգային միասնությունը բարձրագույն քաղաքական արժեք է: Դրան հասնելու համար կարևոր են երկխոսությունը, հանդուրժողականությունը, փոխադարձ զիջումների պատրաստակամությունը, ընդդիմության օրինական իրավունքների, տեսակետների հարգումը, քաղաքական առճակատումներից, բախումներից խուսափելը և այլն, որոնք կարևոր սկզբունքներ են ազգային համերաշխության համար:

Հանրապետության ներկա քաղաքական կացության պայմաններում գլխավոր խնդիր է դառնում ազգային միասնությունը, այդ միասնությունը խարխլող վտանգի չեզոքացումը: Կարևոր է նաև ժողովրդի վստահությունը շահելը: Եվ որքան հասարակության, քաղաքական ուժերի կողմից շուտ գիտակցվի այդ խնդրի կարևորությունը, այնքան ավելի կայուն կլինի նաև ժողովրդավարության գործընթացը:

Կարևոր հարց է, թե արդյոք ընդունելի՞ է ժողովրդավարությունը զարգացող երկրների համար: Որոշ մասնագետների կարծիքով ժողովրդավարությունն ընդունելի չէ բոլոր ժողովուրդների համար, մասնավորապես այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Ռուսաստանը, Թուրքիան, Չինաստանը, Հնդկաստանը և այլն:

Ժողովրդավարությունն ընդունելի է համարվում միայն Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների համար: Հասկանալի է , որ նման տեսակետ ավելի շատ բնորոշ է Արևմուտքի տեսաբաններին:

Զարգացող երկրներում ժողովրդավարության հարցի հետ կապված՝ հարկ է ասել, որ այդ երկրները, սկսելով ժողովրդավարության ուղղությամբ վերափոխումները, հաճախ այն ավարտել են ռազմական հեղաշրջումով կամ քաղաքացիական պատերազմով: Իշխանության խնդիրն այդ երկրներում որոշվում է պատմական ավանդույթներով, անցյալի ժառանգությամբ և այլն: Որոշ ուսումնասիրողների կարծիքով էլ ժողովրդաիշխանությունը պիտանի չէ զարգացող երկրներին այն պատճառով, որ պետությունը թույլ է, խորհրդարանում աշխատող մարդկանց պակաս է զգացվում, այսինքն՝ ցածր է պրոֆեսիոնալիզմը, կուսակցությունները դեռևս հասուն, կազմակերպված չեն, իսկ պառլամենտարիզմն էլ դեռևս խոր արմատներ չունի: Նման կարգի երկրներում կաշառակերությունը մեծ չափով թափանցել է ընտրական և այլ համակարգեր, իսկ հասարակական կարծիքը դեռևս չի հասել բարձր մակարդակի և հասունության: Այդ ամենը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ ժողովրդի քաղաքական կուլտուրան բավական ցածր է և անհամապատասխանություն գոյություն ունի ժողովրդի հոգեբանության և ժողովրդավարական համակարգի միջև:



Նման երկրներում բոլոր կարգի հարցերը լուծվում են մեկ ձայնով, մեկ ղեկավարի կողմից, մեկ կարծիքով և այլն: Այս հարցում խնդիրն այն է, որ զարգացող երկրներում ժողովրդավարական բարեփոխումները պետք է իրականացվեն աստիճանաբար, մանավանդ եթե երկիրը կանգնած է ավելի մեծ, հիմնարար խնդիրների լուծման ճանապարհին:

Իրական, ճշմարիտ ժողովրդավարությունը չի հանգեցնում անարխիայի, անկայունության, հասարակության քայքայման, քաղաքացիական պատերազմի և այլն: Մինչդեռ ժողովրդավարության սահմանափակումը, խեղաթյուրումը, քաղաքական խաբկանքի միջոց դարձնելը, ժողովրդավարական կարգախոսներով ժողովրդին կերակրելը երկիրը հասցնում է ռազմական հեղաշրջման: Այլ կերպ ասած՝ ժողովրդավարական վերափոխումների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ երկրի պատմական ավանդույթները, ազգային մտածողությունը՝ մենտալիտետը, հոգեբանությունը, սոցիալ-քաղաքական և կուլտուրայի զարգացման մակարդակը և այլն:

Ժողովրդավարության իրականացումը հատկապես դժվարություններ ունի տնտեսապես թույլ երկրներում, որոնցում խորանում են սոցիալական հակասությունները, որտեղ թշնամություն է առաջանում բնիկների և ներգաղթյալների միջև: Նման երկրները ցանկանում են իրենց զերծ պահել այդ ներհոսքից: Օրինակ՝ Գերմանիան մեր հայրենակիցներից ազատվելու համար այսօր պատրաստ է հսկայական գումարներ ծախսել նրանց սովորեցնելու փոքր և միջին բիզնես, նոր տնտեսվարություն, գումարներ տրամադրել նոր գործ սկսելու համար՝ պայմանով, որ թողնեն երկիրը: Իսկ ինքն էլ կազատվի «օտար բեռից»:

Տնտեսական ճգնաժամերի պայմաններում խաթարվում է հավատը ժողովրդավարության և կառավարությունների նկատմամբ: Որպես կանոն, ժողովրդավարական քաղաքական վարչակարգը կարող է երկարատև գոյություն ունենալ և իրական դառնալ միայն զարգացած տնտեսության ու տնտեսական ժողովրդավարության առկայության դեպքում: Տնտեսական ժողովրդավարությունը հենվում է մասնավոր սեփականության և ազատ շուկայական հարաբերությունների, ազատ տնտեսվար-

ման սկզբունքների վրա: Ազատ շուկայական հարաբերությունները, առաջարկի և պահանջարկի «խաղը» նվազեցնում են տոտալիտար վարչակարգերի գործունեության հնարավորությունը: Մասնավոր սեփականությունը ցանկացած անձի համեմատական անկախության և ազատ գործունեության հնարավորություն է ապահովում:

Բաժնետոմսերի միջոցով սեփականության բաշխումը միլիոնավոր մարկանց հնարավորություն է տալիս դառնալ արդյունաբերական ձեռնարկությունների, առևտրական միավորումների փայատերեր` մասնակցելով կառավարչական որոշումների ընդունմանը, որը համարվում է ժողովրդավարության կարևորագույն չափանիշներից մեկը:

Փաստորեն, բնակչության զգալի հատվածներ բաժնետոմսերի միջոցով դառնում են սեփականատերեր և մասնակցում կառավարման գործընթացներին:

Տնտեսական ժողովրդավարության իրականացման, դրսևորման ձևերից մեկը խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման ժողովրդավարական մեթոդների կիրառումն է, որի դեպքում բանվորները դադարում են լինել սոսկ արտադրական գործընթացի մեխանիզմներից մեկը, այլ սկսում են այս կամ այն չափով մասնակցել ձեռնարկության ղեկավարման գործընթացին` ներկայացնելով սեփական տեսակետներն արտադրության այս կամ այն փուլի առնչությամբ: Վերջին տասնամյակներում արևմտյան պետություններում ընդունվել են օրենքները, որոնց համաձայն` ձեռնարկությունների վարչության նիստերին մասնակցելու իրավունք են ստանում բանվորական կոմիտեների ներկայացուցիչները, որոնք ունեն որոշման ձայնի իրավունք:

Տնտեսական ժողովրդավարության տարրերից են սոցիալ-տնտեսական իրավունքները, որոնք մարդու իրավունքների բաղկացուցիչ մասն են: Խոսքն առաջին հերթին վերաբերում է զբաղվածության, աշխատանքի, աշխատանքի վարձատրության հարցերին և այլն: Վերջին 50 տարիների համաշխարհային պատմությունը ցույց է տվել, որ ավտորիտար ռեժիմներից ժողովրդավարության անցման կարևոր երաշխիքներից մեկն էլ տնտեսական ժողովրդավարության կայացումն է:

Կարևոր հարց է մասնավոր սեփականության հարցը, որը թույլ է տալիս պետությունից անկախ քաղաքական ակտիվություն դրսևորել: Բայց նաև մասնավոր սեփականության օգտագործումը սահմանափակվում է նրանով, որ այն չպետք է սահմանափակի ուրիշների ազատությունը: Պարզ ասած` սեփականության օգտագործումը կարող է վերահսկվել օրենքով:



Մասնավոր սեփականության առկայությամբ է պայմանավորված իրական շուկայական հարաբերությունների գոյությունը: Շուկայական հարաբերությունները խարսխված են առաջարկի, պահանջարկի և մրցակցության վրա, որը հաճախ շատ խիստ ու անողոք է: Որպեսզի այն արդար ընթանա, ապահովի բոլորի շահերը, անհրաժեշտ է ժողովրդավարություն:

Ավելորդ չէ մեկ անգամ ևս նշել, որ ժողովրդավարությունը, որպես պետության և հասարակության կառավարման ձև, ծագել է Հին Հունաստանում` մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների պայմաններում, որն իր բարձրագույն դրսևորմանն է հասել կապիտալիստական հասարակարգի արտադրահարաբերությունների տիրապետման ժամանակ: Ժողովրդավարությունը պատվար է պետության մեջ տնտեսական մենաշնորհի հիման վրա ձևավորված խմբերի առաջացման համար: Տնտեսական մենաշնորհը, որոշակի պայմանների առկայության դեպքում, կարող է վերածվել որոշ կլանների քաղաքական իշխանության մենաշնորհի: Այս վտանգը հատկապես իրական է նախկին խորհրդային հասարակարգից շուկայական հարաբերությունների անցում կատարող երկրներում, այդ թվում և մեր հանրապետությունում:

Մեր հանրապետության փոքր տարածքը, բնակչության միատարրությունը, սակավահողությունը պարարտ հող են ստեղծում կլանային հիմքի վրա քաղաքական իշխանության մենաշնորհացման համար: Իսկ այդ հանգամանքը շատ վտանգավոր է և, վաղ թե ուշ, կարող է խախտել ժողովրդավարության հիմքերը և հաստատել բռնապետություն այդ կլանների կողմից: Այդ վտանգից խուսափելու միակ ճանապարհը` ժողովրդավարության հաստատումն է:

## Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը

Մարդու, անհատի իրավունքների համար պայքարը միշտ էլ հուզել է առաջավոր մարդկանց, որը, ինչպես վկայում է պատմությունը, հնարավոր է կենսագործել միայն ժողովրդավարության պայմաններում, քանի որ ժողովրդավարական հասարակարգը անհատներին տալիս է լայն քաղաքական ազատություններ և իրավունքներ, ինչպես նաև հնարավորություն՝ բավարարելու իրենց քաղաքական պահանջները:

Դրա համար նրանց անհրաժեշտ են բարձր քաղաքական կուլտուրա, ակտիվ քաղաքական գործունեություն և, որ կարևոր է, քաղաքական գործունեության համար հասունացած օբյեկտիվ պայմաններ:

Կարևոր է նաև ասել, որ ժողովրդավարությունը հենվում է քաղաքականապես գրագետ և իրազեկ քաղաքացիների վրա, որոնք հնարավորություն ունեն մուտք գործելու քաղաքական ու սոցիալական կյանքի ոլորտները և ակտիվորեն մասնակցելու հասարակության ընդհանուր կյանքին:

Ժողովրդավարությունը, որպես կանոն, ծաղկում է այն պետություններում, որտեղ մարդկանց համար ստեղծվում են պայմաններ և հնարավորություններ՝ անկաշկանդ ձևով արտահայտելու իրենց կարծիքներն ու տեսակետները: Մարդը բոլոր ժամանակներում էլ դրսևորում է իրեն հատուկ բանական, զգայական ու կամային որակներ և հանդես է գալիս որպես անհատ: Հետաքրքիր է ասել, որ Հին Աշխարհում մարդը համարվել է քաղաքական էակ (Արիստոտել), միջին դարերում՝ կրոնական էակ, վերածնության դարաշրջանում՝ բանական էակ, իսկ 20-21-րդ դարերում նորից վերականգնվում է հինը՝ քաղաքական էակ հասկացությունը:

Ժողովրդավարական հասարակարգերում հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր չափանիշը անհատների քաղաքական ակտիվությունն է, որը սոցիալական ակտիվության ձևերից մեկն է և ուղղված է իշխանության փոփոխմանը, պահպանմանն ու ամրապնդմանը:

Ակտիվության ձևերը տարբեր են՝ կուսակցությանն անդամագրվելը, աշխատանքը պետական իշխանության մարմիններում, մասնակցությունը հանրահավաքներին, ցույցերին, շարժումներին, երթերին և այլն: Նման ժողովրդավարությունը նշանակում է, որ կառավարությունը պետք է ծառայի ժողովրդին: Այսինքն՝ ժողովուրդը ժողովրդավար պե-



տության քաղաքացիներն են, ոչ թե ենթակաները: Եվ եթե պետությունը պաշտպանում է քաղաքացիների իրավունքները, ապա քաղաքացիներն իրենց հերթին փոխադարձաբար պետությանը ցուցաբերում են իրենց հավատարմությունը: Դա էլ նշանակում է, որ քաղաքականության անմիջական սուբյեկտը մարդ-անհատն է: Նաև հարկ է ընդգծել, որ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն անհրաժեշտ է ժողովրդավարության պահպանման համար: Յուրաքանչյուր ժողովրդավարական պետության մեջ քաղաքացիների հիմնարար ազատություններն ու իրավունքները, ինչպես նաև պարտականությունները, ամրագրված են տվյալ երկրի հիմնական օրենքում: Մի դեպքում դրանք հարգվում, պաշտպանվում են օրենքով, պետական կառույցների միջոցով, մյուս դեպքում կրում են ձևական բնույթ, ոտնահարվում և խախտվում են:

Առաջին քաղաքական-իրավական փաստաթղթերը, որոնք ամրագրեցին մարդու հիմնարար ազատությունները 1776 թ. ԱՄՆ-ի Անկախության Հռչակագիրն էր, 1787 թ. ԱՄՆ-ի Սահմանադրական օրենքն էր, 1789 թ. Մարդու և քաղաքացու իրավունքների Ֆրանսիական դեկլարացիան և այլն: Սակայն մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում պետությունների միջազգային համագործակցությունը սկսվեց միայն 20-րդ դարի 40-ական թթ. կեսերից: 1945 թ. ընդունվեց ՄԱԿ-ի կանոնադրությունը, 1948 թ.՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1981 թ.՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային պակտը, 1990 թ.՝ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան, 1996 թ.՝ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիան և այլն: Մարդու իրավունքների իրացման մեխանիզմը վերահսկելու նպատակով ստեղծվեցին միջազգային մարմիններ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը, որին 2006 թ. փոխարինեց Մարդու իրավունքների խորհուրդը, Մարդու իրավունքների կոմիտեն և տարբեր խմբերի իրավունքների պաշտպանության մյուս կոմիտեները:

Այսպիսով՝ իրավական պետության ու քաղաքացիական հասարակության ստեղծումը, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանումը, դեմոկրատական կարգի հաստատումը դուրս են գալիս ներպետական նշանակության խնդիրների շարքից և դառնում միջազ-

գային հանրության մտահոգության առարկա:

ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային հանրապետությունները բռնեցին ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման ուղին՝ իրենց երկրներում ստեղծելով մարդու իրավունքների պաշտպանության տարբեր մարմիններ: Մեր հանրապետությունում պաշտոնական մակարդակով գործում է ԱԺ Մարդու իրավունքների և ազատությունների հարցերի մշտական հանձնաժողովը, որը զբաղվում է ինչպես օրենսդրական գործունեությամբ, այնպես էլ քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկմամբ: ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում ստեղծվել է մարդու իրավունքների բաժին, որը հիմնականում զբաղվում է մարդու իրավունքների բնագավառում այլ պետությունների ու միջազգային կառույցների հետ փոխհարաբերություններով: Այդ իմաստով շատ կարևոր է Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ՄԱԿ-ին, Եվրախորհրդին, ԵԱՀԿ-ին և միջազգային այլ կազմակերպությունների: Դրանց շարքում հատկապես կարևորվում է Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների զարգացումը, որը եվրոպական հարևանության քաղաքականությունից (2004), աճել և 2009 թ. մայիսի 7-ին Պրահայում հրավիրված Եվրամիության հավաքում վեր է ածվել և դարձել միջազգային մի նոր համագործակցության, որը հայտնի է որպես «Արևելյան գործընկերություն», որն էլ նպատակ ունի էլ ավելի ամրապնդելու կապերը Եվրամիության երկրների հետ:

2004 թ. մարտի 1-ից Հանրապետությունում ստեղծվել և գործում է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որը շատ մեծ անելիքներ ունի մեր երկրում՝ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

Մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում զգալի ներդրում ունեն նաև ոչ կառավարական՝ հասարակական կազմակերպությունները, որոնցից են Առաջընթացի, Մարդու իրավունքների պաշտպանության և գթասրտության, Սախարովի անվան հայկական ֆոնդը, «Հուշամատյան» մարդու իրավունքների և այլ բարեգործական ընկերությունները, Հելսինկյան ասամբլեան և այլն:

Մարդու իրավունքների ճանաչումը, դրանց պաշտպանությունը 20-րդ դարի ամենակարևոր բարոյական նվաճումներից են: Միջազգային հանրությունը մարդու իրավունքների վերաբերյալ ընդունել է բազմաթիվ համաձայնագրեր և պայմանագրեր: Ժամանակակից աշ-



խարհում մարդու իրավունքների մասին պատկերացումների գլխավոր աղբյուրը դարձավ 1948 թ. դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»: Հետագայում՝ 1966 թ. ՄԱԿ-ը ընդունել է համընդհանուր հռչակագրում ամրագրված իրավունքների վրա հիմնված երկու միջազգային փաստաթուղթ. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր» և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր»: Աշխարհի պետությունների 2/3-ը ընդունել է այդ դաշնագրերը: ՄԱԿ-ը ընդունել է նաև Արձանագրություն միջազգային քաղաքացիական և քաղաքական պայմանագրի մասին, որն իրավունք է տալիս քաղաքացիներին դիմելու Մարդու իրավունքների կոմիտե, որն էլ վերահսկում է այդ պայմանագրի կատարումը:

Մյուս հարցը վերաբերում է նրան, թե ժողովրդավարական երկրներն ու հասարակությունները միմյանցից ինչպես և ինչով են տարբերվում: Դա կախված է նրանից, թե երկրներն ինչ միջոցներ են կիրառում մարդու իրավունքները պաշտպանելու համար: Աշխարհի պետությունների գերակշռող մեծամասնությունն ունի Սահմանադրություն, որտեղ արտացոլված է մարդու իրավունքների պաշտպանվածությունն ու երաշխավորվածությունը: Քաղաքացիները պետք է անարգել մուտք ունենան դատարան, ստանան իրավաբանական օգնություն և այլն:

Ժողովրդավարության լավագույն պաշտպանությունը հավատն է նրա սկզբունքների և նպատակների հանդեպ: Դա է պատճառը, որ մարդու իրավունքների և ժողովրդավարական քաղաքացիության բնագավառում ուսուցումը ձեռք է բերում սկզբունքային նշանակություն:

## Ժողովրդավարությունը և ընտրությունները

Անշուշտ, ընտրությունները հասարակության քաղաքական համակարգի կարևոր տարրերից են, որոնց միջոցով ձևավորվում, ստեղծվում են պետական իշխանության ներկայացուցչական մարմինները: Ընտրությունները նաև քաղաքացիների՝ հասարակության քաղաքական կյանքին մասնակցության ամենատարածված ձևերից մեկն է: Ընտրությունները կապված են ընտրական իրավունքի հետ, և պետք է նշել, որ տարբեր երկրներում ընտրություններն իրականացվում են տարբեր կերպ՝ կապված կոնկրետ քաղաքական իրադրության, տվյալ հասարակության քաղաքական ինստիտուտների և սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքի հետ: Մեզ համար, բնականաբար, ավելի հետաքրքիր է, թե ինչպիսի դրսևորում ունի այն մեր հանրապետությունում: Ժողովրդավարության և ընտրությունների հարցում անհրաժեշտ է հետևել հետևյալ սկզբունքներին.

1. իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա նոր քաղաքական համակարգի ձևավորում,
2. բազմակուսակցական համակարգի ձևավորում,
3. նոր քաղաքական էլիտայի ձևավորում, նրա լրացումը նոր կադրերով,
4. ընդդիմության ձևավորում,
5. քաղաքական ինստիտուտների կապը բնակչության հետ,
6. քաղաքական բախումների կարգավորումը խաղաղ ճանապարհով,
7. այլընտրանքային ծրագրերի հիման վրա քաղաքական իշխանության համար մղվող պայքարի և մրցակցության ապահովում, իրականացում,
8. իշխանությունների հնարավոր փոփոխությունների նկատմամբ պատրաստակամություն:

Կարևոր է նաև ընտրական համակարգի կազմակերպումը, պատգամավորական մանդատների բաշխումը և այլն: Համաշխարհային քաղաքական պրակտիկայում ամենատարածված ձևերն են մաժորիտար (մեծամասնական) և համամասնական ընտրական համակարգերը:

Մաժորիտար (ֆր.majoritaire, լատ.major-մեծամասնություն, մեծ)՝



մեծամասնական համակարգի հիմքում ընկած է մեծամասնության սկզբունքը, որի համաձայն՝ ընտրված է համարվում այն թեկնածուն կամ ցուցակում ընդգրկված թեկնածուները, ովքեր ստացել են ընտրողների ձայների 50%-ից ավելին:

Համամասնականը հիմնված է կուսակցությանը տրված ձայների և ստացած մանդատների համամասնական սկզբունքի վրա: Այս համակարգով անցկացվող ընտրությունները համարվում են խիստ կուսակցական. յուրաքանչյուր կուսակցություն ներկայացնում է թեկնածուների իր ցուցակը:

Յուրաքանչյուր ձևն էլ ունի իր առավելություններն ու թերությունները: Ընդհանրապես իդեալական ընտրական համակարգ չկա, ուստի խնդիրն այն է, որ երկիրը ձգտի, բնակչությունն էլ պատրաստակամություն ցուցաբերի ընտրական համակարգը կատարելագործելու: Ընդունված է ասել, որ հասարակության մեջ քաղաքական իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն էլ հանդիսանում է իշխանության միակ աղբյուրը: Այս հանգամանքը ժողովուրդն օգտագործում է երկու ձևով.

1. ուղղակի, անմիջական ժողովրդաիշխանություն, երբ ժողովուրդն ինքն է իրականացնում իր իշխանությունը՝ առանց ներկայացուցիչների
2. անուղղակի, ներկայացուցչական ժողովրդաիշխանություն:

Ուղղակի ընտրություններն ունեն ավելի ժողովրդավարական բնույթ: ժողովրդավարական քաղաքական համակարգի գլխավոր հատկանիշը կանոնավոր, մրցութային և մաքուր ընտրությունների անցկացումն է: Ընտրությունները լինում են հերթական և արտահերթ: Իսկ դրանք մրցութային են համարվում, երբ տարբեր կուսակցություններ, խմբեր, անհատներ ազատ կարող են դնել իրենց թեկնածությունները: Եթե պետական մեքենան պատկանում է մեկ կուսակցության, որը զանգվածային լրատվական միջոցները կարող է օգտագործել այն չափով, որ կարողանա ազդել հասարակական կարծիքի ձևավորման վրա, ապա ընտրությունները մաքուր համարել չի կարելի: Իսկ երբ ցածր է ընտրական կուլտուրան, ապա ընտրությունները ավելի մեծ չափով կարող են կեղծվել:

Մյուս հարցադրումն այն է, որ, եթե ժողովրդավարական քաղաքական վարչակարգի պայմաններում ընտրությունները կարևոր դեր են խաղում քաղաքական համակարգի կայունության համար, ապա ոչ ժո-

ղովրդավարական համակարգերում ընտրություններն էական տեղ չունեն հասարակության քաղաքական կյանքում: Դա է պատճառը, որ որոշ քաղաքագետներ գտնում են, որ ընտրությունները կարծես արտաքին պատրանք են ստեղծում քաղաքական որոշումների ընդունմանը քաղաքացիների մասնակցության վերաբերյալ: Մինչդեռ ժողովրդավարական ավանդույթներ և հաստատություններ ունեցող երկրներում ընտրություններն իսկապես էական դեր են խաղում հասարակության քաղաքական կյանքում:

Նորմալ, արդար ընտրություններն ապահովում են իշխանության խաղաղ անցումը քաղաքական մի խմբից մյուսին և նպաստում ներկայացուցչական համակարգի ձևավորմանը:

Ընտրությունները նաև քաղաքական լիդերների, պետական, հասարակական գործիչների, զանազան կուսակցությունների անձնական հատկանիշների, նրանց ծրագրերի նկատմամբ վստահության կամ անվստահության արտահայտությունն են:

Ընտրական իրավունքի սկզբունքներն ամրագրված են 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և այլ փաստաթղթերում:

Ժողովրդաիշխանության կարևոր ինստիտուտներից մեկը հանրաքվեն է: Այն ժողովրդի իշխանության իրականացման ուղղակի, անմիջական ձև է: Դրա միջոցով ընդունված որոշումները անբեկանելի են և ենթակա չեն վերանայման այլ օրենսդիր կամ վերահսկիչ մարմինների կողմից: Հանրաքվեները լինում են տարբեր տեսակի՝

1. սահմանադրական
2. համազգային
3. համապետական
4. տեղական, երբ լուծվում են տեղական նշանակության հարցեր, օրինակ՝ որևէ համայնքում ծագած որևէ խնդիր:

Հանրաքվեները լինում են նաև հաստատող կամ մերժող:

Խորհրդային Հայաստանում թեև Սահմանադրությամբ ամրագրված էր հանրաքվեի ինստիտուտը, սակայն այն երբեք չօգտագործվեց՝ մնալով որպես «մեռած նորմ»:

ԽՍՀՄ-ի և սոցիալիստական համակարգի փլուզման հետևանքով մեծացավ, կարևորվեց հանրաքվեների դերի նշանակությունը: Հանրա-



քվեի ինստիտուտը ՀՀ-ում առաջին անգամ օգտագործվեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին, երբ քվեարկության դրվեց ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցը: Երկրորդ անգամ Հայաստանում հանրաքվե անցկացվեց 1995 թ. հուլիսի 5-ին, որի ժամանակ ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, իսկ երրորդ անգամ՝ 2005 թ. նոյեմբերի 20-ին, որը վերաբերվում էր ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելուն:

Կարևոր գործոն է նաև քաղաքական լիդերության հարցը, որի տակ նկատի է առնվում ոչ միայն առանձին անձանց առաջնորդությունը, այլև «կոլեկտիվ» լիդերությունը և լիդերի՝ իր համախոհների հետ հարաբերությունները, լիդերի ծագումը, կարիերայի աստիճաններով նրա առաջ գնալու միջոցները և այլն:

Ժողովրդավարական երկրներում լիդերը պետք է կարողանա նվաճել հանրաճանաչություն և բնակչության լայն մասսաների վստահությունը, հատկապես այն կուսակցության անդամների և համախոհների շրջանում, որը նա ղեկավարում է:

Տոտալիտար լիդերը դրա կարիքը չունի: Նա կարող է շրջանցել կամ վերացնել ու չեզոքացնել իր հակառակորդներին ապարատային ինտրիգների (խարդավանքների) և բանսարկությունների միջոցով, կուսակցական պետական-քաղաքական բարձրաստիճան պաշտոնյաների մեջ ստեղծել հլու-հնազանդ կորիզ, որի վրա կարող է հենվել:

Ժողովրդավարական հասարակություններում քաղաքական լիդերը պարտավոր է ամեն օր քաղաքացիներին և ինքն իրեն ապացուցել իր գործունեության արդյունավետությունը, որն էլ այն գլխավոր միջոցը և լծակն է, որն ուղղորդում է նրան իր ամենօրյա գործունեության ընթացքում:

Կարևոր է նաև լեգիտիմության հարցը, որը նշանակում է իշխողների՝ կառավարելու իրավունքի ճանաչումը, նրանց հպատակվելու համաձայնությունը: Լեգիտիմությունը մարդկանց մեծամասնության հավատն է իշխանությունների և գործող ռեժիմի նկատմամբ: Լեգիտիմ իշխանությունը կարգավորիչ դեր է կատարում, որը, սակայն, չի կարելի շփոթել «կարգ ու կանոնի իշխանություն» հասկացության հետ, քանի որ վերջինը պահպանվում է ուժով:

## Հրապարակայնությունը և բազմակարծությունը որպես ժողովրդավարության կարևոր պայման

Հրապարակայնությունը կարևոր դեր ունի հասարակության տնտեսական, սոցիալական կյանքի մասին տեղեկություն տալու համար։ Առանց հրապարակայնության չկա և չի կարող լինել ժողովրդավարություն։ Այն ժողովրդավարության անհրաժեշտ նախադրյալն է։ Հրապարակայնության իրականացման ձևերից է ընտրովի և ժողովրդի առաջ հաշվետու գործադիր մարմինների ստեղծումը։

Զանգվածային լրատվության միջոցները հրապարակայնության ամենաներկայացուցչական ամբիոնն են, նրա իրականացման կարևոր ձևերից մեկը։ Հրապարակայնությունը կառավարման բոլոր մարմինների գործունեության համաժողովրդական վերահսկողության գործուն ձև է, համակարգի թերությունները շտկելու հզոր լծակ։ Հրապարակայնությունը հնարավորություն է տալիս երկրի քաղաքացիներին ճանաչել կյանքն իր բոլոր կողմերով, բարդություններով ու հակասություններով։ Կարևոր է նաև, որ իշխանությունները գտնվեն հասարակության մշտական վերահսկողության ներքո։ Իսկ այդ հնարավորությունը տալիս է հրապարակայնությունը։ Մինչդեռ անքաժանելի իշխանությունն անվերահսկելի է։

Քաղաքական հրապարակայնության ապահովումն ընկած է խորհրդարանների վրա։ Տարբեր երկրների խորհրդարանները քաղաքական հրապարակայնության գլխավոր հավաքավայրն են (ֆորում), նրա խտացված արտահայտությունն ու դրսևորումը։

Մամուլի ազատությունը հասարակական կարծիքի ստեղծման կարևոր ձևերից է և ապահովում է իշխանության հրապարակայնությունը։ Ազատ տեղեկատվություն ստանալն ու հաղորդելը հնարավոր է ժողովրդավարական երկրներում, իսկ այդ հարցում որոշիչ է ՁԼՄ-ների դերը, որոնք սոցիալական, տնտեսական, քաղաքական, ռազմական, միջազգային և այլ բնույթի տեղեկատվության հաղորդման ու մեկնաբանման ընթացքում հասարակական կարծիք են ձևավորում կամ էլ ազդում դրա ձևավորման վրա։

ՁԼՄ-ները շահագրգռված են վերահսկել պետական իշխանության համակարգում տեղ գտած թերությունները, բացթողումները, անօրինականությունները և դրանք ներկայացնել հասարակությանը։ Ժողովրդավարական վարչակարգի պայմաններում անհրաժեշտ է ազատ և անկախ մամուլի գոյությունը։



Պատահական չէ, որ ՁԼՄ-ները հաճախ անվանվում են «չորրորդ իշխանություն»։ Իսկ դա նշանակում է, որ, ինչպես և ցանկացած իշխանության համար, ՁԼՄ-ների համար էլ անհրաժեշտ է ստեղծել ազատ գործունեության պայմաններ, ինչպես նաև հակակշիռներ, որոնք կսահմանափակեն դրանց մուտքը մի շարք բնագավառներ, մասնավորապես պաշտպանության, հետախուզության, հակահետախուզության, նորագույն հայտնագործությունների, քաղաքացու անձնական կյանքի և այլ ոլորտներ։

Ժողովրդավարական երկրներում ՁԼՄ-ների դերը մեծանում է հատկապես կարևոր քաղաքական իրադարձությունների, օրինակ՝ ընտրությունների ժամանակ։ Տեղեկատվությունը նպաստում է մարդկանց մեջ պետական կառավարման գործընթացից օտարվածության զգացողության թուլացմանը և ապահովում կառավարություն-հասարակություն կենդանի կապը, հասարակական վերահսկողության մեխանիզմների ստեղծումը։

Հրապարակայնության կարևոր հարցերից մեկը քաղաքական ազատությունների հիմնահարցն է, առանց որոնց հնարավոր չէ ժողովրդավարությունը։ Իսկ ազատությունն իր հետ բերում է պատասխանատվություն, այլ ոչ թե ազատում է դրանից։

Առանց չափազանցության, քաղաքական ազատությունները ժողովրդավարության հենասյուներից են։ Այդ ազատությունները տրվում են տվյալ պետության քաղաքացիներին, և դրանց իրականացումն իրական կյանքում ուղեկցվում է իշխանությանն ու երկրի քաղաքական կյանքին քաղաքացիների անմիջական մասնակցությամբ։

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն ընդգրկում է այնպիսի իրավունքներ ու ազատություններ, ինչպիսիք են՝ խոսքի, մամուլի, ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի, հասարակական-քաղաքական և այլ միավորումների, միությունների, ասոցիացիաների ստեղծման և այլ ազատություններ։

Համոզմունքի ազատությունը միայն կարծիքների բազմազանություն չէ, այն նշանակում է նաև քաղաքական գործողությունների և կազմակերպությունների ազատություն։ Քաղաքացիներն իրավունք ունեն ստեղծելու քաղաքական կուսակցություններ, միություններ, հասարակական շարժումներ, արհեստակցական միություններ, հավաքել ստորագրություններ և այլն։ Քաղաքական ազատությունների վերաբեր-

յալ պետությունների միջազգային համագործակցությունն սկսվեց 20-րդ դարի 40-ական թվականներից: 1945 թ. ընդունվեց ՄԱԿ-ի կանոնադրությունը, 1946 թ.՝ Մարդու իրավունքների միջազգային բիլլը, 1948 թ.՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1950 թ.՝ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, 1990 թ.՝ Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիան և այլն:

Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, քանի որ այն նոր է մուտք գործել ժողովրդավարության ուղի, ուստի քաղաքական ազատությունները «դե ֆակտո» դեռևս ամբողջական կենսագործում չեն գտել հանրապետության քաղաքական կյանքում: Այս բնագավառում դեռևս մեծ են թերությունները և շատ՝անելիքները:

Հրապարակայնության ապահովման համար կարևոր է նաև հասարակական կազմակերպությունների առկայությունը: Ցանկացած ժողովրդավարական պետություն օրենքով թույլատրում է իր քաղաքացիներին ակտիվորեն մասնակցել հասարակական-քաղաքական կյանքին, ստեղծել հասարակական կազմակերպություններ, տարբեր բնույթի միավորումներ, շարժումներ և այլն: Դա հնարավորություն է տալիս մարդկանց ազատ և անարգել միավորվել՝ ըստ շահերի և նպատակների:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային նորմերին համապատասխան՝ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի մյուսների հետ ստեղծել ասոցիացիաներ, արհմիություններ՝ իր շահերը պաշտպանելու համար: Դրանք կարող են ստեղծվել կամավորության հիմքի վրա՝ իրավահավասարության, ինքնակառավարման, օրինականության, հրապարակայնության սկզբունքներով:

Միաժամանակ ստեղծվում է սերտ համագործակցություն ժողովրդավարական իշխանությունների և հասարակական կազմակերպությունների միջև՝ մասնակցելու հասարակական գործերի կառավարմանը, տնտեսական և սոցիալական կյանքին: Իրավական պետությունը քաղաքական համակարգում համագործակցում է հասարակական կազմակերպությունների, ֆորմալ շարժումների, աշխատավորական կոլեկտիվների հետ՝ նպատակ ունենալով կոորդինացնել նրանց գործունեությունը և աշխատանքները:

ՀՀ 1991 թ. «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին», 1996 թ. «Հասարակական կազմակերպությունների մասին» ընդունած օրենքները, 2001-2002 թթ. դրանցում կատարված փոփոխությունները ու լրացումները սահմանում են բոլոր կազմակերպությունների գործունեության հիմնական սկզբունքները ու ուղղությունները: Սակայն ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածներով այդ իրավունքները սահմանափակվում են որոշ անձանց համար՝ զինված ուժերում, իրավապահ մարմիններում, արդարադատության, ներքին գործերի, ազգային անվտանգության մարմիններում, դատախազությունում, պետական արբիտրաժում, մաքսային ծառայությունում, բանկային համակարգում և այլն: Նման որոշումը նպատակ ունի ապաքաղաքականացնել այդ մարմինները, որպեսզի դրանք չներգործեն քաղաքական գործընթացների վրա: Այդպիսին է քաղաքակիրթ աշխարհի օրենքը, քաղաքական կյանքի առանձնահատկություններից մեկը: Ներկայումս Հայաստանում գործում է ավելի քան 2000 հասարակական կազմակերպություն:

Հրապարակայնության առումով կարևոր դեր ունեն նաև քաղաքական կուսակցությունները: Կուսակցությունները ներկայիս ըմբռնումով հանդիսանում են հասարակական կյանքի համեմատաբար երիտասարդ ինստիտուտներից մեկը: Մինչև ժամանակակից զանգվածային քաղաքական շարժումների, քաղաքական կուսակցությունների ձևավորումը, կուսակցություն արտահայտությունը նշանակում էր միմյանց հետ մրցակցող խմբեր, որոնք կամ գործում են իշխանության ոլորտում, կամ էլ ազդում են իշխանության վրա: Ոչ ստրկատիրական, ոչ էլ ֆեոդալական հասարակարգերում կուսակցություններ որպես այդպիսիք, հատկապես զանգվածային առումով, չեն եղել: Դրանք առաջացել են բուրժուական կարգերի պայմաններում, բուրժուական հեղափոխությունների նախօրերին, դրանց ընթացքում, ինչ խոսք, նպատակ ունենալով պաշտպանելու հասարակության այս կամ այն խմբի, խավի շահերը:

Արդի քաղաքական զանգվածային կուսակցությունները, որոնք գործում են հասարակական կյանքում և դարձել նրա անբաժանելի մասը, առաջացել են Եվրոպայում 19-րդ դարի երկրորդ կեսին:

Քաղաքական կուսակցությունների պատմության գործունեության վերաբերյալ եղած գիտական աշխատություններում (Մաքս Վեբեր) դրանք բաժանվում են մի քանի փուլի՝

1. կուսակցությունը որպես արիստոկրատական խմբավորում,
2. կուսակցությունը որպես քաղաքական ակումբ,
3. ժամանակակից զանգվածային կուսակցություններ:

Այդպիսի փուլ հատկապես անցել են անգլիական կուսակցությունները, իսկ մնացածները հանդես են եկել ավելի ուշ և միանգամից ձևավորվել են որպես զանգվածային կուսակցություններ: Քաղաքական կուսակցությունները հասարակության քաղաքական համակարգի կարևորագույն տարրերից են: Դրանք կամավոր և կայուն քաղաքական կազմակերպություններ են, որոնք միավորվում են որպես մարդկանց սոցիալական, քաղաքական, տնտեսական, ազգային, մշակութային ընդհանուր շահերով ու գաղափարներով ձևավորված կազմակերպություններ: Միաժամանակ քաղաքական կուսակցությունները այս կամ այն սոցիալական խմբի կամ մի քանի խմբերի ամենից ավելի գիտակից, կազմակերպված մասն են: Կուսակցությունների հիմնական նպատակը քաղաքական իշխանության նվաճումն է, պահպանումը կամ դրան մասնակցելը: Այսինքն՝ քաղաքական կուսակցությունը քաղաքական գործընթացի մասնակիցն է, բայց նա չպետք է միայնակ իշխի: Կուսակցությունների կողմից քաղաքական իշխանությանը մասնակցելը իրականացվում է, երբ ընտրություններում ստանում են անհարժեշտ քանակությամբ ձայներ և իրավունք ստանում մասնակցելու իշխանական մարմինների ձևավորմանն ու կազմմանը:

Այդ իմաստով էլ ժողովրդավարության հենասյուներից է տվյալ երկրում կուսակցությունների ազատ և անկաշկանդ գործունեությունը: Առանց նման գործընթացի հնարավոր չէ ապահովել կարծիքների, շահերի բացահայտումը, նրանց ներդաշնակումը, ժողովրդավարական կարգերի լեգիտիմությունը, քաղաքական ուժերի, նրանց լիդերների ընտրության հնարավորությունը, ինչպես նաև իշխանության ղեկի մոտ կանգնած կուսակցությունների հերթափոխումը:

Քաղաքական կուսակցություններն իրենց ներկայացուցիչների միջոցով ժողովրդավարության պայմաններում ձեռք են բերում պետական պաշտոններ ստանալու իրավունքը: Մեծամասնական լինելու դեպքում կառավարության համար առաջադրում են քաղաքական ծրագրեր: Իսկ եթե ընդդիմադիր են, ապա համախմբում են տարբեր շահախնդիր խմբերին ընդհանուր քաղաքական ծրագրերի շուրջ և պայմաններ ստեղծում հասարակության մեջ քաղաքական բանավեճերի համար:



ժողովրդավարության պայմաններում քաղաքական կուսակցությունները նույնքան բազմազան են, որքան այն հասարակությունները, որտեղ նրանք գործում են: Բազմակուսակցական խորհրդարանական համակարգերում կուսակցությունները կարող են լինել ուժեղ կարգապահությամբ կազմակերպություններ:

ՀՀ-ում քաղաքական կուսակցությունները ձևավորվել են հիմնականում 1988 թ.-ից հետո ընկած ժամանակաշրջանում: ՀՀ Արդարադատության նախարարության տվյալներով՝ 1998 թ. ապրիլի 1-ի դրությամբ հանրապետությունում գրանցվել են 64 քաղաքական կուսակցություններ, ավելի քան 2000 հասարակական կազմակերպություններ:

Ներկայումս քաղաքակիրթ երկրներում ընդունված է այն սկզբունքը, որ ժողովրդավարական քաղաքական համակարգերը կարող են գոյատևել և զարգացում ապրել քաղաքական ընդդիմության առկայության պայմաններում: Ընդ որում, դա ամենից դժվար ընդունելի գաղափարներից մեկն է, հատկապես այն ազգերի ու ժողովուրդների համար, որոնց մոտ իշխանության փոխանցումն ավանդաբար բռնության միջոցով է տեղի ունենում: Այս գաղափարն անչափ կենսական է և նշանակում է, որ ժողովրդավարական կարգերում բոլոր կողմերը մեկ ընդհանուր պարտավորություն են կիսում նրա արժեքների պահպանման համար: Քաղաքական մրցակիցները պետք է հանդուրժեն միմյանց և գիտակցեն, որ յուրաքանչյուրն օրինական ու կարևոր դեր ունի կատարելու:

Հակառակ այն կարծիքին, թե քաղաքական ընդդիմությունը վատառողջ երևույթ է, երկիրն ապակայունացնող գործոն, պետք է գիտակցել, որ այն ունի կառուցողական դեր: Ճիշտ է նաև այն, որ քաղաքական ընդդիմության գործելակերպն ուղիղ համեմատական է իշխանությունների գործողություններին: Եվ բազմակուսակցությունը անխուսափելիորեն ենթադրում է նաև ընդդիմություն: Հետաքրքիր է բերել հետևյալ փաստը և ասել, որ դեռևս 18-րդ դարի կեսերին "Նյու-Յորք" թերթը գրում էր, որ ընդդիմությունը ոչ միայն անհրաժեշտ է ազատ, ժողովրդավարական կառավարումների մեջ, այլ նաև համարվում է մեծագույն ծառայություն հասարակությանը: Միաժամանակ ընդդիմությունը համարվում է հանրության կյանքն ու հոգին, նրա անբաժանելի մասը: Եվ դեռ այդ ժամանակներից Արևմուտքում ձևավորվեց այն համոզումը, որ քաղաքական ընդդիմությունը հանրային ազատությունները երաշխավորող, ուժի չարաշահումները հակակշռող ինստիտուտ է:

Քաղաքական ընդդիմությունը կարող է լինել միակողմանի և երկկողմանի: Միակողմանի է, երբ ընդդիմադիր բոլոր կուսակցություններն իշխանությունների նկատմամբ ունեն միասնական դիրքորոշում, երկկողմանի, երբ ընդդիմադիր կուսակցությունները չեն կարող միավորվել: Մեր հանրապետությունում այսօր գործող իշխանություն-ընդդիմություն հարաբերություններում ավելի շատ իշխում է անհանդուրժողականության մթնոլորտը, միմյանց մերժելու հոգեբանությունը, որի հաղթահարումը հսկայական ջանքեր և ժամանակ է պահանջում:

Իսկ շահերի կամ ճնշման խմբերը, ի տարբերություն կուսակցությունների, նպատակ չեն հետապնդում իշխանություն ստանալ, այլ ձգտում են այս կամ այն ձևով ազդել պետական իշխանության մարմինների վրա, որպեսզի նրանք ընդունեն սոցիալական և սոցիալ-քաղաքական տարբեր խմբերի շահերին համապատասխան որոշումներ: Որպես շահերի կամ ճնշման խումբ կարող է հանդես գալ ցանկացած կազմակերպություն, որը սեփական շահերի պաշտպանության նպատակով ակտիվ "ճնշման" գործունեություն է ծավալում:

Սակայն դրանով զբաղվում են նաև հատուկ մասնագիտական գրասենյակներ, որոնք վճարով կատարում են այս կամ այն կազմակերպության պատվերը:

Հիմնական շահերի խմբերը գլխավորապես ներկայացնում են արհմիությունները, արտադրության տարբեր ոլորտների աշխատողները, արդյունաբերողները, գյուղացիական միությունները և այլն: Բազմազգ երկրներում կան ազգային փոքրամասնությունների շահերը պաշտպանող խմբեր, օրինակ՝ հրեական, հայկական, հունական և այլ լոբբիները ԱՄՆ-ում և աշխարհի տարբեր երկրներում: Թուրքիան նույնիսկ հաճախ ԱՄՆ-ում վարձում է առանձին լոբբիստական կազմակերպություններ: Լոբբիզմը (անգլերեն lobby-կուլուար բառից է առաջացել), հատկապես տարածված է ԱՄՆ-ում, որն իրենից ներկայացնում է օրենսդրական մարմիններին կից խոշոր մոնոպոլիաների, գրասենյակների և գործակալությունների համակարգ, որն ուղղակի ճնշում է գործադրում (ընդհուպ՝ կաշառելը) օրենսդիրների և պետական աստիճանավորների վրա՝ հանուն մոնոպոլիաների շահերի:

Լոբբիստական կազմակերպություններն "աշխատում են" պետական իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի՝ խորհրդարանի, կառավարության, նախագահի աշխատակազմի հետ և այլն: Այդ աշխա-



տանքը կարող է լինել ինչպես օրինական (ֆինանսական օժանդակություն, տեղեկատվություն, խորհրդատվություն, նամակների, հեռախոսազանգերի կազմակերպում և այլն), այնպես էլ հակաօրինական: Այդ գործունեությամբ լոբբիստական խմբերը, փաստորեն, անհնար են դարձնում մյուս խմբերի որոշումների մենատիրության հաստատումը:

Այս հարցի հետ է կապված նաև քաղաքական ճգնաժամի դրսևորումը, որն արտահայտվում է գոյություն ունեցող հակամարտությունների խորացմամբ, սրմամբ, կառավարող շրջանների նկատմամբ ժողովրդի համընդհանուր դժգոհությամբ: Ճգնաժամերը նախ և առաջ պայմանավորված են պետությունից և իշխանության մարմիններից զանգվածների օտարմամբ:

Ինչպես հակամարտությունները, այնպես էլ ճգնաժամերը բազմաբնույթ են: Դրանք ընդգրկում են քաղաքականության, իշխանության, կառավարության տարբեր ոլորտները: Ճգնաժամերը կարող են ի հայտ գալ, երբ պետությունը և նրա առանձին մարմիններն անընդունակ են դառնում իրականացնելու իրենց ֆունկցիաները, երբ իշխանությունը կաթվածահար է, իսկ օրենքները չեն գործում, երբ տարածվում են քաղաքական համակարգի արժեքը ժխտող գաղափարներ, երբ բացահայտ կամ գաղտնի ընդդիմադիր գործունեություն է ծավալվում՝ ուղղված առաջին հերթին ուժային կառույցների վերացմանը, ապա քաղաքական համակարգի և պետության դեմ:

Քաղաքական ճգնաժամի պատճառ կարող է դառնալ նաև ժողովրդի կենսամակարդակի անկումը, ազգային, կրոնական հիմնահարցի սրումը և այլն: Քաղաքական ճգնաժամի ծագման և լուծման մեջ կարևոր դեր են խաղում հասարակության մեջ ժողովրդավարության զարգացման, նրա ղեկավարության հմտության աստիճանը, ժողովրդի սոցիալական ապահովությունը և այլն: Ճգնաժամերը լինում են ներքաղաքական և միջպետական:

Քաղաքական ճգնաժամը բավական ծանր իրողություն է հասարակության կյանքում, սակայն տարբերվում է համընդհանուր աղետից, երբ տեղի է ունենում տվյալ համակարգի լրիվ արգելակում: Ճգնաժամերը կարող են հիմք հանդիսանալ տվյալ քաղաքական համակարգը զարգացնելու կամ էլ նոր համակարգ ստեղծելու համար:

Քաղաքական ճգնաժամերը հաղթահարելու, լուծելու եղանակներից մեկը սոցիալական հեղափոխությունն է, որը շատ թանկ է նստում

հասարակության վրա: Մյուս եղանակը, որը շատ տարածված է, վերափոխումներն են, որն ավելի արդյունավետ է: Սակայն ընդհանուր համաձայնության հասնելու համար կառավարող ուժերից պահանջվում է մեծ ճկունություն ու վարպետություն, իսկ բոլոր հարցերը պետք է լուծվեն բանակցությունների, զիջումների, կոնսենսուսի հիման վրա: Այս եղանակի բարդությունն այն է, որ պետք է ընտրել բոլոր կողմերի համար ընդունելի տարբերակ:

Այսպիսով, քաղաքական հակամարտություններն ու ճգնաժամերը դրամատիկական պահեր են յուրաքանչյուր հասարակության պատմության մեջ: Նրանք կարող են մի կողմից ապակայունացնել իրավիճակը, մյուս կողմից՝ հասարակության զարգացման նոր փուլի հիմք դառնալ: Նրանք հասարակության մեջ կուտակված կրքերի արտաժայթքման խողովակի դեր են կատարում, որ նորմալ հունով ընթանա հասարակության զարգացումը:

Իսկ թե որքանով դա կհաջողվի, մեծ չափով կախված է իշխանության և ընդդիմադիր ուժերի հեղինակությունից, ժողովրդի շրջանում իրենց հարցադրումների նկատմամբ հավատի ամրապնդումից, վստահությունից: Հակառակ դեպքում ժողովուրդը հաճախ հիասթափվում է ոչ միայն իշխանություններից, այլ նաև ընդդիմությունից, որը հաճախ հրապարակայնությունն օգտագործում է ժողովրդին իր կողմը գրավելու, ձայներ ստանալու համար, բայց, գալով իշխանության, շեղվում է իր նախկին խոստումներից և ստեղծում նոր անվստահության մթնոլորտ ժողովրդի և իշխանությունների միջև:

Բայց, բոլոր դեպքերում, առանց հրապարակայնության, առանց երկրի, ժողովրդի, իշխանությունների առջև ծառացած խնդիրները հրապարակավ քննարկելու, առանց ժողովրդին այդ ամենին մասնակից դարձնելու հնարավոր չէ երկրում ստեղծել կայուն, վստահելի մթնոլորտ և բոլոր ուժերով, այդ թվում և ընդդիմադիր, լուծել երկրի առջև ծառացած խնդիրները: Ուստի անժխտելի է, որ այդ հիմնահարցերի լուծման գործում իր դերն ունի նաև հրապարակայնությունը, երբ հասարակությունը, ինչպես ափի մեջ, տեսնում է երկրում տեղի ունեցող իրադարձությունները, մասնակից է դրանց և իր ներդրումն է բերում այդ խնդիրների լուծմանը:



## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

Խորհրդային Միության և համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզումը, նորանկախ պետությունների առաջացումը աշխարհում ստեղծեցին նոր իրավիճակ, ուժերի նոր հարաբերակցություն, երկրների, պետությունների փոխհարաբերությունների ու զարգացման համար նոր հնարավորություններ և ուղիներ:

Առանց չափազանցության՝ այդ երևույթը համաշխարհային նշանակություն ունեցող խոշոր աշխարհաքաղաքական իրադարձություն է, որով երկար ժամանակ կանխորոշվում են աշխարհում կատարվող զարգացումներն ու գործընթացները: Այդ դարակազմիկ, խոշոր փոփոխությունների շարքում անչափ կարևոր են հասարակական-քաղաքական կյանքի այն նոր գործընթացները, որոնք գլխավորապես վերաբերում են նորանկախ երկրներին և ընդգրկում այնպիսի հարցեր, ինչպիսիք են ամբողջատիրական համակարգից ժողովրդավարության անցումը, ազատական տնտեսաձևի, շուկայական հարաբերությունների և ազատ մրցակցության զարգացումը, միակուսակցական համակարգից բազմակուսակցության անցումը, անհատի ազատությունը և բազմաթիվ նոր արժեքների որդեգրումը, որոնք սերտորեն առնչվում և կապված են աշխարհում կատարվող նոր գործընթացների՝ երկրների, պետությունների սերտաճման (ինտեգրման), համաշխարհայնացման (գլոբալիզացիա) և այլնի հետ:

1980-ական թթ. կեսերին ԽՍՀՄ-ում սկսված այսպես կոչված գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությունը ենթադրում էր, որ երկրում հասունանում էին այնպիսի նոր երևույթներ, որոնք ենթադրում էին, որ նախկին ձևով երկիրը կառավարել այլևս հնարավոր չէր, քանզի այն խոչընդոտում էր դրա զարգացմանը: Երկրում ձևավորվում էր մի նոր սերունդ, հասարակական մտածողության մի նոր մակարդակ, որն այլևս չէր ցանկանում ապրել իր դարն ապրած արժեքներով, ամբողջա-

[1] Սույն հոդվածը որոշ փոփոխություններով տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների 2006, թիվ 3- ում, էջ 3-21

տիրական համակարգով, որոնք սահմանափակում, արգելում էին ազատ խոսքը, միտքը, մտածողությունը, քաղաքական այլախոհությունը, բազմակարծությունը (պլյուրալիզմ), ժողովրդավարական արժեքները և այլն:

Ժողովուրդների ձգտումը դեպի կառավարման առաջավոր ձևերը, մարդկային համագործակցության ազատ, ժողովրդավարական հարաբերությունները ունեն խոր արմատներ, ակունքներ և որոշակի ավանդույթներ:

Ինչպես գրում է ամերիկյան նշանավոր քաղաքագետ Ռոբերտ Դալը, հնագույն ժամանակներից սկսած՝ մարդիկ մտածել են քաղաքական այնպիսի համագործակցության մասին, որի անդամները քաղաքական հարաբերություններում մեկը մյուսի նկատմամբ վերաբերվում են որպես հավասարների, հավասար իրականացնում են գերագույն իշխանությունը և տիրապետում են այն բոլոր հնարավորություններին, միջոցներին (ռեսուրսներ) և ինստիտուտներին, որոնք անհրաժեշտ են ինքնակառավարման համար[1]:

Եվ չնայած այն հանգամանքին, որ ժողովրդավարական կառավարման դրսևորումներն իրենց արտացոլումն են գտել դեռևս Ք.ա. V դարում, հին հունական և հռոմեական քաղաք-պետություններում, որոնք մարդկային քաղաքական հնարավորությունների զարգացման համար դարակազմիկ երևույթ էին, այնուամենայնիվ, փոքրիկ հյուլե և չնչին փոքրամասնություն էին ողջ մարդկության մասշտաբների համեմատ: Այդ բոլորով հանդերձ՝ մարդկության զարգացումը, նրա ողջ պատմությունը վկայությունն ու ապացույցն են այն կարևոր գործոնի, որ անցումը կառավարման ժողովրդավարական սկզբունքների՝ համամարդկային ձգտում է:

Այսօր էլ արդիական է հնչում Աբրահամ Լինքոլնի հանրահայտ ձևակերպումը դեմոկրատիայի մասին, ըստ որի, ժողովրդավարությունը՝ ժողովրդի կառավարումը ժողովրդի կողմից և ժողովրդի համար համակարգ է, որը երբեք չի վերանա Երկրի երեսից[2], դարձել է կարծես թե գրեթե բոլոր երկրների համար դրան ձգտելու և դրան հասնելու չափանիշ:

---

[1] Տե՛ս **Даль Р.**, *Демократия и ее критики, М., Росспэн, 2003, стр. 7.*

[2] Նույն տեղում, էջ 358 (տե՛ս նաև «Ինչ է ժողովրդավարությունը», Միացյալ Նահանգների Տեղեկատվական Ընկերություն, հուլիս, 1992, էջ 4):



Հասարակության կառավարման ժողովրդավարական համակարգը սերտորեն կապված է քաղաքական կուսակցությունների, աշխարհում տեղի ունեցող քաղաքական նոր գործընթացների, նոր փոփոխությունների հետ:

Այդ իմաստով մեր հանրապետության քաղաքական կյանքը այսօր խորապես տարբերվում է ոչ վաղ անցյալի կյանքից: Դրան բնորոշ են միանգամայն նոր երևույթներ, նոր արժեքներ, որոնք անհամատեղելի և անընդունելի են այն ժամանակաշրջանի հետ, երբ խորհրդային կյանքի բոլոր նորմերը, հասարակական-քաղաքական կյանքի բոլոր գործընթացները ղեկավարվում էին միանգամայն այլ կանոններով, այլ սկզբունքներով, որոնցից շեղվելը համապատասխան մարմինների կողմից գնահատվում էր բավական խտացված գույներով՝ շատ հաճախ ընկնելով ծայրահեղությունների մեջ:

Ահա թե ինչու նորանկախ մեր հանրապետության քաղաքական կյանքի անժխտելի ձեռքբերումներից մեկը՝ շատ անկատարություններով, թերություններով հանդերձ, ամբողջատիրական, միակուսակցական համակարգից ժողովրդավարության և բազմակուսակցականության անցումն է, հայ ավանդական կուսակցությունների հայրենիք վերադառնալն է, նրանում ազատ գործելու հնարավորությունն է, հանրապետության կյանքին ակտիվորեն մասնակցելն է և այլն:

Չնայած քաղաքական կուսակցությունների պատմությունը խոր ակունքներ և անցյալ չունի՝ ընդամենը մի քանի դար, այնուամենայնիվ, դրանք մարդկային քաղաքակրթության կարևորագույն նվաճումներից են և համարվում են ժամանակակից հասարակական-քաղաքական կյանքի անհրաժեշտ, անբաժանելի ինստիտուտներից և ձեռքբերումներից մեկը:

Քաղաքական կուսակցությունը հասարակական-քաղաքական կազմակերպություն է, որը պայքարում է քաղաքական իշխանության համար, ինչպես նաև մասնակցում քաղաքական իշխանության կայացմանը:

Քաղաքական կուսակցությունների ձևավորմանը նախորդել է քաղաքական խմբերի մրցակցությունը, որոնք համախմբվել են ազդեցիկ ընտանիքների կամ էլ ճանաչված լիդերների շուրջ, որն էլ երկար ժամանակ քաղաքական պատմության կարևոր գծերից և առանձնահատկություններից մեկն է:

Ինչ վերաբերում է ժամանակակից քաղաքական կուսակցություններին այն իմաստով, ինչը մենք այսօր ընկալում ենք, ապա դրանք առաջացել են Եվրոպայում և ԱՄՆ-ում XIX դ. սկզբին: Ինչ խոսք, կուսակցությունների ձևավորումը բարդ գործընթաց է. սկզբնական շրջանում դրանք ձևավորվել են ընտրությունների ժամանակաշրջանում և չեն ունեցել իրենց մշտական տեղական կազմակերպությունները, չեն հրավիրել իրենց մշտական համագումարները, կոնֆերանսները, չեն ունեցել կուսակցական խիստ կարգապահական կանոններ և այլն:

Նման կանոններով կուսակցությունների հանդես գալը կապված է Եվրոպայում XIX դ. առաջին կեսին կազմակերպված բանվորական զանգվածային շարժումների հետ: «Քաղաքական կուսակցություններ» հասկացությունը փաստորեն հանդես է եկել XIX դ. ներկայացուցչական ինստիտուտների և ընտրական իրավունքի տարածման հետ: Իսկ արդեն XIX դ. վերջին քաղաքական կուսակցությունները դարձան երկրի, հասարակության քաղաքական կյանքի կարևորագույն և անբաժանելի մասերից մեկը: Օրինակ, եթե 1861 թ. Մեծ Բրիտանիայում պառլամենտական ընտրություններին կուսակցությունները ընդհանրապես չեն մասնակցել, ապա արդեն մոտ մեկ դար հետո՝ 1951 թ., երկրի բարձրագույն իշխանական կառույցներում չի ընտրվել ոչ մի հավակնորդ, որը կախված չլիներ որևէ կուսակցությունից:

Պատմագիտության մեջ որոշակի ճանաչում է ստացել քաղաքական կուսակցությունների առաջացման ժամանակագրական պարբերացումը, որն ավելի շատ կապված է գաղափարական կողմնորոշման հետ: Օրինակ, ընդունված է ասել, որ լիբերալիզմը (ազատականությունը) և լիբերալ կուսակցություններն առաջացել են ֆեոդալական կարգերի դեմ պայքարում:

Եվրոպայում XIX դ. կեսերին լիբերալները, փաստորեն, առաջիններից էին, որ ստեղծել են սեփական գաղափարախոսությամբ իրենց կուսակցությունները, ինչպես նաև իրենց ֆրակցիաները խորհրդարանում: Նման կուսակցություններից էին առաջադիմականները Գերմանիայում, լիբերալները Բելգիայում, պահպանողականները Անգլիայում՝ «Պահպանողական ակումբ» անունով և այլն: Եվ եթե սկզբում նրանք իրենց նույնիսկ կուսակցություն չէին անվանում, այլ ավելի շատ համախոհների միավորումներ էին, ապա ընտրական իրավունքի հետագա ընդլայնումը դարձավ անհրաժեշտություն՝ կազմակերպորեն է՛լ



ավելի ամրապնդելու կուսակցությունները:

Ֆրանսիական հեղափոխությունը համարվում է բեկումնային ժամանակաշրջան և բեկումնային փուլ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու ժամանակաշրջանի համար և նաև մեծ ազդակ՝ Եվրոպա մայրցամաքում տարբեր բնույթի պահպանողական խմբավորումների առաջացման համար, որոնք XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին ձևավորվեցին որպես պահպանողական կուսակցություններ՝ ի հակակշիռ լիբերալ կուսակցությունների: Իսկ արդեն բանվորական կուսակցություններն առաջացան կապիտալիստական համակարգի դեմ պայքարում, ագրարային կուսակցությունները հանդես եկան որպես ինդուստրիալ զարգացմանը հակակշիռ ուժ, քրիստոնեական կուսակցությունները՝ հակակղերական շարժումների դեմ պայքարում, կոմունիստական կուսակցությունները՝ սոցիալ-դեմոկրատների դեմ պայքարում և վերջապես ֆաշիստական կուսակցությունները՝ ընդհանրապես դեմոկրատիայի դեմ պայքարում և այլն:

Դժվար չէ ընկալել և տեսնել, որ կուսակցությունները հանդես են եկել որպես հասարակության որոշակի սոցիալական խավերի, խմբերի շահերի պաշտպաններ: Միաժամանակ հարկ է նաև ընդգծել, որ կուսակցությունները հանդես են եկել տվյալ ժողովրդի համար պատմական կարևոր, բեկումնային ժամանակաշրջանում, երբ երկրի, ժողովրդի առջև ծառացած են եղել կարևոր, բարդ խնդիրներ: Առաջին զանգվածային քաղաքական կուսակցությունը 1861 թ. Անգլիայում ձևավորված լիբերալների կուսակցությունն էր:

XXդ. ավարտին և XXI դարասկզբին աշխարհի ավելի քան 190 երկրներում հաշվվում էր 1000-ից ավելի կուսակցություն, իսկ Ռուսաստանում XIX դ. վերջին և XX դ. սկզբին փաստացի գործում էին մոտ 300 կուսակցություններ՝ թե՛ համառուսական և թե՛ ազգային մասշտաբներով[1]: Եվ քանի որ բոլշևիկյան իշխանությունը անհանդուրժող էր այլախոհության, բազմակարծության և մյուս քաղաքական կուսակցությունների, ուժերի նկատմամբ, ուստի խորհրդային կարգերի առաջին իսկ տարիներից ամեն ինչ արվեց երկրում բազմակուսակցականությունը վերացնելու և միակուսակցական համակարգ հաստատելու համար: 1917 թ. սկսած՝ Ռուսաստանում հիմք է դրվում միակուսակցական հա-

---

[1] Տե՛ս *Политические партии России: история и современность, М., Росспэн, 2000, стр. 9.*

մակարգի ստեղծման համար, չնայած դեռ որոշ ժամանակ քաղաքական կուսակցությունների համակարգը շարունակում էր գործել, բայց երբ Ի. Ստալինը առաջ քաշեց այն թեզը, որ միակ կուսակցությունը, որի պատմությունը արժանի է ուսումնասիրման, ՀամԿ(բ)Կ-ն է, իսկ մյուս բոլոր կուսակցությունները իրենց ծրագրային մարտավարական հարցադրումներով, ինչպես նաև այն դերով, որ նրանք խաղացել են Ռուսաստանի պատմության մեջ, հետադիմական են, հետևաբար դրանց հատուկ ուսումնասիրման անհրաժեշտությունը չկա, իսկ բոլշևիկյան կուսակցությունն էլ փործի հարստությամբ իրեն հավասարը չունի[1], ուստի երկրում լիովին տիրապետող դարձավ միակուսակցական համակարգը, որի կառավարման սկզբունքներին ենթարկվում էին երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության բոլոր ոլորտներն ու բնագավառները:

Միութենական հանրապետություններում գործող կոմունիստական կուսակցությունները խստորեն հետևում և կատարում էին ԽՄԿԿ-ի որոշումները, որը յուրօրինակ նվիրվածություն էր կենտրոնական իշխանություններին: Բացառություն չէր նաև Հայաստանի կոմկուսը, նրա կուսակցական ղեկավարությունը: Ամեն մի շեղում կուսակցական գծից արժանանում էր խիստ գնահատականի՝ ընդհուպ մինչև «ժողովրդի թշնամի» որակավորումը և դրանից բխող հետևանքները: Հասկանալի է, որ նման պայմաններում խոսել այլախոհության, բազմակարծության մասին, անիմաստ է և լուրջ չէ:

Բայց քանի որ հասարակական-քաղաքական կյանքը զարգանում է և ունի իր օրենքները, ուստի վաղ թե ուշ, նման համակարգը պետք է ապրեր ճգնաժամ տար ճեղքեր և իր տեղը զիջեր նոր համակարգին, որին բնորոշ են նաև բազմակուսակցականությունը, խոսքի ազատությունը, այլակարծությունը, արժեքներ, որոնք բնորոշ են ժողովրդավար և բնականոն կարգերով ապրող ու զարգացող երկրներին:

Նման իրավիճակ ստեղծվեց նաև մեր հանրապետությունում ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակ՝ 1980-ական թվականների վերջին և 90-ականների սկզբներին: Եվ քանի որ ԽՍՀՄ-ի փլուզումը ուղեկցվում էր ինչպես երկրի Կենտրոնում, այնպես էլ թե՛ բուն Ռուսաստանում և թե՛ միութենական հանրապետություններում հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացմամբ, ուստի քաղաքական կուսակցությունների

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 11-12:



հանդես գալը դառնում էր պատմական անհրաժեշտություն՝ գլխավորելու ժողովրդի, հասարակության տարբեր խավերի պայքարը, դրան տալու կազմակերպված, նպատակային բնույթ: Նման ժամանակները յուրաքանչյուր ժողովրդի համար համարվում են «աստեղային», երբ նա ավելի քան համախմբված, միասնական է հանդես գալիս և պատրաստ է զոհաբերությունների՝ նպատակին հասնելու համար: Նման պատմական պահը մեր ժողովրդի համար Արցախյան շարժումով սկսված համաժողովրդական պայքարն էր, որի ծավալման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականության հետևանքով, երբ երկիրը, նրա քաղաքական ղեկավարության մի մասը գիտակցում էր, որ նախկին կառավարման համակարգը սպառել է իրեն և երկիրը հասցրել ճգնաժամի, իսկ միակ ելքը շատ այլ վերափոխումների հետ նաև ժողովրդավարության և ազատ շուկայական հարաբերություններին անցումն էր, իրավական պետության ստեղծումը և մի շարք այլ նոր արժեքների որդեգրումն ու հաստատումը: Անառարկելի է նաև, որ անցումը ժողովրդավարության, իրավական պետության, քաղաքացիական հասարակարգի, ենթադրում է նաև քաղաքական կուսակցությունների ազատ գործունեություն, յուրաքանչյուր քաղաքացու կողմից իր կարծիքը ազատ արտահայտելու լայն հնարավորություն և այլն:

Հայաստանի Հանրապետությունում այդ իրավունքները իրավական ուժ ստացան, երբ հանրապետության նորընտիր Գերագույն խորհուրդը 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունեց Հռչակագիր, որի ոգուց էլ բխող դրույթներին համապատասխան՝ 1991 թ. փետրվարի 26-ին ընդունվեց օրենք՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»[1], որում տրված են այն հիմունքները, սկզբունքները, ըստ որոնց հանրապետությունում կարող էին ձևավորվել և գործել հասարակական-քաղաքական կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ: Առանց չափազանցության՝ դա փաստորեն նոր երևույթ էր և նոր ժամանակաշրջան էր նշանավորում մեր ժողովրդի, մեր երկրի պատմության մեջ, երբ այն կարող էր երկար տասնամյակներ ամբողջատիրական, միակուսակցական համակարգով ապրելուց հետո անցում կատարել նոր բազմակուսակցական համակարգի: Հանրապետությու-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Ե., 1995, էջ 9-10, 115-118:

նում քաղաքական կյանքի նման ակտիվությունը, ժողովրդավարական հոծ զանգվածների վիթխարի ալեկոծությունը, որը պայմանավորված էր նաև ազգային զարթոնքով, նոր երևույթ էր, ինքնաբուխ, հաճախ ինքնակազմակերպվող երևույթ, որի պատմության ուսումնասիրումը ժողովրդին, ներկա և հետագա սերունդներին գիտական ճշմարտությամբ ներկայացնելը անչափ կարևոր է և արդիական:

Հարկ է ասել նաև, որ համաշխարհային պատմության հարուստ փորձը հաստատում է, որ քաղաքական կուսակցություններն իրենց գործունեությամբ կարող են երկակի դեր խաղալ, նպաստել երկրի հասարակական - քաղաքական կյանքի կայունությանը, քաղաքական հանդուրժողական մթնոլորտի ստեղծմանը և հակառակը՝ երկրում ստեղծել քաղաքական լարված, անհանդուրժող մթնոլորտ, քաղաքական տարբեր ուժերին, խավերին, դասերին հակադրել միմյանց, թշնամանք սերմանել և այդ ամենը նույնիսկ հանգեցնել քաղաքացիական պատերազմի, ընդհարումների և այլն: Պայքարի այդ դժվարին և դաժան փորձով անցել են աշխարհի գրեթե բոլոր երկրներն ու ժողովուրդները: Բացառություն չենք նաև մենք, մեր ժողովուրդն ու նրա պատմությունը: Առավել ևս 20-րդ դարը այդ ամենի լավագույն ապացույցն է:

Քաղաքական միտքն ընդունում է, որ ժողովրդավարական հասարակարգերում, որին ձգտում են միլիոնավոր շարքային մարդիկ, հասարակական-քաղաքական կյանքը ծնում է գաղափարական, քաղաքական կողմնորոշման երեք հիմնական ձևեր՝ պահպանողական, լիբերալ և արմատական-ընդդիմադիր: Նրանցից յուրաքանչյուրը քաղաքական կուսակցությունների, հասարակական-քաղաքական ուժերի, խավերի միջոցով պայքարում է իր քաղաքական գծի իրականացման համար:

Յուրաքանչյուր կուսակցություն ցանկանում է իր դավանած գաղափարախոսության միջոցով ազդել ժողովրդական զանգվածների վրա, նրանց գրավել իր կողմը և քարոզչության միջոցով բարձրացնել նրանց քաղաքական ակտիվությունը: Նման ակտիվություն և քարոզչություն հատկապես դրսևորվում է ընտրությունների, հանրաքվեների ժամանակ, ժողովրդի, երկրի համար բախտորոշ շատ հարցերի լուծման ժամանակ և այլն: Օրինակ, Մեծ Բրիտանիայում ընտրություններին մասնակցում է ընտրողների մոտավորապես 75%-ը, ԱՄՆ-ում՝ 53%-ը:

Մեր հանրապետությունում խորհրդարանական ընտրություններին մասնակցում է ընտրողների միջին հաշվով ավելի քան 60%-ը, իսկ



ասենք, այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին 1991 թ. սեպտեմբերի 21-ի անցկացված անկախության հանրաքվեն էր՝ 95%-ից ավելին[1]: Այս թվերը չեն նշանակում, որ մարդիկ նույնպիսի ակտիվությամբ էլ մասնակցում են երկրի ամենօրյա հասարակական-քաղաքական կյանքին: Օրինակ, Մեծ Բրիտանիայում քաղաքականությամբ հետաքրքրվում է բնակչության 20%-ը, իսկ 8%-ը կուսակցության անդամներ են, 2%-ը՝ կուսակցության ակտիվիստներ: Իսկ դա նշանակում է, որ ամենօրյա հասարակական-քաղաքական կյանքով կարող է զբաղվել բնակչության փոքր՝ գործիմաց մասը, այդ գործում փորձված, թրծված և խոր գիտելիքներ, ունակություններ ունեցող մարդիկ, որոնք որոշակի ճանաչում ունեն և հեղինակություն են վայելում նաև հասարակության լայն խավերի շրջանում: Այդ իմաստով քաղաքական կուսակցությունները, լինելով հասարակության քաղաքական կյանքի անբաժանելի մասերից մեկը, իրենց ներդրումն են կատարում երկրի ժողովրդավարացման և քաղաքական մշակույթի ձևավորման գործում, ընդհանրապես հասարակության քաղաքական կյանքի ակտիվացման գործում, երբ միլիոնավոր մարդիկ ներքաշվում են երկրի, ժողովրդի համար բախտորոշ հարցերի լուծմանը:

Պատմական նման վճռորոշ վիճակ ստեղծվեց մեր հանրապետությունում անկախության և Արցախի ազատագրման համար պայքարի ժամանակաշրջանում:

Ընդհանրապես, պատմական որոշակի փուլերում միշտ էլ հանդես են գալիս որոշակի ուժեր, որոնք, ինչպես ասում են, դառնում են պատմության կրողը, իրենց վրա մեծ առաքելություն վերցնելով, կարծես թե դառնում են առաջընթացը ապահովող շարժիչ ուժ՝ ստանալով ժողովրդի, հասարակության աջակցությունն ու պաշտպանությունը:

Այդպիսի ուժ մեր ժողովրդի համար Արցախյան շարժման և անկախության համար պայքարի վճռորոշ պահին՝ 1988 թ. դարձավ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որի բարձրացրած հարցերը, հռչակած կարգախոսները, գաղափարները, անշուշտ, ունեին համազգային հնչեղություն, որոնք էլ իրավամբ որոշակի ժամանակ նրան դարձրին համազգային շարժումը գլխավորող իրական ուժ: 1989 թ. նոյեմբերի 4-7-ին Երևանում կայացած Հայոց համազգային շարժման հիմնադիր հա-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, 1990-1995, Ե., 1995, էջ 18:

մագումարը, քննարկելով և ընդունելով կազմակերպության ծրագիրն ու կանոնադրությունը, որոշում ընդունեց դիմել ՀԽՍՀ Գերագույն խորհրդին՝ կազմակերպությունը պաշտոնապես ճանաչելու և գրանցելու համար: Հանրապետության Գերագույն խորհուրդը նույն թվականի հունիսի 25-ին որոշում կայացրեց պաշտոնապես ճանաչել կազմակերպությունը: Որոշման մեջ նշվում էր, որ Հայոց համազգային շարժումը նպատակ ունի գործել Սահմանադրության շրջանակներում և առաջնորդվել ժողովրդավարության, սոցիալական արդարության սկզբունքներով, նպաստել հայ ժողովրդի առջև ծառացած ազգային, սոցիալ-տնտեսական և հոգևոր խնդիրների, հանրապետությունում բնակվող մյուս ազգերի ու ազգությունների շահերի պաշտպանությանը:

ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, ելնելով հանրապետության Սահմանադրության 49-րդ հոդվածից, ՀՀՇ-ն ճանաչեց որպես հասարակական կազմակերպություն, իսկ արդեն 1991 թ. հուլիսի 15-ին ՀՀ Արդարադատության նախարարության կոլեգիան իր 40/2 որոշմամբ վավերացրեց Գերագույն խորհրդի որոշումը[1]:

Շարժման ծնունդը, պատմական ասպարեզ գալը օրինաչափ էր, անհրաժեշտություն՝ թելադրված ժամանակի պահանջով, որն էլ քաջ գիտակցում էին շարժման հիմնադիրները: Եվ պատահական չէ, որ շարժման վերելքի պահին ՀՀՇ 2-րդ համագումարում (1990թ., նոյեմբեր 23-25) որտեղ քննարկվեցին և ընդունվեցին մի շարք բանաձևեր՝ կապված ծրագրային մի շարք խնդիրների հետ. «Հայաստանի ներքաղաքական իրավիճակի մասին», «Լեռնային Ղարաբաղի հարցի մասին», «Հայաստանի արտաքին քաղաքականության մասին», «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների մասին», որոնցում հատկապես ընդգծվում էր այն գաղափարը, որ Արցախյան շարժումը բնականորեն ընդգրկեց հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր հիմնահարցերը և վերածվեց համազգային շարժման՝ ներգրավված մասնակիցների քանակով ու առաջադրված խնդիրների բազմազանությամբ: Հատկապես կարևորվում է ազգային անկախ պետականության ստեղծման գաղափարը, ինչպես նաև ժողովրդավարության հաստատումը, քանի որ հայ ժողովուրդը լավագույնս կարող է դրսևորել իր ունակություններն ու կա-

[1] Տե՛ս ՀՀ Արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվության միջոցների, հասարակական և այլ կազմակերպությունների գրանցման վարչության նյութերը, գործ 8, թ. 1-2; ՀՀ կուսակցություններ, Տեղեկագիր 2007, Երևան, 2007, էջ 209:



րողությունները, լուծել ազգի առջև ծառացած խնդիրները և նպաստել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը՝ ապրելով ազատ ժողովրդավարության պայմաններում, առանց արտաքին ճնշման՝ ինքնուրույն որոշելով իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի հիմնահարցերը:

Նկատի ունենալով շարժման ծավալումը, շարժմանը գործուն մասնակցելու հասարակության ամենատարբեր խավերի պատրաստակամությունը՝ դեռևս 1988 թ. օգոստոսին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն անհրաժեշտ համարեց կազմակերպական ձև տալ համաժողովրդական շարժմանը և ձեռնարկեց Հայոց համազգային շարժում կազմակերպության ստեղծումը: Կոմիտեն, որպես նախաձեռնող խումբ, ժողովրդի քննարկմանը ներկայացրեց ՀՀՇ-ի ծրագիրը, որի առաջադրած գաղափարական սկզբունքները որոշակիորեն նպաստեցին ազգային խնդիրների խոր ըմբռնմանը, պայքարի քաղաքական ճիշտ ուղիների ընտրությանը, ժողովրդական առողջ ուժերի առավել կազմակերպվածությանն ու համախմբմանը: ՀՀՇ ծրագրում այդ սկզբունքների արձանագրումը և գործնական քաղաքականության մեջ դրանց իրականացումը հանգեցրին նրա գաղափարական ու քաղաքական հաղթանակին և նպաստեցին ՀՀՇ-ի վերածմանը ամուր հասարակական-քաղաքական կազմակերպության[1]:

Սակայն, ցավոք, ժողովրդի այդ ոգևորությունը, նրա կողմից համազգային շարժմանը ուղղակիորեն թե անուղղակիորեն հաղորդակից, մասնակից դառնալը երկար չտևեցին: Ինչ խոսք, դրա մեղքի առյուծի բաժինը, այլ հանգամանքներից, գործոններից զատ, ընկնում է շարժման ղեկավարների վրա, որոնք, իշխանության գալով, սկսեցին որոշակի սկզբունքներից հեռանալ և նույնպիսի կամք, վճռականություն հանդես չբերեցին, ինչպես շարժման վերելքի պահին՝ հավատարիմ մնալու ժողովրդի գործին, նրա շահերին: Նրանք շտապեցին օր առաջ ձերբազատվել հնից՝ կարծելով, որ ավելի կամրանա իրենց ոտքի տակի հողը: Մինչդեռ նման քաղաքականությունը ժողովրդի մեծ մասին դարձրեց անօգնական, և նրա ստեղծած «նոր պետությունը», կտրվելով ժողովրդից, դարձավ պետություն՝ իշխանության եկածների համար, հա-

[1] Տե՛ս ՀՀՇ-ի ընթացիկ արխիվ, ՀՀՇ վարչության արխիվային նյութեր ՀՀՇ-ի գործունեության մասին, թղթապանակ հ. 1, թ. 1: Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 4516, ց. 1, գ. 13, թ. 1, գ. 51, թ. 4-5:

ճախ անազնիվ ճանապարհով հարստություն ձեռք բերողների, կուտակողների համար, ժողովրդի հաշվին հարստացողների համար:

Նման պայմաններում ժողովուրդը հիասթափություն ապրեց իր երեկվա հերոսներից, քաղաքական այն էլիտայից՝ վերնախավից, որին հավատում և մեծարում էր շարժման վերելքի օրերին: Առանց խորանալու բազմաթիվ այլ պատճառների մեջ, որոնք ավելի մանրամասը և խոր գիտական քննարկման անհրաժեշտություն ունեն, հարկ է ասել, որ, ցավոք, շատ չանցած՝ անդունդ առաջացավ մեր ժողովրդի մեծ մասի և Հայոց համազգային շարժման միջև, մեծ հիասթափություն՝ նրա առանձին գործիչների, ընդհանրապես հանրապետության իշխանավորների, քաղաքական ղեկը ստանձնած գործիչների նկատմամբ: Ժողովուրդ-իշխանություն անդունդը, հակասությունները խորանում էին: Եվ պատահական չէ, որ ժողովուրդը, ծնելով շարժումը, ուժ տալով շարժմանը և բերելով իշխանության, նաև մերժեց շարժումը, որի անառարկելի վկայությունը 1999 թ. մայիսի 30-ի Ազգային ժողովի ընտրություններին ընդամենը 12559 կամ 1,17% ձայն հավաքելն էր[1]: Հատկանշական էր, որ ՀՀՇ-ից Ազգային ժողովում միայն մեկ պատգամավոր էր ընտրվել, այն էլ մեծամասնական համակարգով՝ Վանո Սիրադեղյան[2]: Եվ որքան էլ նման կարգի ընտրությունները հանրապետությունում հիմնականում անարդար և մեծ խախտումներով են անցնում, միևնույն է, սա իրողություն է: ՀՀՇ-ն պետք է այդ ամենից անհրաժեշտ հետևություններ անի և դասեր քաղի: Դա անհրաժեշտ է նաև մյուս քաղաքական ուժերի, հատկապես երկրի քաղաքական ղեկի մոտ գտնվող ուժերի համար:

Սակայն բոլոր դեպքերում ՀՀՇ-ի իշխանության գալը արմատապես փոխեց հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: Քայլեր կատարվեցին հատկապես բազմակուսակցական համակարգի ձևավորման, հայ ավանդական կուսակցությունների՝ հայրենիք վերադառնալու և նորանկախ հանրապետության կյանքի բոլոր բնագավառներին մասնակցելու ուղղությամբ: Միայն 1991 թ. հանրապետությունում գրանցվել և իրենց գործունեությունն են սկսել ծավալել 22 կուսակցություններ[3]: Ի դեպ, այդ նորաստեղծ կուսակցությունների շարքում էին նաև հայ ավանդական այն կուսակցությունները, որոնց խորհրդային իշխանությունը վտարել էր հանրապետությունից, և մոտ 70 տարի Սփյուռքի տարբեր երկրներում ոչ միայն կարողացել էին գոյատևել, այլև դարձել էին բավական կայուն, հասուն, բազմամարդ, իրենց մասնաճյուղերով, սկզբնական կազմակերպություններով, տարբեր երկրներում գործող կուսակցություններ: Այդ կուսակցություններն էին Հայ Հեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ), Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ), Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ), որոնք վերադառնալով հայրենիք՝ 1991 թ. պաշտոնական գրանցում ստանալուց հետո ձեռնամուխ եղան ակտիվորեն մասնակցելու նորանկախ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին, Ղարաբաղյան Ազատագրական Շարժմանը և այսօր էլ հավատարիմ են իրենց որդեգրած սկզբունքներին, իսկ ՀՅԴ-ն 2003 թվականից[1] իր մասնակցությունն է բերում նաև քաղաքական կոալիցիային՝ մասնակցելով երկրի առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծմանը կոալիցիոն կառավարության կազմում:

Հատկանշական է, որ մինչև դաշնակցության Հայաստան գալը ՀՀ-ում այդ օրերին ձևավորվել էր «Հայաստանի Հայ Հեղափոխական Դաշնակցություն» մի նոր կուսակցություն, որը գրանցվելու համար 1991 թ. մարտի 6-ին դիմել էր ՀՀ Արդարադատության նախարարություն: Համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի 1991 թ. փետրվարի 26-ի որոշման՝ հանրապետությունում թույլատրվում էր բազմակուսակցականությունը, և քանի որ իրենց շարքերում ունեին ավելի քան 20 հազար անդամներ, կանոնադրություն, «Դաշնակցություն» թերթը և այլն, ուստի խնդրում են գրանցել որպես «Հայաստանի հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն: Այդ նպատակով կուսակցությունը 1990 թ. հոկտեմբերի 10-ին հրավիրել էր հիմնադիր ժողով, որտեղ քննարկել էին ՀՀ-ում ստեղծված իրավիճակը, Սփյուռքում գործող դաշնակցության բյուրոյի հետ հարաբերությունները և նկատի ունենալով, որ Սփյուռքի Հայ Հեղափոխական Դաշնակցության բյուրոն, տասնամյակներ շարունակ կտրված լինելով մայր հայրենիքից, նրա սոցիալ-տնտեսական հարա-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Երկրորդ գումարում, Ե., 2001, էջ 29:

[2] Նույն տեղում, էջ 29:

[3] Տվյալները վերցված են ՀՀ Արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվության միջոցների, հասարակական և այլ կազմակերպությունների գրանցման վարչությունից, կուսակցությունների մասին ըստ տարիների տված հաշվետվությունից, աղյուսակ հ. 1:



[1] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Երկրորդ գումարում, Ե., 2004, էջ 29-33:

բերություններից, չի կարող գործուն քաղաքական և տնտեսական, ինչպես նաև պաշտոնական աջակցություն ցույց տալ Հայաստանի ներկա իրավիճակի գործընթացների վրա, ուստի Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ունենալ գործող ազգային կուսակցություն: Միաժամանակ մեկ այլ գրության մեջ (29.04.1991 թ.) նշվում է, որ 1920-ական թվականների կեսերին մայր հայրենիքում պաշտոնապես լուծարվելուց հետո՝ ՀՅԴ-ի Հայաստանի կազմակերպությունն իր ընդհատակյա գործունեությունը Հայաստանում սկսել է դեռևս 1930-ական թվականներից: 1988 թ. հայտնի իրադարձություններից առաջ և հատկապես այդ ժամանակ, կապված Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու հետ, դաշնակցությունը լայն գործունեություն ծավալեց, իսկ 1989 թ. մարտի վերջերին բացահայտեց իր գոյությունը, կազմակերպչական աշխատանք ծավալեց և հանրապետության տարածքում ստեղծեց իր կառուցվածքային ստորաբաժանումները, որի համար էլ 1991 թ. ապրիլի 15-ին դիմել է գրանցվելու որպես «Հայաստանի Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն: Դա կատարվեց ՀՀ Արդարադատության նախարարության 1991 թ. հուլիսի 2-ին կոլեգիայի 38/3 որոշմամբ[1]:

Ինչ խոսք, նման որոշումը ստեղծեց բավական բարդ, լարված իրավիճակ և հարաբերություններ Հայաստանի Հայ Հեղափոխական Դաշնակցության և Սփյուռքից նորից Հայաստան վերադարձած ավանդական ՀՅԴ-ի միջև: Ի վերջո, այդ հակամարտությունը լուծվեց նրանով, որ Հայաստանում ձևավորված նորելուկ, ոմանց բնորոշումով կոոպերատիվ կուսակցություն դաշնակցությունը շուտով դադարեց գործելուց, և քաղաքական ասպարեզը զիջեց ավանդական Հայ Հեղափոխական Դաշնակցությանը, որն էլ օրինական ձևով վերադառնալով Հայրենիք՝ սկսեց ակտիվ կերպով լծվել հայոց նոր պետականության կայացման, նրա զարգացման անչափ կարևոր գործին:

Եվ դա բնական է, քանզի, վերոհիշյալ քաղաքական կուսակցությունն արհեստածին էր, այն չուներ սոցիալական լայն հենարան, հենք, ուստի արագորեն դուրս մղվեց Հանրապետության քաղաքական կյանքից: Այն չէր կարող խոր արմատներ, ավելի քան հարյուրամյա հարուստ պատմություն և նույնքան հարուստ գաղափարական ավանդույթներ ունեցող, Հայոց առաջին Հանրապետության հիմնադիր՝ ՀՅԴ-ի հետ մրցակցել: Դա է պատճառը, որ ՀՅԴ-ն շատ արագ իր որոշակի և կայուն տեղը գրավեց հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում և մի շարք ընտրություններում կարևոր տեղ գրավեց թե՛ Ազգային ժողովում և թե՛ կառավարությունում՝ մյուս ուժերի հետ միասին կազմելով կոալիցիա միաժամանակ ունենալով իր մշտական, կայուն ընտրազանգվածը:

Նույնպիսի առաքելությամբ էլ մայր հայրենիքում սկսեցին գործել Ռամկավար Ազատական կուսակցությունը, Հնչակյան կուսակցությունը, որոնցից յուրաքանչյուրն իր հնարավորությունների ու կարողություններին համապատասխան իհարկե, նույնպես լծվեց հանրապետության վերաշինման, վերակառուցման և նորի ստեղծման սրբազան գործին:

Սակայն հանրապետությունում բազմակուսակցականության ձևավորումը ունեցավ նաև իր առանձնահատկությունները: Այդ գործընթացը, սակայն, նոր պայմաններում կարծես թե շատ ու շատ գործիչների համար դարձավ ինքնանպատակ, հասարակության աչքին երևալու, ճանաչում ստանալու, իր մասին լայն հասարակությանը հայտնելու մի յուրօրինակ ձև, անկախ նրանից՝ նման կուսակցության ստեղծումը պատմական անհրաժեշտությո՞ւն էր, թե՞ ոչ: Դա է պատճառը, որ իրար հետևից ստեղծվեցին գրեթե միայն անուններով ու անձերով իրարից տարբերվող քաղաքական կուսակցություններ, որոնց ասելիքը հասարակությանը, ժողովրդին այնքան էլ չէր գրավում, իրենց հետևից չէր տանում: Հանրապետությունում սկսվեց կուսակցությունների ստեղծման մի շքերթ՝ հաճախ արտաքնապես հրապուրիչ անվանումներով, ազնվականական կուսակցությունից մինչև թագավորական, պահպանողականից մինչև ազատական, լիբերալ-դեմոկրատական, «Միավորված հայեր», «Մեկ ազգ», «Ազգի փրկություն», «Մեծ Հայաստան», «Հայրենիք ու պատիվ», «Արժանապատիվ ապագա» և այլ անուններով: Իհարկե, նպատակը հասկանալի է: Հանրապետության անկախությունը մարդկանց հնարավորություն տվեց դրսևորելու իրենց ձգտումները, ավելի ակտիվորեն մասնակցելու նորաստեղծ Երրորդ հանրապետության աշխատանքներին: Դա դրսևորվեց նաև բազմաթիվ քաղաքական կուսակցությունների ձևավորմամբ, որոնցից շատերը ավելի շատ շտա-

[1] Տվյալները վերցված են ՀՀ Արդարադատության նախարարության՝ կուսակցությունների, լրատվության միջոցների, հասարակական և այլ կազմակերպությունների գրանցման վարչությունից, կուսակցությունների մասին՝ ըստ տարիների տված հաշվետվությունից, գործ 7, թ. 1-2:

պեցին հռչակել իրենց ձևավորման, իրենց գոյության մասին՝ ինչ խոսք, առանց որոշակի հետք թողնելու հանրապետության քաղաքական կյանքում: Եվ դա բնական է, քանզի որքան էլ լավ նկատառումներով էին ստեղծվում քաղաքական կուսակցությունները, միևնույն է, նրանցից շատերը ձևական, անվանական բնույթ էին կրում և ինչպես ստեղծվում, այնպես էլ իրենց գործունեությունն ավարտում էին՝ առանց որևէ նոր գաղափարախոսություն առաջարկելու: Ծանոթանալով հանրապետության քաղաքական կուսակցությունների ծրագրերին, կանոնադրական սկզբունքներին և գործունեությանը՝ հարկ է ասել, որ դրանց ծրագրային շատ դրույթներ գրեթե նույնն են, բոլորն էլ կողմ են ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության ստեղծմանը, քաղաքացիական հասարակարգի ձևավորմանը, Արցախյան հարցի արդարացի, հայանպաստ լուծմանը, հասարակական-քաղաքական կյանքի ազատականացմանը, բազմակուսակցականության ձևավորմանը և այլն:

Եվ եթե դրան ավելացնենք, որ ի տարբերություն պատմական այլ ժամանակների, երբ կուսակցությունները ստեղծվում էին հասարակության այս կամ այն խավի, դասի շահերն արտահայտելու կամ էլ պաշտպանելու համար, ապա այժմ արդեն նոր պայմաններում բոլորն էլ հռչակում են, որ իրենք համաժողովրդական կուսակցություն են և արտահայտում են ամբողջ ժողովրդի շահերը:

Նման պարագայում, երբ բոլորը խոսում և երդվում են ժողովրդի անունից, ժողովրդին մնում է կուսակցությունների մասին դատել նրանց առօրյա գործունեության, նրանց խոսքի ու գործի և ոչ սոսկ իրականությունից բավական հեռու, ամբոխահաճո հայտարարությունների հիման վրա, որոնք ավելի շատ ժողովրդի ձայները հավաքելու, իշխանության գալու նպատակ ունեն:

Շատ կարևոր էր նաև, թե ով է գլխավորում կուսակցությունը, իր կերպարի մեջ ինչ է խտացնում և մարմնավորում: Ցավոք, այդ իմաստով ևս ժողովրդականություն, համընդհանուր հեղինակություն վայելող շատ քիչ կուսակցական առաջնորդներ ունենք, ինչն էլ զգալի չափով վարկաբեկում է ոչ միայն այս կամ այն կուսակցությունը, այլ նաև կուսակցության հասկացությունն ընդհանրապես:

1990-ական թվականներից սկսած՝ հանրապետությունում սկսեցին իրար հետևից ստեղծվել բազմաթիվ նոր կուսակցություններ, ինչը մեծ



մասամբ կատարվում էր նախկին կուսակցությունների կիսման կամ պառակտման հաշվին:

Հետաքրքիր է, որ 1992 թ. հանրապետությունում ստեղծվեց 5 նոր կուսակցություն, 1993 թ.՝ 4, իսկ արդեն 1994- 1995 թթ., որը նաև Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման տարի էր, ստեղծվեցին 18 կուսակցություններ:

2003 թ. հանրապետությունում կուսակցությունների թիվը հասավ 116-ի, որոնց մեծ մասը, ինչ խոսք, իրականում ստեղծված էին թղթի վրա: Իսկ երբ 2002 թ. հուլիսի 3-ին հանրապետության Ազգային ժողովն ընդունեց կուսակցությունների մասին նոր օրենք, ոչ բոլոր կուսակցությունները կարողացան քննություն բռնել և վերագրանցվել:

2004 թ. հունվարին հանրապետությունում կուսակցությունների թիվը հասնում էր 52-ի, իսկ արդեն 2005 թ. հոկտեմբերին՝ 71-ի[1]:

2006 թ., որը նախընտրական տարի էր, հանգեցրեց նրան, որ հանրապետությունում սկսեցին ձևավորվել նոր կուսակցություններ, իսկ ոմանք սկսեցին իրենց մասին հայտարարել. օրինակ, Հանրապետության նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Արտաշես Թումանյանը հայտարարեց «Նոր երկիր» կուսակցության ստեղծման մասին, հրապարակվեց կուսակցության ծրագիրը, բայց այդպես էլ կուսակցությունը լույս աշխարհ չեկավ. մինչդեռ այնպիսի կուսակցությունների ասպարեզ գալը ինչպիսիք «Դաշինք», «Բարգավաճ Հայաստան» կուսակցություններն են և այլն, խոսում է այն մասին, որ կուսակցությունների ձևավորումը հանրապետությունում դեռևս շարունակվում է:

Այդ իմաստով բավական հետաքրքիր, մյուսներից շատ գծերով առանձնանում և տարբերվում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը ձևավորվելով ավելի ուշ (2004թ.), շատ կարճ ժամանակամիջոցում մեծ ճանաչում ստացավ հանրապետությունում և նույնիսկ նրա սահմաններից դուրս, վայելելով ժողովրդականություն: Բավական է ասել, որ 2007թ. Ազգային ժողովի ընտրությունների նախօրյակին կուսակցությունն իր շարքերում ուներ 370.000 անդամներ, տարածքային 41 ստորաբաժանումներ և այլն:

Կուսակցության ծրագրում, որն ի դեպ ընդունվել է 2006թ., շատ պարզ, ժողովրդի համար շատ մատչելի, ըմբռնելի ձևով ասվում է այն մասին, որ կուսակցությունը ստեղծվել է ժողովրդին ծառայելու, նրա

[1] Նույն տեղում:

համար արժանավայել կյանք ապահովելու և մեր Հայրենիքի բարգավաճմանն իր նպաստը բերելու նպատակով: Նաև նշվում է, որ Հայաստանի համար ծառացած հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն ժողովրդի վստահությունը վայելող, բարձր արժանիքներ, ազնիվ նպատակներ ու վեհ գաղափարներ դավանող անհատների ու քաղաքական ուժերի համախմբման ու համագործակցության պարագայում: Երկրի քաղաքական համակարգում ԲՀԿ-ն իր առաքելությունը տեսնում է հենց այդ համատեքստում և հանդես է գալիս քաղաքական համախմբվածության ու համերաշխության դիրքերից:[1]

Եվ միայն այն փաստը, որ Ազգային ժողովի 4-րդ գումարման (2007թ.) ընտրություններին կուսակցությունը համամասնական ընտրակարգով առաջադրել էր 112 թեկնածուներ, իսկ մեծամասնականով՝ 13 թեկնածուներ, իսկ արդյունքում՝ Ազգային ժողովում ունի 25 պատգամավորներ[2] և մյուս կուսակցությունների՝ ՀՀԿ-ի, «Օրինաց երկիր» և ՀՅԴ-ի հետ կազմեց կոալիցիա, փաստում է, որ կուսակցությունը վայելում է լայն զանգվածների վստահությունը: Սակայն ճշմարտությունը նաև այն է, որ մարդկանց մի զգալի մասը ոչ այնքան գնում է կուսակցության ծրագրային դրույթների ետևից, այլ ավելի շատ հավատում և վստահում է կուսակցության առաջնորդին, տվյալ դեպքում՝ Գագիկ Ծառուկյանին, ինչ խոսք ակնկալելով նաև որոշակի նյութական օգնություններ, ինչու չէ՝ նաև պաշտոններ:

Նման հոգեբանությունը բնորոշ է նաև մյուս կառավարող, առաջատար կուսակցություններին: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, որը նորակնախ Հանրապետության ակունքներին ավելի մոտ է կանգնած և ավելի մեծ ներդրում ունի մյուս առաջատար կուսակցությունների հետ միասին (նկատի ունենք կոալիցիոն կուսակցություններին. ՀՅԴ-ին, «Օրինաց երկրին», «Բարգավաճ Հայաստանին» և Ազգային ժողովի 2-րդ, 3-րդ գումարումներում Հայաստանի Ժողովրդական կուսակցությանը (ՀԺԿ)), որոշակի քայլեր է կատարել նորանկախ Հանրապետության զարգացման, ամրապնդման, նրա առջև ծառացած խնդիրների լուծման գործում:

---

[1] Տես, Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, Տեղեկագիր 2007, Երևան, 2007, էջ 72; Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2007թ. ընտրություններին մասնակցող կուսակցություններ, Ընտրողի ուղեցույց, Երևան, 2007, էջ 21:

[2] Տես նույն տեղում, էջ 81



Բավական է ասել, որ եթե Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ձևավորման պահին՝ 1990 թ. իր շարքերում ուներ 250 անդամներ, ապա արդեն 2007 թ. նրա շարքերում հաշվում էին 55.000 անդամներ: ՀՀԿ-ի հաջողությունները մեծ չափով պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ կուսակցությունը հատկապես 1998 թ.-ին ՀԺԿ-ի հետ միասին դառնալով իշխող կուսակցություն և իր ձեռքում կենտրոնացնելով երկրի կառավարման գրեթե բոլոր լծակները, իր շարքերի մեջ ներառեց, թե՛ նախկին քաղաքական ուժերից շատերին և թե՛ նոր անդամների, որոնք նրան տեսնում էին որպես երկրի կառավարող կուսակցություն, ուստի որին հարելը նաև ապահովում էր հասարակության մեջ որոշակի դիրք և դերակատարություն:

Ինչ խոսք, կարևոր են նաև կուսակցության առաջ քաշած այն գաղափարները, որոնց ակունքները բխում էին ազգային գաղափարախոսությունից, Գարեգին Նժդեհի Ցեղակրոն ուսմունքից, որն իր մեջ զուգակցում է ազգային ու համամարդկային արժեքները՝ նպաստելով և ամրապնդելով հայության հավատը սեփական ուժերի ու ապագայի նկատմամբ:

Կուսակցությունը կարևոր խնդիր է համարում նաև ժողովրդավարության իրավական, սոցիալական պետության, հայոց ազգային անկախ պետականության ամրապնդումն ու զարգացումը:

Կուսակցությունը կարճ ժամանակում բավական հարուստ ճանապարհ է անցել: Այն ստեղծվել է 1990 թ. ապրիլին Երևանում: Կուսակցության հիմնադիր նախագահն է Աշոտ Նավասարդյանը: Նա այդ պաշտոնը վարել է մինչև 1997 թ.: Դեռևս 1995 թ. հունվարին ՀՀԿ-ի մասնակցությամբ ստեղծվել է «Հանրապետություն» նախընտրական միավորումը: Արցախի հիմնախնդրի լուծման ուղիների վերաբերյալ առաջացած տարաձայնությունների պատճառով 1998 թ. փետրվարի 2-ին ՀՀԿ-ն դուրս է եկել «Հանրապետություն» միավորման կազմից: 1998 թ. հուլիսին ՀՀԿ-ն, Երկրապահ Կամավորականների միությունը (ԵԿՄ) և Ազգային ժողովի «Երկրապահ» պատգամավորական խումբը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով էլ սկիզբ դրվեց ՀՀԿ շրջանակներում քաղաքական համախմբման գործընթացների: Հաշվի առնելով գաղափարախոսության և քաղաքական դիրքորոշումների ընդհանրությունը՝ ԵԿՄ քաղաքական գործունեությամբ զբաղվող հատվածը ընդգրկվեց ՀՀԿ շարքերում: Կուսակցության առաջնորդ դարձավ Վազգեն

Սարգսյանը, որով էլ 1999 թ. Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) հետ ստեղծվեց «Միասնություն» նախընտրական դաշինքը:

1999 թ. խորհրդարանական ընտրություններից հետո աննախադեպ աճեց ՀՀԿ դերակատարությունը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում: 1999 թ. կուսակցությունը հնարավորություն ստացավ մասնակցելու կառավարության ձևավորմանը, ինչի արդյունքում էլ հանրապետության վարչապետ նշանակվեց Վազգեն Սարգսյանը: Իսկ 1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո կուսակցության նախագահ դարձավ Անդրանիկ Մարգարյանը, որն էլ 2000 թ. նշանակվեց նաև ՀՀ վարչապետ: Նա այդ պաշտոնում աշխատեց մինչև իր կյանքի վերջը՝ 2007 թ.:

2007 թ. ապրիլին ՀՀ վարչապետ է նշանակվում Սերժ Սարգսյանը, որը դեռևս 2006 թ-ից ՀՀԿ անդամ էր, իսկ նույն թվականի հուլիսից մինչև 2007 թ. նոյեմբերը՝ կուսակցության խորհրդի նախագահ: 2007 թ. նոյեմբերին Սերժ Սարգսյանն ընտրվում է ՀՀԿ նախագահ, իսկ արդեն 2008 թ. նախագահական ընտրություններում՝ Հանրապետության նախագահ:

Խոսելով մյուս կուսակցությունների մասին՝ հարկ է ասել որ, հանրապետության քաղաքական կուսակցությունների շարքում իր յուրօրինակ տեղն ունի Ազգային ինքնորոշում միավորում (ԱԻՄ) կուսակցությունը, որն իր գործունեությունը ծավալել է դեռևս խորհրդային իշխանության տարիներին, իհարկե, գործելով ընդհատակում և ենթարկվելով հետապնդումների: «Ինքնորոշում միավորումը» հայ քաղաքական իրականության մեջ առաջին քրիստոնեական կազմակերպությունն է, որն սկսել է գործել 1966 թ. «Ազգային միացյալ կուսակցություն» (ԱՄԿ), 1987 թ.՝ «Ազգային ինքնորոշում միավորում» (ԱԻՄ), իսկ 1997թ.՝ «Ինքնորոշում միավորում» (ԻՄ) անուններով:

ԱՄԿ-ն, որի հիմնադիրն էր Հայկազ Խաչատրյանը, երկար տարիներ՝ մինչև 1987 թ., գործել է ընդհատակում: Որդեգրելով ԱՄԿ-ի ծրագրի հիմնադրույթները՝ այն 1987 թ. վերանվանվեց ԱԻՄ և կոմունիստական ամբողջատիրության տարիներին պայքարի ելավ այդ կարգերի դեմ՝ նպատակ ունենալով հասնելու անկախության: Ինչպես նշվում է ԱԻՄ-ի ծրագրային փաստաթղթերում, ԱԻՄ-ը իր առջև նպատակ էր դրել հասնելու հայ ժողովրդի դարավոր իղձի կատարմանը՝ հասնել նրա անկախությանը, պետականության վերականգնմանը, որի համար էլ նա իրեն



համարում էր Խորհրդային Հայաստանում հայ ժողովրդի ազգային պետականության վերականգնման առաջամարտիկը[1]:

Կուսակցությունը խորհրդային կարգերի վտանգավոր ժամանակներում մշակել էր բազմաթիվ նախաձեռնությունների համակարգ, հետամուտ եղել դրա իրականացմանը: ԱԻՄ-ի հինգ հիմնադիրները՝ Պարույր Հայրիկյանը, Մովսես Գորգիսյանը և մյուսները, պայքարի դրոշ բարձրացրին՝ նպատակ ունենալով հասնել հանրապետության ինքնորոշմանն ու անկախությանը: ԱԻՄ-ը իր կանոնադրական սկզբունքներում կարևորություն էր տալիս ժողովրդավարությանը՝ գտնելով, որ երկրի գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն էլ իրավունք ունի ինքնուրույն տնօրինելու իր ճակատագիրը: Արձագանքելով և գնահատելով 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեն՝ ԱԻՄ-ը կարծում է, որ իր անվան «ազգային» մասնիկը ժամանակի ընթացքում վերադարձվեց ազգային հավաքականության գերագույն հաստատությանը՝ պետությանը: Դա էլ նշանակում է, որ ԱԻՄ-ը կատարել և կատարում է իր առաքելությունը, քանի որ նրա ծրագրի հիմնական մասը իրականություն է դարձել, իսկ մյուսների իրագործումից է կախված հայ ժողովրդի արժանավայել ապագան: «ԱԻՄ-ը,- ասված է նրա կանոնադրության մեջ, - անառարկելիորեն նվաճել է առաջնորդ կուսակցության դերը»[2]: Չժխտելով ԱԻՄ-ի դերակատարությունը հանրապետությունում նոր մտածողության, անկախության հասնելու գործում և այլն՝ այնուամենայնիվ ինչպես ԱԻՄ-ը, այնպես էլ հանրապետությունում գործող շատ կուսակցությունների առաջնորդներ, ղեկավարներ տառապում են «առաջնորդացավով», առաջինը, միակը լինելու ձգտումով: Եվ իրոք, ցավոք, նման առաջնորդացավը միայն ԱԻՄ-ինը չէ: Դրանով տարված են հանրապետությունում գործող կուսակցությունների մեծ մասը, հատկապես կուսակցությունների ղեկավար-առաջնորդները, որոնք դժվար թե համաձայնեն, համոզվեն որ հարկ չկա մեր փոքրիկ հանրապետությունում ունենալ այդքան շատ կուսակցություններ և հրաժարվեն իրենց փոքրիկ «առաջնորդ» կարգավիճակից ու միանան մյուս կուսակցություններին, միանան գաղափարների շուրջ, հանրապետությունում կուտակված վիթխարի հարցերի լուծման շուրջ և փորձեն ժողովրդին համախմբել այդ խնդիրների հաղ-

---

[1] Նույն տեղում, գործ 10, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 2:

թահարման համար: Այդ իմաստով ոչ՛ ԱԻՄ-ը և ոչ՛ էլ տասնյակ այլ կուսակցություններ որևէ, հատկապես լուրջ դերակատարություն, հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում չունեն: Կուսակցությունների մասին խոսելիս, հարկ է ասել, որ հանրապետությունում այսօր հիմնականում գերիշխում է «ինքնուրույն» երևալու, առանձին գործելու ձգտումը, որն էլ խանգարում է ժողովրդի միասնությանը, համախմբմանը, ստեղծում իրար դեմ պայքարող, իրար վարկաբեկող կուսակցությունների մի շարք: Դրա հետևանքով ժողովուրդը ավելի է հիասթափվում, ավելի է օտարվում նրանցից, իսկ կուսակցություններն էլ՝ ժողովրդից:

Իհարկե, հանրապետությունում կան նաև կուսակցություններ, որոնք հարուստ են մտավոր կարողություններով, տեսական գիտելիքներով ունակ, օժտված անհատներով. օրինակ՝ Ազգային միաբանությունը, ՀՀՇ-ն, ԱժՄ-ն, Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, «Արժանապատվություն», «Ազատություն» «Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան» և այլ կուսակցություններ, սակայն դրանք ի վիճակի չեն իրենց անջատ-անջատ ուժերով ներազդել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի, գործընթացների վրա: Նման ձևով նրանց գործունեությունը այնքան էլ հեռանկարային ու արդյունավետ չէ: Չնայած նրանց մի մասն միավորվել է ՀԱԿ-ի (Հայ Ազգային Կոնգրես) մեջ և որոշակի գործնեություն է ծավալում՝ ունենալով ընդդիմադիր դիրքորոշումներ Հանրապետության առջև ծառացած բազմաթիվ խնդիրների նկատմամբ: ՀԱԿ-ի մեջ, որը ձևավորվել է 2008 թ. օգոստոսին, միավորվել են մոտ 2 տասնյակ կուսակցություններ և հասարակական ուժեր:

Հանրապետությունում քաղաքական կուսակցությունների նման առատությունը ոչ այնքան օգնում է բազմակարծության (պլուրալիզմի), ժողովրդավարության հաստատմանը, որքան այդ արժեքների վարկաբեկմանը, ժողովրդի անտարբերությանը հանրապետությունում կատարվող գործընթացների նկատմամբ: Մարդկանց ավելի շատ մտահոգում են ամենօրյա հոգսերը, օրեցօր վատթարացող տնտեսական կենսապայմանները, անօրինականությունները, մարդու իրավունքների ոտնահարումը և այլն:

Այսօր արդեն դժվար է մարդկանց համախմբել հաճախ էժան, ամբոխահաճո կարգախոսների շուրջ և «խաղալ հայրենասիրություն»: Մարդիկ դրանց արդյունքները տեսել են իրենց դառը փորձով և նորից



հեշտությամբ չեն գնա այս կամ այն, ոչինչ չտվող կարգախոսների հետևից: Իսկ նման վիճակն էլ ձեռնտու է իշխանության, քաղաքական ղեկի մոտ գտնվող քաղաքական ուժերին, որոնք էլ, մասնատելով ժողովրդին, մասնատելով քաղաքական դաշտը, շարունակում են կառավարել՝ ստեղծելով անփոխարինելի լինելու պատրանք, մտայնություն:

Այսօր ավելի մեծ ընդհանրացումների, ավելի մեծ հետևություններ անելու, անցյալից դասեր քաղելու ժամանակ է և ոչ թե նորանոր քաղաքական կուսակցություններ ստեղծելու ժամանակ: Ավելին, այսօր հանրապետությունում գործող տասնյակ կուսակցությունների՝ ըստ ուղղությունների, գաղափարախոսության և այլնի միավորման, կուսակցական միավորումների, դաշինքների ստեղծման ժամանակաշրջան է: Ինչպես ասում են, այսօր ավելի շատ քարեր հավաքելու ժամանակ է և ոչ թե շռայլորեն հանրապետության քաղաքական դաշտը մասնատելու, քաղաքական ուժերին իրար դեմ հանելու ժամանակ: Իհարկե, դա անչափ դժվար խնդիր է, բայց պատմությունը մեզ այլ հնարավորություն չի տվել: Կհասկանա՞ն հանրապետության քաղաքական ուժերը, կուսակցությունները այդ ամենը և կհամախմբվե՞ն՝ ստեղծելով մի քանի, ըստ էության խոշոր, ազդեցիկ, իրենց հետևից տասնյակ հազարավոր մարդկանց տանող, մարդկանց գաղափարական հայացքները կիսող կուսակցություններ, այդ դեպքում կշահի թե՛ երկիրը, թե՛ ժողովուրդը, և կձևավորվի դասական քաղաքական կուսակցությունների համակարգ: Եվ ընդհակառակը, չի ձևավորվի նման իրողություն՝ կշարունակվի կուսակցությունների ստեղծման, պառակտման մրցավազքը, մի կուսակցությունից մյուսի անցման, ինչպես ընդունված է ասել՝ առնետավազքը: Նման դեպքում Հանրապետությունը կհայտնվի քաղաքական պայքարի հորձանուտում, որտեղ յուրաքանչյուրը կփորձի մյուսին համոզել իր ճշմարտությունը՝ այդպես էլ ուժ չգտնելով և կամք չդրսևորելով վեր կանգնելու նեղ, կուսակցական շահերից: Այս հանգամանքը կպառակտի հասարակությունը, կմեծացնի ժողովուրդ-իշխանություն անդունդը, ժողովուրդ-կուսակցություն օտարացումը:

Հասկանալ, ընկալել այս ամենը՝ նշանակում է քայլեր անել երկիրն ավելի միասնական տեսնելու համար: Եվ որքան էլ որ դժվար է ընդհանուր դեղատոմս առաջարկել հանրապետությունում կուտակված բազմաթիվ խնդիրների լուծման ուղղությամբ և փորձել տեսնել դրանց լուծման բանալին, միևնույն է, մի բան պարզ է. առանց փոխհամաձայ-

նության, առանց համագործակցության, առանց չկամության հաղթահարման՝ հնարավոր չէ հանրապետության վաղվա առաջընթացը տեսնել: Միաժամանակ առանց թարմ, նորովի մտածող ուժերի, առանց քաղաքական ղեկավարության լուրջ, արմատական հերթափոխի, ինչ խոսք, պահպանելով նաև փոփոխությունների հանգիստ, առանց ցնցումների իրականացումը, դժվար է կենսագործել այդքան անհրաժեշտ, առանց չափազանցության, օդի պես անհրաժեշտ փոփոխությունները:

Անկասկած, այդ փոփոխությունների իրականացման գործում անգնահատելի է քաղաքական կուսակցությունների դերը, որոնք ժողովրդավարության, բազմակարծության, այլընտրանքային մտածողության ձևավորման գործում ունեն կարևոր դերակատարում՝ հանդես գալով թե՛ իշխանամետ և թե՛ ընդդիմադիր դիրքերում, որն իր հերթին ժողովրդավարության կարևոր չափանիշներից մեկն է:

Հանրապետության քաղաքական կյանքում այսօր որոշակի հանգամանքների բերումով, որը պայմանավորված է նաև անցման շրջանով և այլ գործոններով, շատ են այն քաղաքական կուսակցությունները, որոնք իշխանություններին ընդդիմադիր են: Իսկ ընդդիմությունը, նրա հանդես գալը, փաստորեն, ուղիղ համեմատական է իշխանությունների վարած քաղաքականությանը:

Այդ իմաստով հետաքրքիր է ցույց տալ, թե հանրապետության որ քաղաքական ուժերն ու կուսակցություններն են խորհրդարանական ընտրություններում վերջին ավելի քան տասը տարում, տարբեր դաշինքներով կամ առանց դաշինքի, հաղթահարել սահմանված տոկոսը և տեղ գրավել հանրապետության Ազգային ժողովում:

Նորանկախ հանրապետության առաջին գումարման խորհրդարանի, այն է՝ Գերագույն Խորհրդի ընտրություններին, որը դեռևս ձևավորվում էր միակուսակցական համակարգի պայմաններում՝ 1990 թ., այնուամենայնիվ, մասնակցեցին երկու քաղաքական ուժեր՝ Հայաստանի կոմկուսը և նոր ձևավորված Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ): Եվ քանի որ կոմկուսն արդեն իր դիրքերը զիջում էր նոր ուժերին՝ ՀՀՇ-ին, ուստի հանրապետության առաջին խորհրդարանում ուժերը կուսակցական խմբակցությունների տեսակետից դասավորվեցին հետևյալ կերպ. ՀՀՇ՝ 56 պատգամավոր, ՀԿԿ՝ 25 պատգամավոր: Բայց հետաքրքիր է ասել, որ հետո արդեն խորհրդարանում կազմավորվեցին 6 պատգամա-



վորական խմբեր. «Հանրապետություն»՝ 38 ձայն, ՀՅԴ՝ 12, «Արցախ»՝ 11, «Ազգային ժողովրդավարներ»՝ 10, «Լիբերալ-դեմոկրատներ» և «Ազգային առաջադիմություն»՝ նույնպես 10-ական պատգամավոր[1]:

Իհարկե, վիճակը փոխվեց, երբ հանրապետությունում ձևավորվեց բազմակուսակցական համակարգ, և 1995 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրություններում օրենքով սահմանված 5 տոկոսի սահմանագիծը հաղթահարեցին 5 կուսակցություններ. «Հանրապետություն» միավորում՝ 20 պատգամավոր, «Շամիրամ»՝ 8, ՀԿԿ՝ 6, ԱժՄ՝ 3 և ԱԻՄ՝ 3 պատգամավոր[2]: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ընդհանուր առմամբ ընտրվեցին 190 պատգամավորներ՝ 150 մեծամասնական և 40 համամասնական համակարգով: Ազգային ժողովում ձևավորվեց նաև «Բարեփոխումներ» պատգամավորական խումբը (31 պատգամավոր): Հետագայում ձևավորվեց նաև «Երկրապահ» պատգամավորական խումբը (17 պատգամավոր):

1998թ. փետրվարին Հայաստանի Հանրապետությունում ծագեց իշխանական ճգնաժամ: ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց, որին հետևեց Ազգային ժողովի ղեկավարության (նախագահ Բաբկեն Արարքցյան) հրաժարականը:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Խոսրով Հարությունյանը:

Հայաստանի Հանրապետության Երկրորդ գումարման 1999 թ. մայիսի 30-ի Ազգային ժողովի ընտրություններում 5 տոկոսի սահմանագիծը հաղթահարել էին 6 կուսակցություն և դաշինք, որոնց մեջ էին «Միասնություն» դաշինքը՝ 29 պատգամավոր (41.69%), ՀԿԿ-ն՝ 8 պատգամավոր (12.09%), «Իրավունք և միաբանություն» դաշինքը՝ 6 պատգամավոր (7.96%), ՀՅԴ-ն՝ 5 պատգամավոր (7.84%), «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ 4 պատգամավոր (5.28%), և ԱժՄ-ն՝ 4 պատգամավոր (5.17%)[3]: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Կարեն Դեմիրճյանը: 1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Արմեն Խաչատրյանը: Իսկ 2003 թ. մայիսի 25-ին տեղի ունեցած երրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություննե-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ, 1990-1995, Ե., 1995, էջ 125:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 1996, Ե., 1996, էջ 205:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Երկրորդ գումարում, Ե., 2001, էջ 28-29:

րում ընտրվեցին 131 պատգամավորներ՝ 75 մեծամասնական և 56 համամամասնական: Ընտրություններում հաղթեցին և 5 տոկոսի սահմանագիծը հաղթահարեցին ևս 6 կուսակցություններ. Հայաստանի Հանրապետական կուսակցությունը՝ 23 պատգամավոր (23.66%), «Արդարություն» դաշինքը՝ 14 պատգամավոր (13.71%), «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ 12 պատգամավոր (12.6%), ՀՅԴ-ն՝ 11 պատգամավոր (11.45%), «Ազգային միաբանություն»-ը՝ 9 պատգամավոր (8.91%), և «Միավորված աշխատանքային կուսակցությունը»՝ 6 պատգամավոր (5.67%)[1]:

Այս գումարման առանձնահատկությունն այն է, որ 2003 թ. մայիսի 25-ին կայացած ընտրություններից հետո Ազգային ժողովում ներկայացված ուժերը՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Օրինաց երկիրը» (ՕԵԿ) և Հայ Հեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ), կազմեցին քաղաքական կոալիցիա և ընդունեցին հռչակագիր, որում հիմնավորվում են կոալիցիայի ստեղծման նպատակները, ընդհանուր դրույթները, սկզբունքները, պարտավորությունները, կառուցվածքը և, որ կարևոր է, քաղաքական կոալիցիայի գործունեության ժամկետը: Դրանում հատկապես նշվում է, որ հռչակագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործելու է մինչև հաջորդ ընտրությունները[2]: Միաժամանակ նախատեսվում էր, որ այն կարող է վաղաժամկետ դադարեցվել սկզբունքային անհամաձայնության առկայության դեպքում, կոալիցիայից կողմերից մեկի դուրս գալու դեպքում և այլն[3]:

Եվ քանի որ քաղաքական այդ կոալիցիան ստեղծված էր ոչ թե գաղափարական միասնության և հիմքի վրա, այլ ինչ-որ չափով արհեստածին էր և վերևից պարտադրված, քաղաքական որոշ նպատակներով և այլն, չկարողացավ դիմանալ մինչև վերջ, ճեղքեր տվեց և ի վերջո պառակտվեց: «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավարը՝ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը, 2006 թ. մայիսին հայտարարեց կոալիցիայից դուրս գալու մասին թողնելով նաև Ազգային ժողովի նախագահի պաշտոնը:

Հանրապետության քաղաքական կյանքում կատարվող նման փո-

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, Երրորդ գումարում, Ե., 2004, էջ 27-28:

[2] Նույն տեղում, էջ 31-32:

[3] Նույն տեղում, էջ 32-33:



փոխությունները վկայում են այն մասին, որ հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունները, ուժերը գտնվում են անցման, որոնումների, իրենց դիրքերի ճշտման ու կայացման շրջանում: Բավական ժամանակ է անհրաժեշտ, որ այդ ուժերը կայունանան, դառնան իրոք ժողովրդի շահերով, նրանց խնդիրներով ապրող և գործող քաղաքական ուժեր, կուսակցություններ և ոչ թե անընդհատ պառակտվեն, մասնատվեն՝ ամեն օր ստեղծելով մի նոր կուսակցություն, մի նոր քաղաքական խմբավորում՝ իր առաջնորդով և հաճախ ժողովրդին ոչինչ չտվող կարգախոսներով:

Այդ տեսակետից բացառություն չեն ՀՀ Ազգային ժողովի 4-րդ գումարման ընտրությունները, որի համամասնական ընտրակարգով սահմանված նորմը հաղթահարեցին 5 կուսակցություններ. ՀՀԿ-ի խմբակցությունը՝ 65 պատգամավոր, «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը՝ 25 պատգամավոր, «Հայ Հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը՝ 16 պատգամավոր, «Օրինաց Երկիր» խմբակցությունը՝ 8 պատգամավոր և «Ժառանգություն» խմբակցությունը՝ 7 պատգամավոր, որոնք էլ, բացառությամբ «Ժառանգության», որը հանդես եկավ որպես ընդդիմություն, կրկին կազմեցին կոալիցիա:

Սակայն ցավոք այդ կոալիցիան ևս երկար կյանք չունեցավ: 2009թ. ապրիլին, կապված հայ-թուրքական նոր հարաբերությունների, այսպես կոչված ֆուտբոլային դիվանագիտության և «ճանապարհային քարտեզ»-ի կազմման հետ, որը նոր որակական փոփոխություններ է մտցնում հայ-թուրքական ավանդական հարաբերությունների մեջ, որոնք վերաբերվում են ցեղասպանության, Արցախյան հարցի կարգավորման և այլնի հետ, դուրս եկավ կոալիցիայից, հրաժարվելով գործադիր իշխանությունից, սակայն պահպանելով Ազգային ժողովում իր որոշակի տեղերն ու դիրքորոշումները, այնուամենայնիվ իրեն հռչակեց որպես կառուցողական, ոչ վտանգավոր ընդդիմադիր ուժ, որն էլ ավելի հստակ բնույթ կրեց 2009թ. մայիսի 31-ի՝ Երևանի քաղաքապետարանի 1-ին անգամ կուսակցական համակարգով անցկացված ընտրություններից հետո:

Հանրապետության բազմակուսակցության ձևավորման գործում իր որոշակի դերակատարությունն ունի նաև «Ժառանգություն» (նախագահ՝ Րաֆֆի Հովհաննիսյան) կուսակցությունը, որը ստեղծվել է 2002թ.: Կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը ընդունվել է

2005թ., պետական գրանցումը եղել է նույնպես 2005թ., որի ժամանակ էլ կուսակցության շարքերում եղել է ընդամենը 230 անդամ, բայց կարճ ժամանակամիջոցում կարողացել է մեծ ճանաչում ստանալ և առաջին անգամ մյուս կուսակցությունների շարքում մասնակցելով Ազգային ժողովի 4-րդ գումարման ընտրություններին՝ հաղթահարել է անհրաժեշտ շեմը՝ 5 տոկոսը և խորհրդարանում ապահովել 7 պատգամավորական տեղ: Ընդ որում բոլոր 7 պատգամավորներն էլ ընտրվել են համամասնական ընտրակարգով:[1]

«Ժառանգություն» կուսակցության նման ճանաչումը առաջին հերթին կապված է նրա նախագահի, երրորդ Հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար, ժողովրդի կողմից հարգանք և հեղինակություն վայելող, Րաֆֆի Հովհաննիսյանի հետ:

Կուսակցությունը նման հաջողությունների է հասել նաև այն հանգամանքի շնորհիվ, որ կարողացել է մարդկանց հասցնել կուսակցության այն ծրագրային դրույթները, որոնք վերաբերում են մարդու արժանապատվությանը, հոգևոր ու նյութական ազատությանը, մարդու իրավունքների ու ազատությունների ապահովմանը և որ ամենակարևորն է՝ ժողովրդավարության հաստատմանը:

«Ժառանգություն» կուսակցությունը շատ լավ գիտակցում է, որ նման քաղաքականությունը հնարավոր է վարել, ունենալով ամուր, զարգացած, նոր ժամանակներին և պահանջներին համապատասխան տնտեսություն, որի համար ևս առաջ են քաշվում համապատասխան դրույթներ, որոնց իրականացումը կօգնի ոչ միայն երկրի տնտեսական զարգացմանը, այլ նաև տարածաշրջանի երկրների հետ նորմալ փոխհարաբերությունների հաստատմանը: Իսկ այս գործոնն իր հերթին կարող է նպաստել, որ Հանրապետությունը տարածաշրջանում կարող է վարել գործուն և նախաձեռնող արտաքին քաղաքականություն: Իսկ դա նշանակում է, որ Հանրապետության տնտեսությունը պետք է զարգանա շուկայական ազատ հարաբերությունների սկզբունքով, որպեսզի առավելագույնս սերտաճի համաշխարհային տնտեսությանը և իր արժանի տեղը գտնի աշխատանքի համաշխարհային բաժանման մեջ:[2]

---

[1] Տես, Հայաստանի Հանրապետության կուսակցություններ, Տեղեկագիր 2007, Երևան, 2007, էջ 87-95; Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2007թ. ընտրություններին մասնակցող կուսակցություններ, Ընտրողի ուղեցույց, Երևան, 2007, էջ 35-43:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 89; 36:



Բնական է, որ «Ժառանգություն» կուսակցությունը իր ծրագրային դրույթներում կարևոր տեղ պետք է տար նաև ցեղասպանության ճանաչման հարցին: Կուսակցության ծրագրային դրույթներում հատկապես շեշտվում է այն հանգամանքը, որ համաշխարհային փորձը և պատմությունը ցույց են տալիս, որ նման կարգի խնդիրները լուծվում են, երբ երկուստեք ու հանդիպակաց քայլ է արվում, և յուրաքանչյուր պետություն ճանաչում է սեփական պատմությունը և այլն:[1]

Եվ վերջապես, խոսելով քաղաքական կուսակցությունների մասին պետք է ասել, որ 2008 թ. սկզբներին հանրապետության նախագահական ընտրությունների նախօրյակին, քաղաքական կուսակցությունների թիվը հանրապետությունում կազմում էր 74[2], որը նախորդ տարիների համեմատ, երբ այն նույնիսկ, ինչ որ ժամանակ, հասնում էր 116-ի, մի փոքր նվազել է, բայց դեռ հեռու է իրական կայուն ու նորմալ վիճակից: Այդ բոլորով հանդերձ՝ հանրապետության քաղաքական կյանքում նոր մթնոլորտ է ստեղծվում, որում անժխտելի է քաղաքական կուսակցությունների դերը, որոնք կոչված են նպաստելու երկրում ժողովրդավարության հաստատմանը, ժողովրդի քաղաքական մշակույթի, ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, պետական մտածողության ձևավորմանը: Իսկ դրանք անառարկելիորեն այն կարևոր արժեքներն ու հենասյուներն են, առանց որոնց երկիրը, հասարակությունը չի կարող զարգանալ և ապրել առաջընթաց:

## Ժողովուրդ- իշխանություն փոխհարաբերությունները ՀՀ հետխորհրդային ժամանակաշրջանում

Անշուշտ անառարկելի է այն գաղափարը, որ ժողովուրդ /հասարակություն/ -իշխանություն փոխհարաբերություններից մեծապես կախված է յուրաքանչյուր երկրի, պետության կայունությունը, հզորությունը, նրա զարգացումն ու առաջընթացը: Հանրահայտ է նաև, որ պետությունները, իշխանությունները տապալվել, կործանվել կամ էլ փոխա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 88; 36:

[2] Տվյալները վերցված են ՀՀ Արդարադատության նախարարության՝ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գրանցման բաժնից, աղյուսակ թ. 15, թ. 8:

կերպվել են այլ համակարգերի, բազմաթիվ այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից բացի, նաև իշխանություն - ժողովուրդ փոխհարաբերությունների լարվածությունից՝ հակամարտություններից, անհանդուրժողականությունից, առճակատումից:

Փաստ է նաև, որ երկրները, պետությունները տապալվել, վերափոխվել են նաև իշխանությունների կողմից ժողովրդի նկատմամբ վարած ոչ խելացի, ոչ հեռատես քաղաքականությունից, որոնք իրենց հերթին, ժողովրդի կողմից իշխանությունների նկատմամբ ծնում են անվստահություն, հավատի պակաս, կորուստ և հիասթափություն:

Այս բոլոր անհամաձայնությունները, ի վերջո, հանգեցնում են իշխանափոխության կամ խաղաղ (պառլամենտական), կամ էլ ոչ խաղաղ (հեղափոխություն, ապստամբություն, պատերազմ և այլն) ճանապարհներով:

Պատմությանը հայտնի հեղափոխությունները՝ բուրժուադեմոկրատական, սոցիալիստական, կատարվել են պատմական տարբեր ժամանակներում, բայց դրանց հիմքում ընկած են եղել գրեթե նույն պատճառները՝ իշխանություն-ժողովուրդ (հասարակություն) խորը հակասությունները, միմյանց մերժելու, չընդունելու հոգեբանությունը և, որ կարևոր է, այդ հակասությունները համատեղ հաղթահարելու կամքի բացակայությունը:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում պետականություն, իշխանություն ունենալու հետ միասին, նաև մի շարք հարյուրամյակներ ապրել և գոյատևել է օտարի լծի տակ՝ զուրկ պետականությունից և իր կյանքը ինքնուրույն տնօրինելու հնարավորությունից: Սակայն նման պայմաններում նա չի կորցրել իր ազգային ինքնությունը , դիմագիծը և փորձել է ելք գտնել այդ վիճակից դուրս գալու, իր պետականությունը կրկին վերականգնելու համար: Իշխանություն-ժողովուրդ փոխհարաբերություններում միշտ էլ կարող են լինել հակասություններ, սակայն խոսքն այն մասին է, թե ի՞նչ բնույթ են դրանք կրում և ինչպիսի՞ ջանքեր են գործադրվում դրանք հաղթահարելու, լուծելու, կամ էլ մեղմելու համար :

Յանրահայտ է նաև այն իրողությունը, որ բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև հայ ժողովուրդը ավելի արդյունավետ արարել, ստեղծագործել է խաղաղ, կայուն պայմաններում, երբ ունեցել է իր պետականությունը, իշխանությունը, լինի այն կառավարման միապետական-



թագավորական, թե հանրապետական և այլ ձևերով: Նման պայմաններում ժողովուրդը, իշխանությունը՝ դիտել է որպես հովանի, միջոց, օտարից փրկվելու, պաշտպանվելու համար: Միաժամանակ մարդիկ նաև համոզված են եղել, որ իրենց աշխատանքով հզորացնում են երկիրը, նպաստում նրա զարգացմանը, իսկ երկիր-պետությունն էլ, շատ լավ գիտակցել, համոզվել է, որ առանց ժողովրդի պաշտպանության, աջակցության,առանց հայրենիքի, պետության նկատմամբ հավատի ու սիրո, երկիրը չի կարող ամուր ու կանգուն լինել: Դարեր շարունակ ժողովուրդները միշտ էլ ապստամբել, պայքարել են ժողովրդից կտրված, ժողովրդին հակադրվող իշխանությունների դեմ՝ դժգոհ լինելով իշխանավորներից և պետական այն այրերից, ովքեր իրենց մեղմ ասած ոչ ժողովրդավարական քաղաքականությամբ հակասություններ են ստեղծում իշխանության և ժողովրդի միջև:

Պատմության ընթացքը, նրա տված դասերը լիովին հաստատում են այն ճշմարտությունը, որ իշխանություն-ժողովուրդ /հասարակություն/ փոխհարաբերություններում ժողովուրդը իշխանությունների կողքին կանգնում է հատկապես այն ժամանակ, երբ երկրի, պետության համար վտանգը սպառնում է դրսից: Պատմությունը լի է բազմաթիվ օրինակներով, որոնք ոչ այնքան իշխանություն-ժողովուրդ սիրո, համերաշխության մասին են խոսում, որքան ավելի կարևոր, ավելի թանկ արժեքի՝ երկիրը, հայրենիքը, պաշտպանելու մասին: Լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Յայրենական մեծ պատերազմը, երբ միլիոնավոր մարդիկ, անկախ ստալինյան բռնաճնշումներին, մարդկանց նկատմամբ անհիմն անվստահությանը, պայքարել են ֆաշիզմի դեմ, պայքարել երկիրը թշնամուց ազատագրելու համար: Սակայն երբ առկա չեն այդ վտանգները, երբ ժողովուրդը իր ամենօրյա կյանքով, խնդիրներով առնչվում է իշխանությունների հետ, նրա համար առաջին պլան են մղվում իր մարդկային իրավունքները, կենսական շահերը պաշտպանող բազմաթիվ հարցեր:

Ժողովուրդ-իշխանություն փոխհարաբերությունների կարգավորումը նաև նպատակ ունի լայն հասարակությանը, իշխանության, պետության համապատասխան մարմիններին հասցնել ժողովրդի տարբեր խավերի, նրա տարբեր հատվածների մտածելակերպը երկրի իրական վիճակի մասին: Անհրաժեշտ է նաև հասարակական կարծիք ձևավորել երկրի քաղաքական ընտրանու՝ էլիտայի նկատմամբ, որը մեծ պատաս-

խանձատվությամբ երկրի ղեկը վերցնելով իր ձեռքը, կոչված է իր ամենօրյա գործունեությամբ հավատ ներշնչել ժողովրդի հոգեբանության մեջ՝ թե՛ այսօրվա և թե՛ վաղվա նկատմամբ, այն պետական գործիչների, պետական այրերի նկատմամբ, ովքեր կանգնած են այդ օրենքների մշակման, դրանց իրականացման, կյանքի կոչման ակունքներում: Միաժամանակ ժողովուրդը պետք է համոզված լինի, որ երկրի ղեկավարության, իշխանությունների վարած քաղաքականությունը բխում է ժողովրդի շահերից, որն էլ մարդ-անհատի համար ստեղծում է նորմալ պայմաններ ինքնադրսևորման համար: Ցավոք, մերօրյա իշխանություն-ժողովուրդ /հասարակություն/ փոխհարաբերությունները հայոց նոր պետականության կառուցման, կատարելագործման ճանապարհին բավական հեռու են այդ իդեալական վիճակին հասնելուց:

Հայաստանի նոր՝ երրորդ Հանրապետությունը ձևավորվել է ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով՝ 1980-ական թվականների վերջերին, երբ Գորբաչովյան «վերակառուցումը», որը նպատակ ուներ երկիրը հանել ճգնաժամից, ընդհակառակը, այն էլ ավելի բացահայտ ձևով վեր հանեց այն արատները, պատճառները, որոնք արգելակում, խոչընդոտում էին երկրի նորմալ զարգացմանը: Մոտ 70-ամյա Խորհրդային Միությունը, որը կոչված էր և ավելի շատ առաքելություն ուներ աշխարհին ցույց տալ իր կենսունակությունը, առավելությունները մարդկային հասարակության նախորդ բոլոր համակարգերի նկատմամբ, ընդհակառակը՝ ապրեց ձախողում և հայտնվեց դժվարին կացության մեջ: Իսկ դա նշանակում է, որ սոցիալիզմը չկարողացավ, հակառակ այն քարոզչությանը, գաղափարախոսությանը, որը միայն մեծարում, գովերգում էր գործող հասարակարգը և փորձում էր ցույց տալ իր գերազանցությունը նախորդ բոլոր համակարգերի նկատմամբ և հաղթող դուրս գալ դրանց միջև մղվող անհաշտ պայքարում՝ ձախողվեց: Չխորանալով այն մեծ, խոր պատճառների մեջ, որոնք երկար տասնամյակների ընթացքում ի վերջո հանգեցրին ԽՍՀՄ-ի փլուզմանը, միայն նշենք, որ դրանց շարքում շատ կարևոր են երկրում այնպիսի հարաբերությունների ձևավորումը, ինչպիսիք են միակուսակցական համակարգը, ազատ մրցակցության բացակայությունը, միութենական հանրապետությունների իրավունքների սահմանափակումը, հաճախ անհեռատես կերպով նրանց ազգային արժանապատվության ոտնահարումը, ազգային պատմության, ավանդույթների, առանձնահատկությունների հետ հաշվի չնստե-



լը, շրջանցելը և այլն: Միաժամանակ դրանց շարքում կարևոր են նաև ամբողջատիրական համակարգի առկայությունը, ազատ խոսքի բացակայությունը, ժողովրդավարության ձևական կողմերը, անհատի իրավունքների ոտնահարումը, մարդկանց համար նորմալ կենսապայմանների չապահովումը և այլն, որոնք էլ , ի վերջո, առաջացրին ժողովուրդ-իշխանություն փոխհարաբերություններում միմյանց մերժելու, չհանդուրժելու, խորթացման և խոր հակասությունների մթնոլորտ: Հասկանալի է, որ այդ ամենի արդյունքում գնալով երկրում մեծանում էր անդունդը ժողովրդի և իշխանությունների միջև, ինչի հետևանքով երեկվա արտաքնապես հլու-հնազանդ ժողովուրդը, որն իր հոգու խորքում կուտակել էր հսկայական դժգոհություն, բացահայտ կերպով հանդես եկավ Կենտրոնի դեմ և քայլեր ձեռնարկեց նրանից անջատվելու և նրան չենթարկվելու ուղղությամբ:

1980-ական թվականների վերջերին Խորհրդային Միությունում սկսված հասարակական-քաղաքական նոր գործընթացները իրենց արտացոլումը գտան նաև մեր հանրապետությունում: Սկսվեց Ղարաբաղյան շարժումը, որը նաև վեր հանեց Հանրապետությունում առկա թերությունները, արատները, որոնց մասին մինչ այդ բարձրաձայն խոսել հնարավոր չէր: Ուստի, բնական է, որ երբ վարչարարության, կաշառակերության, կոռուպցիայի և այլ արատների մեջ թաղված հանրապետության կուսակցական, պետական ղեկավարները, աստիճանաբար, քայլ առ քայլ սկսեցին կորցնել իրենց դիրքերն ու հեղինակությունը, նրանց խոսքը այլևս նախկին արժեքը չուներ, որի հետևանքով էլ, հանրապետությունում ավելի խորացավ իշխանություն-ժողովուրդ անդունդը, իսկ հակասությունները երկու կողմերի միջև մեծացան: Նման պայմաններում իզուր էին այն ջանքերը, որ հանրապետության ղեկավարությունը փորձում էր գործադրել գլխավորելու ափեափ դուրս եկած ժողովրդական զանգվածներին: Դա այլևս հնարավոր չէր, քանզի անվստահությունը ժողովրդի և իշխանությունների միջև բավական մեծացել էր: Անհրաժեշտ էին նոր ուժեր, նոր մարդիկ, որոնք հավատ կարող էին ներշնչել մարդկանց մեջ, որոնք նոր խոսք կարող էին ասել և նոր գործողությունների կոչել մարդկանց: Պատմական նման բեկումնային պահերին մարդկանց հավաքական գիտակցությունը արագ է ձևավորվում, մարդիկ բավական արագ հրաժարվում են հին արժեքներից և գնում այն նոր ուժերի ետևից, որոնք նրանց խոստանում են ավելի լավ ապագա,

ավելի լավ պայմաններ, հեռանկարներ և այլն: Մեր Հանրապետությունում նման վիճակ ստեղծվեց Արցախյան շարժման ընթացքում, երբ մարդկային հոծ զանգվածները, նույնիսկ առանց խորանալու երևույթների հեռանկարների մեջ, առանց խորաթափանց մտածելու, հաճախ ներքին ձայնին ունկնդրելով, հավատալով դրան, փողոց էին դուրս գալիս, լի վճռականությամբ եղածը փոխելու և նորը կառուցելու ակնկալիքով: Հասկանալի է, որ նման պայմաններում ավելի բացահայտ են դրսևորվում այն հակասությունները, որոնք առկա են ժողովուրդ-իշխանություններ փոխհարաբերություններում: Նման պայմաններում, ժողովուրդը, ընտրելով իր նոր առաջնորդներին, պատրաստ է բազմաթիվ սխրանքների, պատրաստ վերափոխելու, պատմականորեն իրեն սպառածը: Խորհրդային սոցիալիստական հասարակարգը կառուցված լինելով շատ քարացած սխեմաների, դոգմաների վրա, չկարողացավ դրսևորել ճկունություն և կատարել արմատական փոփոխություններ, որոնք ավելի շատ բնորոշ են Արևմուտքին՝ կապիտալիստական աշխարհին: Նման քայլերի բացակայությունն էլ երկրում ստեղծեց տնտեսական, քաղաքական ճգնաժամ, պայթյունավտանգ իրավիճակ, որն էլ կարող էր վիթխարի զանգվածներին փողոց հանել՝ երկրում ստեղծելով անկառավարելի մթնոլորտ:

Անկասկած, 20-րդ դարի կապիտալիստական աշխարհի պատմությունը լավագույն վկայությունն է այն իրողության, որ նա կարողացավ հատկապես 1929-1932թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամից դուրս գալ մշակելով բարեփոխումների տարբեր մոդելներ՝ սկսած հատկապես ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Ռուզվելտի «նոր կուրս» ծրագրի կենսագործումից մինչև մյուս բարեփոխումների ձևերը: Այդ քայլերի հետևանքով հնարավոր եղավ հաղթահարել երկրում ծավալված ճգնաժամը և բռնել զարգացման վերելքի ուղի: Սակայն ճշմարտությունը նաև այն է, որ այդ նույն կապիտալի աշխարհում տնտեսական ճգնաժամը մի շարք երկրներում՝ Գերմանիա, Իտալիա, Իսպանիա և այլն հանգեցրեց ֆաշիզմի ձևավորմանը, որն էլ ի վերջո հանգեցրեց Համաշխարհային պատերազմի: Դրան հակառակ Խորհրդային Միությունը նույն խնդիրները լուծեց ուժային, վարչահրամայական մեթոդներով՝ շեշտը դնելով ոչ թե տնտեսական, քաղաքական բարեփոխումներ կատարելու վրա, այլ գլխավորապես քարոզչական այնպիսի մեթոդների վրա, որոնք հաճախ հաշվի չէին նստում իրական վիճակի



հետ, մարդկանց կարծիքի հետ, ավելի շատ կարևորելով երկրում դասակարգային պայքարը և մարդկանց բաժանելով իրար հակադիր, թշնամի դասակարգերի, հասարակության որոշ անդամների որակելով որպես «ժողովրդի թշնամի», դրանով էլ լռեցնելով ճշմարտության ձայնը, արտաքնապես ստեղծելով ժողովուրդ-իշխանություն ոչ իրական միասնության մթնոլորտ: Եվ որքան էլ որ խորհրդային երկիրը պատմական որոշակի փուլերում, ինչ խոսք ունեցել է նաև հաջողություններ, հաղթանակներ և այլն, բայց այնուամենայնիվ հաղթահարել այն անդունդը, որը գոյություն ուներ իշխանություն-ժողովուրդ փոխհարաբերություններում, հնարավոր չէր: Դրանք գնալով ավելի էին խորանում: Ուստի հասկանալի էր, որ նման ձևով կառավարելը չէր կարող լինել արդյունավետ և ունենալ հեռանկարներ: Անհրաժեշտ էին արմատական փոփոխություններ, որոնք արդեն կապված էին գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականության հետ, որն ի վերջո ավարտվեց ԽՍՀՄ-ի փլուզմամբ և դրա հիմքի վրա նորանկախ հանրապետությունների (ԱՊՀ) ձևավորմամբ:

Բնական է, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը պետք է ձևավորվեր ժողովուրդ (հասարակություն) - իշխանություն նոր փոխհարաբերությունների հիմքի վրա: Առանց այդ միասնության այն չէր կարող ծնվել, ստեղծվել, քանզի այն ձևավորվում էր հնի մերժման և նորի ստեղծման հիմքի և որ կարևոր է, նոր արժեքների հիման վրա, որոնց միասնությունը այդ պահին այն կարևոր հենքն էր, առանց որի հնարավոր չէր նոր՝ Երրորդ Հանրապետության ծնունդը և ձևավորումը:

Ժողովուրդ-իշխանություն միասնությունը մեր նորանկախ Հանրապետությունում շատ ավելի ընդգծված, պարզորոշ երևաց և քննություն բռնեց Արցախյան պատերազմի տարիներին, անգամ այն մութ ու խավար, երբեմն նաև սովի, պակասի տարիներին, երբ դրված էր ազգի, երկրի լինել-չլինելու հարցը, երբ բոլորը, թվում է, թե ապրում էին նույն պայմաններում, նույն հոգսերով ու ցավերով: Սակայն երբ վերջանում է այդ ամենը, և կյանքը, ինչ-որ չափով մտնում է նորմալ հունի մեջ, մարդիկ իրավունք ունեն իշխանություններից պահանջելու ստեղծել նորմալ պայմաններ քիչ թե շատ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Բայց երբ մարդիկ զոհողությունների գնով հասնում են խաղաղության և գրեթե ոչինչ նրանց կյանքում չի փոխվում, ապա տրամաբանական է, որ նրանց մոտեցումները իշխանությունների նկատմամբ չի կարող

մնալ նույնը: Այսօր մեր հանրապետությունում ժողովրդի վիճակը թե՛ նախորդ իշխանությունների, և թե՛ նոր իշխանությունների ժամանակ գրեթե ոչնչով չի փոխվել, հարստությունը կուտակվել է արտոնյալ կյանքով ապրող առանձին մարդկանց ձեռքին, իսկ ժողովրդի զգալի մասը հայտնվել է աղքատության, կարիքի մեջ, իսկ բարեփոխումներն էլ, որքան էլ որ կատարվում են, այնուամենայնիվ անչափ դանդաղ են իրականացվում: Իսկ եթե այդ ամենին ավելացնենք, որ գրեթե ամեն օր և ամենուրեք ոտնահարվում են մարդու իրավունքները և նա հայտնվում է անօգնական, անհուսալի վիճակում, ապա հավատալ, որ կարող է ստեղծվել ժողովուրդ (հասարակություն) - իշխանություն ամուր կապ, հավատ և նվիրվածություն միմյանց նկատմամբ, բավական հեռու է իրականությունից:

Ընդհանրապես ընդունված է ասել, որ ժողովրդավարական երկրներում կառավարությունը պետք է ծառայի ժողովրդին, որը նշանակում է, որ ժողովուրդը ժողովրդավար պետության քաղաքացիներն են և ոչ թե՝ ենթականեր: Դեռ ավելի. եթե պետությունը պաշտպանում է իր քաղաքացիների իրավունքները, քաղաքացիները փոխադարձաբար պետությանը ցուցաբերում են իրենց հավատարմությունը: Մինչդեռ բռնապետական, ամբողջատիրական համակարգերում պետությունը հանդես է գալիս որպես հասարակությունից բաժանված մի գործոն և ժողովրդից պահանջում է հավատարմություն և ծառայություն, առանց իր գործունեության կապակցությամբ ժողովրդի համաձայնությունն առնելու որևէ փոխադարձ պարտավորության[1]: Մեր օրերում իշխանություն - ժողովուրդ (հասարակություն) փոխհարաբերություններում առաջացած, առանց չափազանցության, անդունդը, անվստահությունը հետևանք է այն քաղաքականության, որ վարել են մեր իշխանավորները վերջին մոտ երկու տասնամյակի ընթացքում: Ժողովրդին իշխանությունից վանելը, հաճախ տված խոստումները չկատարելը, նրան անտարբերության մղելը և այլն, հղի է շատ վտանգներով, որն էլ հուշում է, որ հանրապետության իշխանությունները պետք է դասեր քաղեն անցյալի պատմությունից և իրենց ամենօրյա աշխատանքով փորձեն վերականգնել ժողովրդի հավատը իշխանությունների նկատմամբ, այլապես նման վիճակը էլ ավելի կխորացնի ժողովուրդ-իշխանություն անդունդը, որի

[1] Տե՛ս, Ի՞նչ է ժողովրդավարությունը. Միացյալ Նահանգների Տեղեկատվության Ընկերություն, յուլիս 1992թ., էջ 10:



հաղթահարումը շատ ավելի մեծ ջանքեր և անչափ երկար ժամանակ կարող է պահանջել:

Իշխանությունների կողմից ժողովրդի, հասարակության լայն խավերի, շերտերի վստահություն շահելու ճանապարհը մեկն է. ծառայել ժողովրդին, պաշտպանել նրա շահերը, իրավունքները, լինել օրինապաշտ, ապրել նրա հոգսերով, կարիքներով, վարել քաղաքականություն, որը հնարավորություն կտա նրան աշխատելու ստեղծագործաբար, լինել օրինավոր, արդարացի բոլոր հարցերում, ապահովել օրենքի գերակայությունը, վարել քաղաքականություն, որը վստահություն կներշնչի մարդկանց մեջ:

Նման դեպքում կայուն է երկիրը, ամուր են ժողովուրդ-իշխանություն հարաբերությունները, կապերը, որոնք կարևոր երաշխիք են հասարակության զարգացման, ժողովրդավարության հաստատման և ընդհանրապես առաջընթացի համար:

Հավելված 1

## ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցված կուսակցությունների ցուցակ

**( 2008թ. հունվարի 21-ի դրությամբ՝ ՀՀ նախագահական ընտրություններից առաջ)**

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՊԱՎՈՒՄ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ՎԵԲ ԿԱՅՔԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՀԿ | 14.05.1991թ. | 17.02.2003թ. | ք. Երևան, Մելիք Ադամյան 2 | 58-00-31 091-40-28-65 | ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ | |
| 2 | ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՊԿ | 10.06.1991թ. | 24.11.2003թ. | ք. Երևան, Նոր-Նորք 4-րդ զանգված, Գյուլիքեխվյան նրբ., շենք 11, բն. 4 | 62-90-19 | ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ | |
| 3 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՌԱԿ | 10.06.1991թ. | 24.11.2003թ. | ք. Երևան, Կորյունի 19ա շենք, 3-րդ հարկ | 52-64-03 52-14-95 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ | |
| 4 | "ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՅԴ | 02.07.1991թ. | 28.11.2003թ. | ք. Երևան, Հանրապետության փող., 30 շենք | 52-15-02 52-79-10 | ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄՅԱՆ | |
| 5 | ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՀՇ | 15.07.1991թ. | 24.11.2003թ. | ք. Երևան, Սարյան փող. 38 շենք | 53-52-35 53-50-34 | ԱՐԱՐԱՏ ԶՈՒՐԱԲՅԱՆ | |

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՊԱՎՈՒՄ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ՎԵԲ ԿԱՅՔԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | <<ՆԺԴԵՀՅԱՆ ՑԵՂԱԿՐՈՆ >> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՆՑԿ | 15.07.1991թ. | 08.12.2003թ. | ք. Երևան, Գյուլիքեխվյան 31/1, բն. 14 | 64-40-29 091-43-20-21 | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՍԵՓՅԱՆ | |
| 7 | ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԻՄ | 29.07.1991թ. | 17.11.2003թ. | ք. Երևան | 54-38-70 42-20-84 | ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆ | |
| 8 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԿԿ | 29.07.1991թ. | 24.11.2003թ. | ք. Երևան, Ձաքյան փող. Թիվ 10 | 54-19-17 | ՌՈՒԲԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ | |
| 9 | "ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՄԻՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՍԻՄ | 19.08.1991թ. | 25.11.2003թ. | ք. Երևան, Ե. Կողբացի 50ա | 22-52-11 | ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ | |
| 10 | "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՔԴՄ | 19.08.1991թ. | 19.11.2003թ. | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 շենք | 54-37-87 | ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| 11 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԴԿ | 25.10.1991թ. | 26.11.2003թ. | ք. Երևան, Կորյունի 14 | 53-90-24 | ԱՐԱՄ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ | |
| 12 | "ՀԱՅՐԵՆԻՔ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱՅ. ԿՈՒՍ. | 12.12.1991թ. | 01.12.2003թ. | ք. Երևան, Բյուզանդի 1/3 | 58-88-46 | ԺԱՍՄԵՆ ԱՍՐՅԱՆ | |
| 13 | "ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԺՄ | 19.03.1992թ. | 26.11.2003թ. | ք. Երևան, Աբովյան փող. 12 | 52-60-06 56-31-88 | ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ | |

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՊԱՎՈՒՄ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔՈՎ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | "ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՊԵԿ | 05.05.1994թ. | 03.12.2003թ. | ք. Երևան, Քեռու փող. Տուն 35 | 55-09-86 | ՍԱՄՎԵԼ ՇԱՀԻՆՅԱՆ | |
| 15 | "ԿԱՆԱՅՔ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԿՀԱԿ | 12.09.1994թ. | 24.11.2003թ. | ք. Երևան, Կորյունի 19ա, հարկ 8 | 52-52-75 63-35-91 58-76-41 | ԺԱՆԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ | |
| 16 | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԺՈՂ. ԿՈՒՍ. | 28.02.1995թ. | 01.12.2003թ. | ք. Երևան, Կոմիտասի 59 | 23-11-41 | ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | |
| 17 | "ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՄԿ | 28.02.1997թ. | 24.11.2003թ. | ք. Երևան, Մոսկովյան 33ա, 5-րդ հարկ | 53-36-32 53-03-51 53-03-31 53-15-25 | ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ | |
| 18 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԵԿ | 20.06.1997թ. | 05.12.2003թ. | ք. Երևան, Երզնկյան փող., շենք 1, բն. 1 | 22-55-35 | ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՐՅԱՆ | |
| 19 | "ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԶԿ | 04.07.1997թ. | 25.11.2003թ. | ք. Երևան, Վարդանանց 13 | 58-29-03 | ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏՅԱՆ | |
| 20 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՄԿ | 12.09.1997թ. | 26.11.2003թ. | ք. Երևան, Ավան 12 պոլիկլինիկա | 62-05-79 | ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ | |
| 21 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱՄԿԿ | 28.01.1998թ. | 25.11.2003թ. | ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3 | 52-45-23 | ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ | |
| 22 | "ՀԶՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀզՀԿ | 13.02.1998թ. | 01.12.2003թ. | ք. Երևան, Տիգրան Մեծի 9 | 52-92-15 52-36-35 | ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | |
| 23 | "ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԺՀԿ | 20.03.1998թ. | 04.09.2003թ. | ք. Երևան Վաղարշ Վաղարշյան 12 | 27-53-09 091-47-28-66 | ՊԵՏՐՈՍ ՄԱԿԵՅԱՆ | |

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀԱՊԱՎՈՒՄ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔՈՎ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | "ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՕԵԿ | 20.03.1998թ. | 18.11.2003թ. | ք. Երևան, Կորյունի 14 | 52-69-39 | ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | |
| 25 | "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ-ԱՐԻԱԿԱՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՀԱԿ | 27.03.1998թ. | 08.12.2003թ. | ք. Երևան, Եղբայրության փող., 7շ., բն. 7 | 2-44-97 | ԱՐՍԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ | |
| 26 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԺԿ | 15.06.1998թ. | 04.11.2003թ. | ք. Երևան, Ղ. Փարպեցի 7 | 53-15-01 53-65-01 | ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ | |
| 27 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՍԷԿ | 24.07.1998թ. | 02.12.2003թ. | ք. Երևան, Դրոյի 11, բն. 5 | 36-67-77 093-52-39-51 | ԱՐՄԵՆԱԿ ԴՈՎԼԱԹՅԱՆ | |
| 28 | "ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄՀՀԿ | 25.12.1998թ. | 28.11.2003թ. | ք. Երևան, Անդրանիկի 110 | | ԺԱՍՄԵՆ ԲԱԲԱՅԱՆ | անվանափոխվել է 25.08.05թ., նախկին անվանումը "Մարդու իրավունքներ-ժողովրդավարություն" կուսակցություն |
| 29 | "ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԱԿ | 25.01.1999թ. | 13.11.2003թ. | ք. Երևան, Օրբելի Եղբայրների փող. 12, բն. 14 | 26-92-01 091-41-90-23 | ԳԱՌՆԻԿ ԽԱՉԳՈՒԼՅԱՆ | |
| 30 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՍԴՀԿ | 14.07.1999թ. | 06.11.2003թ. | ք. Երևան-51, Ն. Զարյանի 22 | 26-12-08 091-40-22-76 | ԵՂԻՍԵՍ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ | |

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՊԱՎՈՒՄԸ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | "ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԿ | 24.08.1999թ. | 29.08.2003թ. | ք. Երևան Մամիկոնյանց 58 շ., բն. 42 | 23-30-07 | ԱՐԹՈՒՐ ԲԱԼՈՅԱՆ | |
| 32 | "ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՀԿ | 27.04.2000թ. | 19.11.2003թ. | ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3 | 58-01-37 63-42-20 | ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| 33 | "ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄՀԿ | 15.06.2000թ. | 06.10.2003թ. | ք. Երևան, Կորյունի 14շ., 3-րդ հարկ | 56-08-95 | ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆ | |
| 34 | "ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՎՄ | 26.12.2000թ. | 14.02.2003թ. | ք. Երևան Կորյունի 19ա | 56-47-99 | ՀԱՄԼԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ | |
| 35 | ՀԱՅԱՍՏԱՆԻ "ՄԵԿ ԱԶԳ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՄԱԿ | 13.02.2001թ. | 02.07.2003թ. | ք. Երևան Գրիգոր Արծրունու փող., տուն 74 | 39-79-33 093-84-86-93 | ԳՈՌ ԹԱՄԱԶՅԱՆ | |
| 36 | "ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԿԿ | 27.03.2001թ. | 02.12.2003թ. | ք. Երևան, Մանթաշյան 6, բն. 20 | 54-51-55 | ԱՐԱՄ Զ. ՍԱՐԳՍՅԱՆ | |
| 37 | "ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԺԴ | 06.06.2001թ. | 20.11.2003թ. | ք. Երևան, Այգեստան թաղ. 7-րդ փող. թիվ 18 | | ԱՐՇԱԿ ՍԱԴՈՅԱՆ | |
| 38 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱԿ | 08.06.2001թ. | 04.12.2003թ. | ք. Երևան, Նժդեհի փող. շ. 12, բն. 23 | 44-09-08 | ՏԻԳՐԱՆ ՈՒՐԻԽԱՆՅԱՆ | |

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՊԱՎՈՒՄԸ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԺԿ | 06.07.2001թ. | 26.11.2003թ. | ք. Երևան, Պարոնյան 11, բն. 4 | 58-83-20 | ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ | |
| 40 | "ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԺԱՄ | 05.11.2001թ. | 14.03.2003թ. | ք. Երևան, Մամիկոնյանց 62շ. բն 1 | 54-27-51 56-05-26 | ՍԵՅՐԱՆ ԱՎԱԳՅԱՆ | |
| 41 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՄԿԿ | 31.10.2003թ. | | ք. Երևան Պուշկինի 46, բն. 4 | 53-12-14 | ՅՈՒՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ | |
| 42 | "ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԺԿ | 14.08.2002թ. | 10.11.2003թ. | ք. Երևան, Բաղրամյան 2, բն. 11 | 58-15-07 27-00-03 | ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | |
| 43 | ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՄԱԿ | 15.11.2002թ. | 28.11.2003թ. | ք. Երևան Գյուլբենկյան 29, բն. 18/19 | 56-08-95 | ԳՈՒՐԳԵՆ ԱՐՍԵՆՅԱՆ | |
| 44 | "ԲԱԳՐԵՎԱՆԴ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԲԿ | 26.02.2003թ. | | ք. Երևան, Գյուլբենկյան 27 | 46-24-29 | ԿԱՄՈ ՊԵՏՐՈՍՅԱՆ | |
| 45 | "ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱՄԿՈՒՍ | 11.03.2003թ. | | ք. Երևան, Սարյան 22 | 091-20-25-33 091-46-59-85 | ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ | |
| 46 | "ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԵՀԿ | 10.12.2003թ. | | ք. Երևան, Սեբաստիա 16շ., 30ա | | ԿԱՐԵՆ ԴԱՎԻԴՅԱՆ | |
| 47 | "ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՆԺԿ | 08.01.2004թ. | | ք. Երևան, Թումանյան 8 | 56-83-39 45-92-14 | ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | |

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՊԱՎՈՒՄԸ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆԸ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 48 | "ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՀ | 19.01.2004թ. | | ք. Երևան, Իսահակյան 28 | | ԽԱՉԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ | |
| 49 | "ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՐԺԿ | 19.02.2004թ. | | ք. Երևան Կորյունի 1 նրբ., շ. 11, 1ա | 56-96-44 093-62-94-94 | ԼՅՈՒԴՄԻԼԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| 50 | "ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀՆՉԱԿՅԱՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՍԴՀԿ | 14.10.2001թ. | 20.02.2004թ. | ք. Երևան, Բաղրամյան պող., թիվ 1 բն. 57 | 56-96-44 | ԼՅՈՒԴՄԻԼԱ ՍԱՐԳՍՅԱՆ | |
| 51 | "ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՐՀԿ | 15.09.1992թ. | 03.03.2004թ. | ք. Երևան, Մոսկովյան 11 | 56-07-89 56-04-08 | ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՆՅԱՆ | |
| 52 | "ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒ ՊԱՏԻՎ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀՈՒՊ | 16.07.2002թ. | 04.03.2004թ. | ք. Երևան, Մոսկովյան 33/8 | 53-19-72 53-28-51 | ԳԱՌՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ | |
| 53 | "ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՊԱԳԱ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱԱ | 15.03.1999թ. | 16.03.2001թ. | ք. Երևան, Սայաթ-Նովա 19, "Անի" հյուրանոց 1-ին հարկ, 14 ս. | 28-97-00 | ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ | |
| 54 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱԱԿ | 10.03.2004թ. | | ք. Երևան, Արովյան 22 | | ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | |
| 55 | "ԱԶԳԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԱՓ | 15.04.2004թ. | | ք. Երևան, Զեյթուն Մ. Ավետիսյանի 4-րդ փող. 16շ., բն. 23 | | ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | |
| 56 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱՍԿ | 15.04.2004թ. | | ք. Երևան, Հ. Հակոբյան, 12շ., բն. 8 | | ՄՈՎՍԵՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | |

| ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐ | ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՊԱՎՈՒՄԸ | ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՏԱՐԻՆ, ԱՄԻՍԸ, ԱՄՍԱԹԻՎԸ | ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՑԵՆ | ՀԵՌԱԽՈՍ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱՆՈՒՆԸ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 57 | "ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԲՀԿ | 18.06.2004թ. | | ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. 47 շ., բն. 31 | 56-60-92 | ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ | |
| 58 | "ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ" ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ԺԱԿ | 06.07.2004թ. | | ք. Երևան, Մ. Խորենացու 69 | | ՍՊԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ | |
| 59 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | ՀԱԳԿ | 10.08.2004թ. | | ք. Երևան, Վարդանանց 7, բն. 41 | | ՔԱՎԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ | |
